

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ



«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՈԱԱԿ)
Թարգմանված է անգլերենից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՄՇԱԿՈՒՄԸ.....	6
3.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	7
3.2 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	9
4. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՒՑԹԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	11
4.1 ՈԱԱԿ-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.....	11
4.2 ՈԱԱԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	13
4.3 ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	16
4.4 ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ	19
4.5 ՈԱԱԿ-Ի ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	21
4.6 ՈԱԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	23
5. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻՆ (ՄԱՍ 3).....	25
5.1 ՈԱԵՉՈՒ 3.1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ԵՎ ՈՒՂԻՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.....	25
5.2 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....	28
5.3 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3 ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ.....	30
5.4 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.4 ԹԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	33
5.5 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.5. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....	43
5.6 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.6. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ.....	50
5.7 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.7. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՓՈՒԼԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	52
6. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈԱԵՉՈՒ (ESG) ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ).....	53
6.1 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ.....	53
6.2. ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ.....	58
6.3 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ.....	63
6.4 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4 ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ	67
6.5 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....	72
6.6 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.6 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ	75

6.7 ՈԱԵՉՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉ 2.7. ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ	77
7. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ	79
8. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԾ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	82
9. ՈԱԱԿ—Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	99
10. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	100

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ կամ գործակալություն) իր ստեղծումից ի վեր (2008թ.) մեծապես կարևորել է որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորումը և նպաստել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) կրթական բարեփոխումներին: ՈԱԱԿ-ի հիմնական գործունեությունը միտված է խթանելու ՄՈՒՀ-երի տեսանելիությունը և մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում:

ՈԱԱԿ-ն առաջին անգամ ինքնավերլուծություն իրակացրել է 2016 թ., և ռազմավարական ուղղությունները, որոնք արտացոլել են շահակիցների կարիքները, ազգային և միջազգային պահանջարկը հիմք են հանդիսացել վերջին 5 տարիների առաջընթացի ապահովման համար: Առաջին արտաքին գնահատման արդյունքում (2017թ.) ՈԱԱԿ-ը դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (այսուհետ՝ ENQA) լիիրավ անդամ և ընգրկվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (այսուհետ՝ EQAR): Արտաքին գնահատման արդյունքները և ENQA-ի փորձագետների տրամադրած առաջարկությունները նպաստել են ՈԱԱԿ-ի հետագա զարգացմանը:

ՀՀ-ում 2018 թ. Ավարտվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլը, և ուսանողների 96% ուսումնառություն է ստանում ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ՄՈՒՀ-երում:

Առաջին շրջափուլի արդյունքում հավատարմագրված բոլոր ՄՈՒՀ-երում ներդրվել են որակի ներքին ապահովման համակարգեր: Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել և գործարկվել են հաստատությունների ռազմավարական ուղղություններին աջակցող բարելավման ծրագրեր:

Բուհերը վերանայել են իրենց մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ ՄԿԾ), բոլոր ծրագրերը վերամշակել և նկարագրել են՝ կիրառելով վերջնարդյունքահենք մոտեցումը: Պլանավորում-իրականացում-գնահատում- բարելավում (այսուհետ՝ ՊԻԳԲ) շրջափուլը դարձել է հիմնական գործիքը պլանավորելու ՄԿԾ-ների վերանայման գործընթացը:

Բուհերը ռեսուրսներ են ներդրել բոլոր ներքին գործընթացների շրջափուլային վերանայման համար, գործընթացներն իրականացվում են համապատասխան ռազմավարությունների, ընթացակարգերի և քաղաքականությունների միջոցով: Այսպիսով, ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլով իրագործվել են ՈԱԱԿ-ի առաջին տասը տարվա համար նախատեսված երկու ռազմավարական ծրագրերը (ՌԾ):

ՈԱԱԿ-ը մեկնարկել է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլը՝ շեշտադրելով ՄԿԾ-ների վերանայման գործընթացը՝ նպաստելով ծրագրային մակարդակով բարեփոխումների իրականացմանը: Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացման նոր քաղաքականությունը պահանջում է, որ ՄՈՒՀ-երը ապահովեն որակավորումների շնորհման արժանահավատությունը՝ համահունչ ՈԱԾ-ին, իրականացնեն արդյունքահենք կառավարում և երաշխավորեն երկարաժամկետ առաջանցիկ զարգացում:

2021 թ. նոր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը հստակ ներկայացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման մեկ փուլի ընթացքում ծրագրային պարտադիր հավատարմագրման պահանջները: Ծրագրային հավատարմագրման առաջին փուլի վերջնաժամկետը նախատեսված է 2025 թ.:

ՀՀ կառավարության պահանջով ՈԱԱԿ-ն առավել շեշտադրել է հավատարմագրված բուհերում մշտադիտարկումների իրականացումը՝ հետևելով բարելավման ծրագրերի կատարմանը:

Հաշվի առնելով եվրոպական մոտեցումները՝ մեծ ջանքեր են գործադրվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄԿՈԻ հաստատություններ) ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում մեծացնելու ուղղությամբ: 2019 թ. մեկնարկել է ՄԿՈԻ հաստատությունների հավատարմագրման գործընթացը և ներկայումս 11 հաստատություններում իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Արժևորելով շահակիցների հետ համագործակցությունը՝ ՈԱԱԿ-ը ստեղծել է հարթակ շահակիցների հետ շարունակական հաղորդակցության և մշտական երկխոսության համար: Վերապատրաստումների և թեմատիկ քննարկումների միջոցով երիտասարդ դասախոսները և հետազոտողները մասնակցել են որակի ապահովման գործընթացներին, ինչպես նաև հետազայում ներառվել են հավատարմագրման գործընթացներում որպես արտաքին փորձագետներ:

ՈԱԱԿ-ը մեծացրել է ուսանողների մասնակցությունը որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներին՝ ակտիվացնելով «Ուսանողության ձայնը» ծրագրի գործունեությունը: Մասնավորապես՝ ՈԱԱԿ-ն ապահովել է ՀՀ մարզերի և տարբեր ոլորտների ուսանողների մասնակցությունը:

ՈԱԱԿ-ն ամրապնդել է միջազգայնացման օրակարգը՝ շարունակելով հավատարմագրման գործընթացում միջազգային (հիմնականում՝ եվրոպացի) գործընկերների ակտիվ ներգրավման քաղաքականությունը: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (այսուհետ՝ ԵԲԿՏ) բազմաթիվ փորձառու ներկայացուցիչներ ակտիվորեն մասնակցել են հավատարմագրման աշխատանքներին: Մինչև ժամանակ եվրոպացի գործընկերները հրավիրել են ՈԱԱԿ-ին ակտիվորեն մասնակցելու ԵԲԿՏ-ի զարգացմանը:

Նշված ձեռքբերումների արդյունքում ՄՈԻՀ-երում ձևավորվել է շարունակական բարելավման մշակույթը: Փորձագիտական կարողությունների ձեռքբերումը ՄՈԻՀ-երի համար կարևորվում է՝ որպես երկրում իրականացվող բարեփոխումների ներքին շարժիչ ուժ: ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահությունն աճել է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում:

2. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Ինքնավերլուծության զեկույցի պատրաստման համար ՈԱԱԿ-ը ձևավորել է հինգ հոգուց բաղկացած թիմ (ներառյալ արտաքին փորձագետ և ուսանող, որոնք ՈԱԱԿ-ի հավատարմագրման գործընթացներում որպես խմբի անդամ մասնակցության փորձ ունեն):

Որպես առաջին քայլ՝ ինքնավերլուծությունն իրականացնող թիմն արտաքին և ներքին շահակիցների հետ կազմակերպել է մտազրոհ՝ ըստ «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին» (ՈԱԵՉՈԻ)՝ բացահայտելու ուժեղ կողմերն ու ոլորտները, որոնց զարգացումով հնարավոր կլինի համապատասխանել չափորոշիչի պահանջներին: Այնուհետև ինքնավերլուծությունն իրականացնող թիմի երկու անդամները մշակել են նախնական տեքստը՝ ըստ ՈԱԵՉՈԻ-ի: Ինքնավերլուծությունն իրականացնող թիմի մյուս անդամները ծանոթացել և արձագանքել են շարադրանքին, բովանդակությունը կրկին քննարկվել, վերանայվել և վերջնական տեսքի է բերվել:

Հարկ է նշել, որ բացի ինքնավերլուծությունն իրականացնող թիմից, գործակալության աշխատակազմի բոլոր անդամները և հիմնական շահակիցներն ակտիվ մասնակցություն են ունեցել գործընթացին: Ինքնավերլուծության զեկույցը վերանայվել է ներկայացված արձագանքների հիման վրա:

Ընթացիկ զեկույցն ամփոփում է ՈԱԱԿ-ի բարելավման ծրագրի իրականացման արդյունքները, որը մշակվել է ENQA-ի փորձագիտական խմբի առաջարկությունների հիման վրա: Տվյալները հավաքագրվել են արտաքին և ներքին շահակիցների կողմից համապարփակ վերլուծության արդյունքում:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

3.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի բարձրագույն կրթությունն ունի եռաստիճան համակարգ, որն առաջարկում է հետևյալ որակավորումները. առաջին մակարդակ՝ բակալավր, երկրորդ մակարդակ՝ մագիստրատուրա և երրորդ մակարդակ՝ հետազոտող և գիտությունների թեկնածու (հետբուհական/դոկտորական):

Շարունակական կրթությունը և որակավորումների մասնագիտական զարգացում (ըստ գիտակարգերի) ապահովելու համար առաջարկվում են պարբերական վերապատրաստման ծրագրեր և համապատասխան դասընթացներ՝ երաշխավորելու մասնագետների զարգացումը արդի պահանջներին համընթաց:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգը կարգավորվում է երկու հիմնական օրենքներով՝ «Կրթության մասին» օրենքով (1999 թ.) և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով¹ (2004 թ.): Վերջինս սահմանում է բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքը, սկզբունքները և ֆինանսավորման մեխանիզմները: Օրենքներին կից գործում են նաև մի շարք կանոնակարգող փաստաթղթեր, որոնք ներառում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ որակի ապահովումը, [որակավորումների ազգային շրջանակը](#), ակադեմիական կրեդիտները և դրանց փոխանցումը, ուսանողների շարժունությունը և այլն:

Շարունակական կրթության սկզբունքն ապահովելու համար ՀՀ-ում բարձրագույն կրթությունն իրականացվում է հետևյալ ձևերով՝ առկա, հեռակա, հեռավար և դրսեկություն (էքստեն):

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը բաղկացած է պետական, մասնավոր և միջպետական բարձրագույն ուսումնական հաստատություններից: ՀՀ-ում բարձրագույն կրթություն տրամադրվում է հիմնականում երկու տիպի հաստատությունների կողմից՝ համալսարանների և այլ հաստատությունների, ինչպիսիք են ինստիտուտները, ակադեմիաները և կոնսերվատորիան

Ստորև ներկայացված է Հայաստանում գործող ուսումնական հաստատությունների, ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի թիվը.

		Միջպետական բուհեր		
Պետական բուհեր	Մասնավոր բուհեր	Միջպետական պայմանագրերով և պետության մասնակցությամբ	Միջազգային մասնավոր համալսարանների մասնաձյուղեր	Օտարերկրյա պետական բուհերի մասնաձյուղեր

¹ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը փոխվել է որպես «Կրթության և գիտության մասին» օրենք և այժմ գտնվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունման վերջնական փուլում


² Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումները Բոլոնիայի գործընթացի համատեքստում՝ https://www.researchgate.net/publication/330486084_YEREVAN_2015

			հիմնադրված բուհեր		
Բուհերի թիվը	23	25	6	3	5
Ոսանողների թիվը	68987		10603	911	
Պրոֆեսորադասախոսական կազմի թիվը	10831				

Աղյուսակ 1. Կրթական հաստատությունների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի թիվը (2020³)

Նախնական և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության կրթությանը հատկացվող ծախսերում վերջին հինգ տարիներին համապատասխանաբար կազմել է 8.06% և 8.70%: Գծապատկեր 1-ում առավել մանրամասն պատկերված են նախնական և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական կրթության ծրագրերին հատկացված ծախսերը՝ ըստ տեսակարար կշիռների:

Գծապատկեր 2.22-ում Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերի պետական ֆինանսավորումը 2016-2020թթ.-ին,%




Կրթության ոլորտի պետական ծախսերը 2016-2020 թվականներին միջինում կազմել են ՀՆԱ-ի 2,2%-ը: Կրթություն/ՀՆԱ կատարողականի հարաբերակցության դինամիկան ըստ տարիների ներկայացված է ստորև՝ Գծապատկեր 2-ում⁴:

³ Տվյալները հավաքագրվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից (<https://armstat.am/en>) և ԿԳՄՍ նախարարությունից (<https://escs.am/am/>)

⁴ Ինքնավերլուծության զեկույցի բոլոր գծապատկերները մշակվել են ՈԱԱԿ-ի կողմից

Գծապատկեր 3. ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորում/ՀՆԱ հարբերակությունը 2016-2020թթ., %



3.2 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բարձրագույն կրթության համակարգը կառուցվածքային և շոշափելի այլ բարեփոխումների է ենթարկվել 2005թ. Բոլոնիայի գործընթացին միանալուց հետո: Այդ ժամանակից ի վեր ներդրվել է եռաստիճան կրթական համակարգը, ընդունվել է որակավորումների ազգային շրջանակը, և բուհերը սկսել են ներդնել Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS): Բոլոնիայի բարեփոխումների հովանու ներքո 2008թ. հիմնադրվել է ՈԱԱԿ-ը: Լինելով արտաքին որակի ապահովման միակ գործակալությունը ՀՀ-ում՝ ՈԱԱԿ-ի առաքելությունն է խթանել բարձրագույն կրթության համակարգում շարունակական որակի մշակույթի զարգացումը՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլային գործընթացը փորձնական իրականացվել է 2010 թ. և այնուհետև կիրառվել գործնականում: Ներկայումս բոլոր պետական և խոշոր մասնավոր բուհերն անցնում են ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլը:

Թեև բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները ծրագրված էին, և բուհերն ակտիվորեն իրականացնում էին բարեփոխումների օրակարգը, սակայն հավատարմագրումից պարզ դարձավ, որ կատարված բարելավումների արդյունավետությունը չէր գնահատվել: Ինստիտուցիոնալ հավատարմագրման ներդրմամբ բուհերը սկսել են իրականացնել իրենց գործունեության առանցքային ուղղությունների կանոնավոր ինքնավերլուծություն և հնարավորություն ունեցել գնահատելու բարելավումների և բարեփոխումների արդյունքները և առաջ եկող խոչընդոտները: Ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքում բուհերում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

- ՄԿԾ-ների վերջնարդյունքահենք մոտեցման ներդրում,
- Կրթական գործընթացում գործատուների ներգրավվածության աճ
- Ռազմավարական կառավարման բարելավում,
- Միջազգային ուսանողների թվի ավելացում,
- որակի ներքին ապահովման համակարգի ներդրում (տվյալների հավաքագրում և վերլուծություն),
- և այլն:

Կառավարության ծրագրում (2021-2026 թթ.) նշվում են այն հիմնական ուղղությունները, որոնցով բարձրագույն կրթության համակարգը պատրաստվում է զարգացում ապրել: Կառավարության ծրագրի հիման վրա ՈԱԱԿ-ը կմշակի հետևյալ ուղղությունները.

1. Բուհերի ՌԾ-ների և կառավարության ռազմավարական ծրագրի համապատասխանեցման մշտադիտարկումներ,
2. ՄԿԾ-ների շարունակական բարելավման, միջազգայնացման նպաստում,
3. ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ամրապնդման նպաստում,
4. Որակավորումների միջազգային ճանաչման երաշխավորում,
5. ՄԿԾ-ների թվի օպտիմալացում,
6. Բուհերի կառավարման նոր մոդելների փորձարկում և ներդրում,
7. և այլն:

Համաշխարհային բանկի «Համակարգային մոտեցում ավելի լավ կրթական արդյունքների համար» (SABER) ուսումնասիրության համաձայն, որն իրենից ենթադրում է բենչմարքինգ երկրների մակարդակով, ՀՀ-ում որակի ապահովման համակարգը գնահատվել է որպես կայացած համակարգ, որտեղ գործում են համապատասխան ընթացակարգեր և հետևանքներ:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը, որը վերջնական ընդունման փուլում է գտնվում ՀՀ Ազգային ժողովի կողմից (նախատեսված է ընդունել մինչ 2022 թ. մարտը) և այժմ քննարկվում է շահակիցների հետ, վերջնական ընդունումից հետո կբերի բարեփոխումների նոր օրակարգ: Օրենքը կկարգավորի ծրագրային հավատարմագրման պարտադիր լինելու պայմանը, հավատարմագրում չստանալու հետևանքները, ինչպես նաև կկապի հավատարմագրման և լիցենզավորման պահանջները, որը հնարավորություն կտա մասնավոր բուհերին, որոնք Կրթության մասին նախորդ օրենքի համաձայն ստացել են անժամկետ հավատարմագրում ներգրավվել շրջափուլային հավատարմագրման գործընթացում:

4. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1 ՈԱԱԿ-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ ՈԱԱԿ-ի հիմնադրումը ՀՀ-ում առկա են եղել որակի ապահովման հնացած իրավական հիմքեր: Փորձը ցույց է տվել, որ միայն կենտրոնանալը ուսանողների ավարտական ատեստավորման քննությունների վրա (ինչը պահանջվում էր նախկին կանոնակարգով) բարեփոխումների արդյունավետ մեխանիզմ չէր:

ՈԱԱԿ-ը հիմնադրվել է 2008 թ. Կառավարության որոշմամբ՝ ստանալով մինիմալ ռեսուրսներ: Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է գործատուներից (զարգացած և անկախ կազմակերպությունների ներկայացուցիչներից), գործատուների միության ներկայացուցիչներից, մասնավոր և պետական հաստատությունների գիտնականներից, ուսանողներից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներից:

Նախնական ենթադրվում էր, որ ՈԱԱԿ-ի հիմնական նպատակը մասնագիտական կրթության ոլորտում (ՄԿՈՒ հաստատություններ և բուհեր) բարեփոխումների խթանումն է: Համաշխարհային բանկի աջակցությամբ ՈԱԱԿ-ի առաջին քայլերը որակի արտաքին ապահովման ուղղությամբ իրականացվել է 2010թ:

Արդեն 2011թ. շահակիցների հետ սերտ համագործակցությամբ մշակվել է որակի արտաքին ապահովման նոր շրջանակը, որտեղ առաջնահերթություն է համարվում ինստիտուցիոնալ կառավարման քաղաքականության մշակումը՝ հատուկ շեշտադրելով ռազմավարական կառավարումը, որակի ապահովումը և հավաստի տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը: ՄԿԾ-ներն ընկած են ինստիտուցիոնալ զարգացման հիմքում: Ներդրվել է ինստիտուցիոնալ գնահատման ձևավորող մոտեցումը՝ հիմնված գործընկերային գնահատման մեթոդի վրա՝ հետադարձ կապի տրամադրմամբ և մշակված բարելավման պլանի ներդրմամբ:

Հաստատությունները գնահատվել են՝ հաշվի առնելով կառավարումը խթանող մշակված քաղաքականությունների արդյունավետությունը, դասավանդման և ուսումնառության վերջնարդյունքահենք մոտեցումը, ինչպես նաև ուսումնական ծրագրերի շարունակական զարգացումը: Կարևորվել են դասախոսների լավագույն փորձի խթանումը, ծրագրերի իրականացման համար ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և որակավորումների շնորհման նպատակով ուսանողների առաջադիմության ապահովման համար տարված աշխատանքները: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում գործընկերային գնահատումն իրականացվում է հետևյալ ձևերով՝ այց ուսումնական հաստատություն և հանդիպում շահակիցների հետ: Ինքնավերլուծության զեկույցում հաստատությունները ներկայացնում են ինստիտուցիոնալ կառավարումը բարելավելու իրենց փորձառությունը՝ զարգացման բոլոր ուղղություններում կիրառելով շարունակական բարելավումը՝ հիմնված ՊԻԳԲ շրջափուլի վրա:

Այս փուլում ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավոր հիմունքներով, և միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլից հետո բուհերը պատրաստ կլինեն իրենց հնարավորությունների սահմանում իրականացնել ծրագրերի համակարգված շրջափուլային գնահատում (ինչն ամրագրված է որպես պարտադիր մոտեցում «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքում):

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի շրջանակներում ՀՀ-ն կշարունակի կիրառել ինստիտուցիոնալ հավատարմագրման ձևավորող մոտեցումը՝ առաջարկելով բուհերին պատասխանատվություն ստանձնել ծրագրերի գնահատման համար՝ հիմնվելով գործընկերային գնահատման մոտեցման և ինքնավերլուծության վրա: Մինչև նույն ժամանակ ՈԱԱԿ-ը շարունակում է հրավիրել փորձագետների ուշադրությունը ՆԿԾ-ների մշակման և բարելավման վրա՝ հաշվի առնելով բուհերի համատեքստը և դրանց ուրույն քաղաքականությունը:

ՀՀ-ում որակի արտաքին ապահովման համակարգի ներդրմամբ ՈԱԱԿ-ը մեծ կարևորություն է տվել փորձագետների կարողությունների ձևավորմանը: Միջազգային փորձագետները ներգրավված են փորձագիտական խմբերում, ինչը պահանջվում է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգով» (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ): Միջազգային փորձագետն իրականացնում է եվրոպական չափանիշներին համապատասխան բենչմարքինգ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում տեղացի փորձագետների և հաստատությունների ներկայացուցիչների հետ երկխոսության միջոցով: Փորձագիտական բոլոր զեկույցներն ունեն հատուկ հատված, որտեղ ներկայացված են բենչմարքինգի արդյունքները ԵԲԿՏ-ի ինտեգրման տեսանկյունից:

ՈԱԱԿ-ը խթանում է երկխոսությունը և քննարկումները հաստատությունների վարչակազմի, որակի ներքին ապահովման ստորաբաժանումների, դասախոսների և ուսանողների միջև ամենամյա համաժողովների և «Որակի շաբաթ» միջոցառման միջոցով: Փորձագետների վերապատրաստումները հնարավորություն են տալիս բացահայտելու տարբեր ՄՈՒՀ-երում կիրառվող լավագույն փորձը և երկրում բարեփոխումների իրականացման քաղաքականությունը: Ուսանողները ևս ներգրավված են և տարբեր շահակիցների հետ միասին մասնակցում են կազմակերպվող քննարկումներին:

ՈԱԱԿ-ի լավագույն փորձի որոշ օրինակներ ներկայացվել են եվրոպական մակարդակով: 2017թ. Կրթության որակի ապահովման ֆորումի /EQAF/ ընթացքում ՈԱԱԿ-ը ներկայացրել է հաստատության և գործատուի միջնորդությամբ մշակված հաղորդակցման մեխանիզմը: Մեխանիզմի նպատակն է համալրել ուսումնական հաստատությունները ուսանողների գնահատման նոր գործիքակազմով, որը գործատուները կիրառում են ամենօրյա պրակտիկայում՝ որպես արտադրական շրջավուլի մաս: Գործիքակազմի նպատակն է խթանել ուսանողակենտրոն և աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոտեցումները:

«Ուսանողության ձայնը» նախագիծը (ստեղծված 2011 թ.) ձևանշվել է ԵԲԿՏ-ում որպես լավագույն փորձ՝ ուսանողներին որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներում ներգրավելու տեսանկյունից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ ՈԱԱԿ-ը նախաձեռնել և իրականացրել է (2021թ.) «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացումը ՀՀ բուհերում» նախագիծը, որի նպատակն է եղել բուհերի ներկայացուցիչների մոտ ձևավորել կարողություններ՝ կազմակերպելու ինքնավերլուծություն որակի ներքին ապահովման շրջանակներում: Նախագծի հիմնական նպատակն էր սովորեցնել ներքին շահակիցներին դիտարկել իրենց բուհերի զարգացումը արտաքին շահակիցների տեսանկյունից: Հիմնականում շեշտադրվել է մարդկային ռեսուրսի կարողությունների զարգացումը:

Այսպիսով, բարեփոխումները շարունակվում են, և գուգահեռ իրականացվում են կրթական բարեփոխումների ընթացիկ վիճակի գնահատումներ, ինչպես նաև դրանց համապատասխանեցումը Բոլոնիայի գործընթացի պահանջներին և եվրոպական լավ փորձին:

2020 թ. ՈԱԱԿ-ն ավարտել է երկրորդ ՌԾ-ի իրականացումը և սկսել երրորդը: Երրորդ ՌԾ-ն ուղղված է ՈԱԱԿ-ի զարգացմանը՝ որպես վստահելի գործընկեր հաստատությունների և ՀՀ կառավարության համար՝ ամրապնդելով որակի մշակույթը ՀՀ բուհերում և ապահովելով թափանցիկություն հասարակության համար:

4.2 ՈԱԱԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստանում և ամբողջ աշխարհում հարափոփոխ միջավայրը պահանջում է ավելի ինտենսիվ բարեփոխումներ բարձրագույն կրթության համակարգում՝ անընդհատ փոփոխվող համատեքստին հարմարվելու և ավելի ճկուն գործիքակազմ մշակելու համար: ՈԱԱԿ-ի 2021-2025 թթ. ՌԾ-ն ուղղված է որակի շարունակական բարելավմանը և որակի մշակույթի տարածմանը մասնագիտական կրթության համակարգում՝ ներկա և սպասվող մարտահրավերներին դիմակայելու նպատակով: Ռազմավարությունը հիմնված է հինգ հիմնական արժեքների վրա, որոնք բխում են ՈԱԱԿ-ի գործունեությունից՝ **վստահություն, նորարարություն, անաչառություն, հաշվետվողականություն և համագործակցություն:**


ՈԱԱԿ-ն իր առաքելությամբ նպաստում է մասնագիտական կրթության համակարգում որակի շարունակական բարելավմանը՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Իր առաքելությանը հասնելու համար մինչև 2025 թ. ՈԱԱԿ-ը կպահպանի իր դիրքը Հայաստանի Հանրապետությունում որպես մասնագիտական կրթության որակի հուսալի և լիարժեք երաշխավոր՝ առաջնորդվելով հետևյալ ռազմավարական նպատակներով.

- խթանել մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթը,
- շարունակաբար զարգացնել փորձագիտական կարողությունները ՀՀ-ում,
- նպաստել շահակիցների հետ ակտիվ, շարունակական հաղորդակցմանը և համագործակցությանը,
- ապահովել որակյալ կրթական միջավայրի ձևավորման համապատասխանությունը գործող օրենսդրական կարգավորումներին,
- տարածել միջազգային լավագույն փորձը և մշակույթը,
- շարունակաբար զարգացնել ՈԱԱԿ-ի կարողությունները՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները:

Մշակված ՌԾ-ի նպատակն է հզորացնել ՈԱԱԿ-ը որպես մասնագիտական կրթության որակի բարելավմանն աջակցող կազմակերպություն, որը միջազգայնորեն ճանաչված և վստահելի է իր բոլոր շահակիցների համար:

ՈԱԱԿ-ը ոչ առևտրային կազմակերպություն է, որը ձևավորվել է հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա՝ բարձրագույն կրթության ոլորտում ուսումնասիրություններ ու վերլուծություններ կատարելու, առաջարկություններ ներկայացնելու և գնահատումներ իրականացնելու նպատակով: ՈԱԱԿ-ը հիմնադրվել է որպես փոքր և ճկուն կազմակերպություն, բարձր որակավորում ունեցող աշխատակազմով՝ որակի արտաքին ապահովման մի շարք պարտականություններ կատարելու համար: Կազմակերպության հիմնական միավորներն են.



Գծապատկեր 3: ՈԱԱԿ-ի կազմակերպական կառուցվածքը

ՈԱԱԿ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված է ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և գործառնական կառավարումը:

- **Հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)** ՈԱԱԿ-ի բարձրագույն և վերահսկող մարմինն է, որը բաղկացած է տարբեր շահակիցների խմբերից՝ գործատուների, ՄՈՒՀ-երի, պետական մարմինների, ուսանողների ներկայացուցիչներից: Խորհուրդը բաղկացած է 12 հոգուց, նրա գործունեության ժամկետը չորս տարի է: Այն պատասխանատու է բարձր մակարդակում ՈԱԱԿ-ի գործունեության կազմակերպման համար: Հրապարակային մրցույթի արդյունքում խորհուրդը նշանակում է տնօրենին և ամեն տարի գնահատում գործակալության գործունեությունը: Խորհուրդը հաստատում է ՈԱԱԿ-ի ռազմավարական պլանը, ենթաօրենսդրական ակտերը, կազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, տարեկան բյուջեն և ղեկավարում է բողոքարկումների գործընթացը: Խորհուրդը հաստատում է նաև բյուջեի բաշխումը, դրանում կատարված փոփոխությունները և ֆինանսական հաշվետվությունները:

- **Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)** մշտական գործող անկախ, կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ով և Հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունված «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ»-ով սահմանված իր պարտականությունները: Հավատարմագրման հանձնաժողովը պատասխանատու է.

- ✓ որոշումների կայացման մոտեցումների և հավատարմագրման սկզբունքների սահմանման,
- ✓ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացման,
- ✓ ՈԱԱԿ-ին հավատարմագրման ընթացակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ներկայացման համար:

Հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը 13-ն է, որից 10-ը բարձրագույն ուսումնական հաստատությունների շահակիցներ են, 3-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների:

- **Ոլորտային հանձնաժողովներ, որոնք ամբողջովին ձևավորված չեն:** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունենում կրթական բարեփոխումներ, որոնցում ակտիվ ներգրավված է ՈԱԱԿ-ը: Քանի որ կար անհրաժեշտություն շահակիցներին ևս ներգրավել այս բարեփոխումներում, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՈԱԱԿ-ի, ՄՈՒՀ-երի և գործատուների սերտ համագործակցության համար նոր հարթակ ստեղծելու նպատակով որոշվել է ստեղծել ոլորտային հանձնաժողովներ: Հարթակի միջոցով այդ կազմակերպությունները համատեղ մշակելու են Ոլորտային որակավորումների շրջանակները (այսուհետ՝ ՈՈՇ): Ներկայումս ոլորտային հանձնաժողովները պաշտոնապես ձևավորված չեն

- **Խորհրդատուների խորհուրդն** ըստ անհրաժեշտության տրամադրում է ռազմավարական զարգացման հարցերով խորհրդատվություն Հոգաբարձուների խորհրդին և ՈԱԱԿ-ի տնօրենին: Խորհրդատուների խորհուրդը խորհրդատվություն է տրամադրում տնօրենի կամ Հոգաբարձուների խորհրդի դիմելու դեպքում, կամ իր նախաձեռնությամբ:

- **Տնօրենն** իրականացնում է ՈԱԱԿ-ի ընթացիկ կառավարումը: Տնօրենը պատասխանատու է քաղաքականության ուղղության սահմանման, ֆինանսական կառավարման և շահակիցների հետ հաղորդակցման համար: Հիմնադրամի տնօրենն ընտրվում է մրցութային կարգով, 4 տարի ժամկետով:

ՈԱԱԿ-ն ունի երեք գործառութային բաժին.

1. **Քաղաքականության մշակման և իրականացման բաժինը** պատասխանատու է ՈԱԱԿ-ի քաղաքականության և ընթացակարգերի մշակման և իրականացման, օժանդակ կարգավորող փաստաթղթերի մշակման և շահակիցների հետ հաղորդակցության ապահովման համար:
2. **Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժինը** պատասխանատու է բուհերում արտաքին գնահատման գործընթացների կազմակերպման և իրականացման համար, ինչպես նաև հավատարմագրման մասին համապատասխան որոշում կայացնելու նպատակով հավատարմագրման հանձնաժողովին տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրման համար:
3. **Քարտուղարությունը** պատասխանատու է ՈԱԱԿ-ին տեխնիկական օժանդակություն տրամադրելու, արտաքին կապերի, ինչպես նաև ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի հետ հաղորդակցությունն ապահովելու համար:

ՈԱԱԿ-ի տնօրենի աշխատակազմը ներառում է՝

- Մարդկային ռեսուրսների մասնագետ,
- Միջազգային կապերի մասնագետ,
- Որակի ներքին ապահովման մասնագետ,
- Իրավաբան,
- Իրավախորհրդատու և գնումների մասնագետ,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ,
- Տվյալների բազայի մասնագետ,
- Հասարակության հետ կապերի մասնագետ,
- Հաշվապահ,
- Տնօրենի օգնական,
- Տեխնիկական անձնակազմ:

4.3 ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Որակի ապահովման մշակույթը առաջնորդվում է երկու հիմնական սկզբունքներով՝ հաշվետվողականություն և բարելավում: Որակի արտաքին ապահովման նպատակն է բարձրագույն կրթության համակարգը համապատասխանեցնել ուսանողների, շահակիցների և հասարակության կարիքներին:

ՀՀ-ում կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման միջոցով, մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման երկու գործընթացներով՝ ինստիտուցիոնալ և ծրագրային: Այն հիմնված է «համապատասխանություն նպատակին» սկզբունքի վրա՝ գնահատելով, թե որքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում այս սկզբունքի զարգացմանը: Հավատարմագրման գործընթացն իրականացնում է ՈԱԱԿ-ը՝ ՀՀ-ում որակի ապահովման միակ գործակալությունը:

Որակի արտաքին ապահովումն առաջին հերթին կենտրոնանում է ուսումնական հաստատությունների կողմից սահմանված նպատակների իրականացման վրա և որոշում դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից ընդունված որակի ապահովման չափանիշներին և չափորոշիչներին: Որակի արտաքին ապահովման գործընթացները նաև որոշում են կրթության զարգացման առաջնահերթությունները ու հանրային կարիքները:

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

Ինստիտուցիոնալ հավատարմագրումն ուղղված է բուհերի, այդ թվում՝ ՄԿԾ-ների կառավարման գործընթացներին և դասավանդման, ուսումնառության, գնահատման գործընթացների իրականացման արդյունավետությանը: Այն տեղի է ունենում ՈԱԵԶՈԻ-ի շրջանակներում:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է ՀՀ տարածքում գործող բոլոր պետական և մասնավոր բուհերի համար: Ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնական նպատակն է գնահատել բուհի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև պարզել՝ որքանով է բուհի գործունեությունը համապատասխանում իր սահմանած առաքելությանը և որքանով են Մասնագիտական կրթական ծրագրերը, նյութական և մարդկային ռեսուրսները շարունակաբար բարելավվում՝ ապահովելով որակավորումների արժանահավատ շնորհումը:

2011 թ.-ից ՈԱԱԿ-ն իրականացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ: Ներկայումս բոլոր պետական և ակտիվ գործունեություն ծավալող մասնավոր բուհերը գտնվում են ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում:

Գործունեության տեսակ	2017	2018	2019	2020	2021
Բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրում	3	7	3	2	13

Աղյուսակ 2. Ինստիտուցիոնալ հավատարմագրումների թիվը

Ծրագրային հավատարմագրում

Ծրագրային հավատարմագրման նպատակն է առանձին մասնագիտության կրթական ծրագրի որակի ճանաչումը: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել, թե արդյոք այն ապահովում է ակնկալվող ուսումնառության արդյունքների ամբողջական ձեռքբերումը:

Ծրագրային հավատարմագրումը ՀՀ-ում այժմ իրականացվում է կամավորության սկզբունքով: ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում ընդգրկվել է պարտադիր ծրագրային հավատարմագրումը՝ բուհերի կողմից ծրագրերի ինքնգնահատման և արդյունքները ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությամբ: Նոր օրենքի վերջնական ընդունումից հետո ծրագրային հավատարմագրումը պարտադիր կլինի ՀՀ-ում գործող բոլոր բուհերի ՄԿԾ-ների համար. ՄԿԾ-ները պետք է հավատարմագրվեն մինչև 2025 թ.:

Բուհերին ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստելու նպատակով Ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում ՈԱԱԿ-ն ավելի մանրամասն է դիտարկում Մասնագիտական կրթական ծրագրերը: ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումները բուհերի և փորձագետների համար նույնպես միտված են այդ կարողությունների զարգացմանը և ՄԿԾ-ների բարեփոխումների համայնքի ստեղծմանը (իրավիճակի մանրամասն վերլուծությունը ներկայացված է ESG մաս 3.1-ում): ՈԱԱԿ-ը կարևորում է վերապատրաստումները և նմանատիպ միջոցառումները ՈԱԵԶՈԻ իրականացման տեսանկյունից:

Վերջին հինգ տարիներին ՈԱԱԿ-ն էրազմուս+ նախագծի շրջանակներում իրականացրել է մի շարք փորձնական ծրագրային գնահատումներ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով: Մասնավորապես՝ գնահատվել է վեց ՄԿԾ-ների համահնչեցման մեխանիզմների արդյունավետությունը՝ ՈԱԾ-ի նկարագրիչներին համապատասխան: Երեք ՄԿԾ-ներ պիլոտային ձևով գնահատվել են միջպետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ միջպետական բուհերում որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը հասկանալու նպատակով: Նաև գնահատվել են չորս հետբուհական (ասպիրանտուրական) ծրագրեր՝ հասկանալու դոկտորական կրթության որակի ապահովման շրջանակը:

ՈԱԱԿ-ն իրականացրել է նաև ծրագրային արտաքին գնահատումներ տարածաշրջանային մակարդակով (Ուկրաինա, Ղազախստան և Մոնղոլիա): ՈԱԱԿ-ի փորձագետները ներգրավված են եղել Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) բուհերի հավատարմագրման գործընթացներում:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման մեթոդաբանությունը և գործընթացները նկարագրված են ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկում ([2015](#), վերանայված [նախնական տարբերակը 2021թ.](#)):

4.4 ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Բուհերի մշտադիտարկումներ

Մշտադիտարկման հիմնական նպատակն է նպաստել բուհերի շարունակական բարելավմանը տարբեր ուղղություններով՝ ՄԿԾ-ներ, կառավարում, որակի ապահովման համակարգ և այլն: ՈԱԱԿ-ն իրականացնում է բուհերի մշտադիտարկումներ՝ համաձայն իր կանոնադրության և ՀՀ կառավարության պատվերով:

Հավատարմագրված բուհերում մշտադիտարկման հիմնական նպատակն է հետևել բարելավման պլանի իրականացման ընթացքին, իսկ չհավատարմագրված բուհերում՝ գնահատելու որակի ներքին ապահովման համակարգի զարգացումը:

ՈԱԱԿ-ն իրականացնում է նաև մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ աջակցելու ՄԿԾ-ների բարելավմանը:

Մշտադիտարկումները չունեն ֆորմալ վերջնարդյունք:

Մշտադիտարկման գործընթացը նկարագրված է [«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականությունում և ընթացակարգում](#): կարող

Ստորև աղյուսակում ներկայացված են մշտադիտարկումների թիվը վերջին հինգ տարիներին:

Գործունեության տեսակ	2017	2018	2019	2020	2021
Բուհի ինստիտուցիոնալ մշտադիտարկում	5	13	15	14	10
Բուհի ծրագրային մշտադիտարկում	5	5	5	10	10

Աղյուսակ 3. Մշտադիտարկված բուհերի թիվը

ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրում

ՄԿՈՒ հաստատություններում որակի ապահովման գործընթացների իրականացման առաջին քայլերը սկսվել են 2009 թ. -ից: 2011-2017 թթ. մի քանի ՄԿՈՒ հաստատություններում իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձնական գործընթացներ: Իրականացված աշխատաքները որակի նոր մշակույթի ձևավորման նախապատրաստական փուլն էր: Մեկնարկված հավատարմագրումների նպատակն է ներդնել ՄԿՈՒ հաստատություններում ինքնավերլուծության, ինքնավարության և հաշվետվողականության մշակույթ:

Հաստատություններին որակի ներքին ապահովման համակարգերի ներդրմանն աջակցելու նպատակով պարբերաբար իրականացվել են աշխատաժողովներ և վերապատրաստումներ ղեկավարության, վարչական և դասախոսական աշխատակազմերի համար:

2018 թ. ՈԱԱԿ-ն իրականացրել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 4 գյուղատնտեսական քաղեջներում, որը Եվրոպական միության (ԵՄ) բյուջետային աջակցության՝ «Ավելի լավ հմտություններ՝ ավելի լավ աշխատանքի համար» ծրագրի պահանջներից էր: 2019 թ.-ից սկսված պետական ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է պետական ֆինանսավորմամբ: Պետական ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հինգ ՄԿՈՒ հաստատություններում իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ, իսկ ևս հինգ հաստատություններ ներկայումս այդ գործընթացում են: Կառավարության ռազմավարությամբ նախատեսված է, որ մինչև 2025 թ. բոլոր ՄԿՈՒ հաստատությունները պետք է անցած լինեն ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Ոչ պետական ՄԿՈՒ հաստատություններին նույնպես խրախուսվում է իրականացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ՝ օգտագործելով սեփական ռեսուրսները, երկու մասնավոր բժշկական հաստատություններ գործընթացն իրականացրել են:

ՈԱԱԿ-ը մշակել է [«ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ մոտեցումները և ակնկալվող արդյունքները»](#) փաստաթուղթը, որտեղ ներկայացված են միջին մասնագիտական ոլորտում ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնական շեշտադրումները:

ՈԱԱԿ-ը նաև իրականացնում է ՄԿՈՒ հաստատությունների մշտադիտարկում, որպեսզի վերջիններիս ներսում խթանի ծրագրերի ինքնավերլուծության մշակույթի ձևավորումը:

2020 թ.-ից ՈԱԱԿ-ը միացել է Եվրոպական վերապատրաստումների հիմնադրամին (ETF) և ակտիվորեն մասնակցում է ցանցի գործունեությանն ու զարգացմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է որակի արտաքին ապահովման գործընթացները ՄԿՈՒ հաստատություններում՝ ըստ տարիների:

Գործունեության տեսակ	2017	2018	2019	2020	2021
ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում	0	0	0	1	10
ՄԿՈՒ հաստատությունների մշտադիտարկում	6	5	5	10	10

Աղյուսակ 4. ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրումների և մշտադիտարկումների թիվը

4.5 ՈԱԱԿ-Ի ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ


Որակի շարունակական բարելավումը ՈԱԱԿ-ի գործունեության կարևոր բաղադրիչներից է: ՈԱԱԿ-ը կարևորում է իր ներքին և արտաքին բոլոր գործընթացների վերաբերյալ տվյալների կանոնավոր հավաքագրումը, շահակիցների արձագանքները և տարբեր գործընթացների պարբերական բարելավումը: Որակի ներքին ապահովման համակարգի նպատակն է արդյունավետ կառավարել ՈԱԱԿ-ի գործունեությունը. մատուցել արտաքին որակի ապահովման ծառայություններ ՄՈՒՀ-երին՝ ապահովելով պրոֆեսիոնալիզմի, կայունության, օբյեկտիվության, վստահելիության ամենաբարձր մակարդակը, ինչպես նաև ապահովել որակի արտաքին ապահովման համակարգի աստիճանական բարելավումը և կատարելագործումը: Որակի ներքին ապահովման համակարգը նպաստում է ՈԱԱԿ-ի ռազմավարական ուղղությունների լիարժեք իրականացումը:

Գործակալության որակի ապահովման համակարգը կառավարում է որակի ինը տիրույթները, որոնք սահմանում են յուրաքանչյուր տիրույթի ցուցիչները և որակի ապահովման գործընթացները: Առանձնացված են որակի հետևյալ տիրույթները .

1. Առաջնորդություն, ռազմավարություն, քաղաքականություն և մարդկային ռեսուրսներ,
2. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում,
3. ՄՈՒՀ-երի մշտադիտարկում,
4. Քարտուղարություն և Հավատարմագրման հանձնաժողով,
5. Որակի ներքին ապահովում,
6. Միջազգային հարաբերություններ,
7. Հաղորդակցություն և հասարակության հետ կապեր,
8. Իրավական գործընթացներ,
9. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ռեսուրսներ:

Տվյալները հավաքագրվում են ներքին հանդիպումների, շահակիցների՝ ներառյալ փորձագետների, հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով:

ՈԱԱԿ ՈՆԱ-ի մոդելը նկարագրված է ստորև (ամբողջական նկարագրության համար տե՛ս [«ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և քննադատական գործընթացները»](#)): Ըստ մոդելի՝ ՈԱ-ն և որակի գնահատումը բոլոր գործողություններում ուղղված են առաքելությանը և նպատակներին, որոնք ապահովում են ամբողջականությունը, ինչպես նաև արտացոլում են շահակիցների պահանջները:



Գծապատկեր 4: ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման մոդելը

Որակը սահմանվում է որպես ձևակերպված առաքելության և նպատակների ձեռքբերում, որն արտահայտում է շահակիցների կարիքները (սյունակ 1): Երկրորդ սյունակը ներկայացնում է, թե ինչպես է գործակալությունը ծրագրում հասնել սահմանված նպատակներին.

- նպատակների վերածում քաղաքականության և ռազմավարության,
- գործակալության կառավարման կառուցվածք և կառավարման ոճ,
- մարդկային ռեսուրսների կառավարում, կադրերի կողմից ներդրում նպատակներին հասնելու համար,
- ռեսուրսներ

Երրորդ սյունակը ցույց է տալիս գործակալության հիմնական գործունեությունը.

- որակի արտաքին ապահովման գործընթացներ,
- արդյունքների ճանաչում և միջազգայնացում,
- թեմատիկ վերլուծություն և բարեփոխումներ:

Այս բոլոր գործընթացները վերլուծվում են ավելի կոնկրետ մոդելներով՝ հիմնված որակի տիրույթների վրա:

ՈԱԱԿ-ի ՈՆԱ համակարգն ավելի մանրամասն վերլուծված է չափանիշ 3.6-ում:

4.6 ՈԱԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրման օրից ի վեր ՈԱԱԿ-ի միջազգային գործունեությունը եղել և մնում է գործակալության առաջնահերթություններից մեկը: ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկում իր գործունեությունը միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների ու ցանցերի կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ-ում մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում և, ծանոթանալով միջազգային ոլորտում առկա վերջին միտումներին, դարձնելով դրանք կիրառելի ազգային մակարդակում:

ՈԱԱԿ-ի միջազգային գործունեությունն իրականացվում է տարբեր հարթություններում.

- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն՝ միջազգային լավագույն փորձը հասկանալու նպատակով, ինչպես նաև ապահովելու հարթակ գաղափարների փոխանակման և դրանք տեղական համատեքստում կիրառել համար,
- Հայաստանի որակի ապահովման համակարգի ճանաչման խթանում և միջազգային մակարդակով Հայաստանի մասնագիտական կրթության լիակատար աջակցություն:

Միջազգայնացմանն ուղղված գործունեությունը զարգանում է հետևյալ ձևով.

- անդամակցություն միջազգային ցանցերին,
- միջազգային նախագծեր,
- տարածաշրջանային համագործակցություն,
- ՈԱԱԿ-ի աշխատակազմի կարողությունների ձևավորման գործունեություն:

Անդամակցություն միջազգային ցանցերին

2011 թ. -ից ՈԱԱԿ-ը INQAAHE-ի լիիրավ անդամ է և ներկայացված է տնօրենների խորհրդում: 2017 թ. ՈԱԱԿ-ը դարձել է ENQA-ի լիիրավ անդամ և ընդգրկվել է Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR): 2019 թ. ՈԱԱԿ-ի տնօրենն ընտրվել է ENQA-ի խորհրդի անդամ:

ՈԱԱԿ-ը CEENQA-ի և CHEA միջազգային որակի խմբի (CIQG) անդամ է:

Անդամակցության գործունեության շրջանակներում ՈԱԱԿ-ի աշխատակիցները մասնակցում են համաժողովների, վեբինարների, քննարկումների և կարողությունների զարգացմանը միտված աշխատանքների: ՈԱԱԿ-ի աշխատակիցները նաև ներկայացնում են գործակալության լավ փորձը միջազգային տարբեր միջոցառումների ժամանակ: Մասնավորապես, [Որակի ապահովման շրջանակը գործատուների հետ արդյունավետ հաղորդակցվելու համար, ուսանողների ներգրավումը որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներում](#), ինչպես նաև [դոկտորական կրթության որակի ապահովման մեխանիզմները](#) ներկայացվել են ENQA-ի ընդհանուր ժողովի հանդիպումների ժամանակ:

2017 թ. ՈԱԱԿ-ը ներկայացրել է [գործատուների ներգրավման շրջանակը](#) որակի ապահովման եվրոպական ֆորումի (EQAF) ընթացքում:

ՈԱԱԿ-ի տնօրենը ներկայացնում է գործակալության զարգացումները INQAAHE տարեկան ժողովների ընթացքում:

2019 թ. -ից ՈԱԱԿ-ը Որակի ապահովման Բոլոնիայի գործընկերների աջակցության խմբի անդամ է, ակտիվ ներգրավված է խմբի գործունեության մեջ:

Միջազգային նախագծեր

Հիմնադրումից ի վեր ՈԱԱԿ-ը ներգրավված է եղել միջազգային տարբեր նախագծերում և ներդրումներ է կատարել դրանց մշակման, կառավարման և իրականացման աշխատանքներում, ինչպիսիք են Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ իրականացվող, ինչպես նաև Տեմպուս, Էրազմուս+ և Թվինինգ ծրագրերը:

Մինչ այժմ ՈԱԱԿ-ն իրականացրել է Տեմպուսի՝ 13, Համաշխարհային Բանկի՝ 3, և Թվինինգի [3 նախագծեր](#):

Ներկայումս ՈԱԱԿ-ը ներգրավված է EUnIQ եվրոպական նախագծում: Ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը մասնակցել է եվրոպական համալսարանների ցանցի համապարփակ որակի ապահովման նպատակով եվրոպական մոտեցման մշակմանը: Շվեդիայի բարձրագույն կրթության հավատարմագրման կառույցի (UKÄ) հետ համատեղ ՈԱԱԿ-ը համակարգել է արտաքին գնահատման գործընթաց եվրոպական համալսարանների ցանցում նորարարության, տեխնոլոգիաների և ճարտարագիտության ոլորտում. ցանցը ներառում է Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Իտալիայի, Գերմանիայի, Պորտուգալիայի և Իսպանիայի համալսարանները:

ՈԱԱԿ-ը ներգրավված է DEQAR CONNECT նախագծում, որը բարելավում է ԵԿԲՏ-ում ՈԱ լուսաբանումը և կապը DEQAR-ի միջոցով: Ծրագրի շրջանակում ՈԱԱԿ-ը մշակել է հավատարմագրման նոր գրանցամատյան, որն ավտոմատ միացված է DEQAR-ին և ապահովում է Ազգային գրանցամատյանի տվյալների ավտոմատ թարմացում: Մինչ այժմ ՈԱԱԿ-ը DEQAR է ներբեռնել 21 փորձագիտական զեկույց:

2021 թ. ՈԱԱԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ իրականացրել է «Հայաստանի բուհերի որակավորման կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր աջակցել բուհերին որակի ներքին ապահովման համակարգի ամրապնդման հարցում՝ պատրաստելով ներքին փորձագետներ, որոնք կվերանայեն իրենց ընթացակարգերը՝ օգտագործելով արտաքին գնահատման քաղաքականությունը:

Ներկայումս ՈԱԱԿ-ը ներգրավված է Էրազմուս+ ծրագրի SMARTi նախագծում (Աջակցություն անզլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով): Ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը պատասխանատու է EMI մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման մեթոդաբանության մշակման համար:

Տարածաշրջանային համագործակցություն

ՈԱԱԿ-ը կարևորում է տարածաշրջանային համագործակցության ամրապնդումը: ՈԱԱԿ-ը համագործակցության պայմանագրեր ունի Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի գործակալությունների հետ: Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում ՈԱԱԿ-ը մի քանի համագործակցություններ ունի վրացական գործակալության և բուհերի հետ: Համագործակցության շրջանակներում փորձագետները պարբերաբար կիսվում են իրենց փորձառությամբ:

ՈԱԱԿ-ի աշխատակազմի կարողությունների ձևավորում

ՈԱԱԿ-ն իր աշխատակիցներին խրախուսում է կանոնավոր մասնակցել կարողությունների զարգացման վերապատրաստումների, համաժողովների, հանդիպումների և վեբինարների՝ ըստ իրենց ուսումնասիրության ոլորտի՝ ներկայացնելով իրենց լավ փորձը և զեկույցումներն այդ միջոցառումների

5. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻՆ (ՄԱՍ 3)

5.1 ՈԱԵՉՈՒ 3.1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Չափանիշ

Գործակալությունները պետք է կանոնավոր կերպով ծավալեն որակի արտաքին ապահովման գործունեություն, ինչպես նշված է ՈԱԵՉՈՒ-ի երկրորդ մասում: Գործակալությունները պետք է ունենան հստակ սահմանված նպատակներ և խնդիրներ, որոնք կազմում են նրանց կողմից հրապարակված առաքելության մի մասը: Այդ նպատակները պետք է բխեն գործակալության ամենօրյա աշխատանքից: Գործակալությունները պետք է ապահովեն շահակիցների ներգրավվածությունը կառավարման և աշխատանքի մեջ:

Ռազմավարական ծրագրի մշակում

ՈԱԱԿ-ի առաքելությունը, տեսլականը և ռազմավարական նպատակները սահմանված են ՌԾ-ում: ՈԱԱԿ-ի առաքելությունն է նպաստել մասնագիտական կրթության համակարգում որակի շարունակական բարելավմանը՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

ՈԱԱԿ-ը մշակել է իր երրորդ ՌԾ-ն: Հոգաբարձուների խորհուրդը հաստատել է [ՈԱԱԿ-ի 2021-2025 թթ. ՌԾ-ն](#) և ճանապարհային քարտեզը: Ճանապարհային քարտեզը ցույց է տալիս ՀՀ-ում որակի արտաքին ապահովման զարգացման շարունակականությունը և նպաստում շահակիցների ավելի լայն ներգրավմանը մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման գործընթացներում:

Նոր ՌԾ-ն հաշվի է առնում ՀՀ կառավարության առաջնահերթությունները, որոնք ընդգծում են ՈԱԱԿ-ի դերը՝ որպես ՀՀ-ում մասնագիտական կրթության **որակի** ապահովման **երաշխավոր** և ՄՈՒՀ-երում որակի մշակույթի ամրապնդումը խթանող ուժ:

ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ մոտեցում

Գործակալության կողմից իրականացվող ողջ գործունեությունը բաժանված է քաղաքականության տիրույթների, որոնց հիման վրա մշակվել են պրոտոկոլներ: Վերջիններս վերահսկում են գործակալության գործունեության բոլոր տիրույթների առաջընթացը և ռազմավարության իրականացումը: Պրոտոկոլներում ներկայացված են գործակալության գործունեության յուրաքանչյուր տիրույթի թիրախները, գնահատման ցուցանիշները, հիմնական գործողությունների նկարագրությունը և որակի ապահովման գործիքները: Այս պրոտոկոլները հատուկ հղում են կատարում ՈԱԵՉՈՒ-ին: 2020 թ. պրոտոկոլները վերանայվել են՝ հաշվի առնելով ՈԱԱԿ-ի նոր ՌԾ-ն և շահակիցների կարիքները, որոնք բացահայտվել են նրանց հետ հաղորդակցության արդյունքում:

ՈԱԱԿ ՊՐՈՏՈԿՈԼ	Մեջբերված չափանիշները	ՈԱԵՉՈՒ
Առաջնություն, ֆինանսականություն, քաղաքականություն և մարդկային ռեսուրսներ	2.1, 2.2, 2.3, 2.4, 2.7, 3.1, 3.2, 3.3, 3.5, 3.6, 3.7	
Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում	2.1, 2.2, 2.3, 2.4, 2.6, 2.7, 3.1	
ՄՈՒՀ-երի մշտադիտարկում	2.2, 2.3, 2.4, 3.1	
Որակի ներքին ապահովում	2.2, 2.3, 2.4, 3.1, 3.3, 3.4, 3.5, 3.6, 3.7	
Միջազգային հարաբերություններ	2.1, 2.4, 3.4, 3.7	
Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ռեսուրսներ	3.3, 3.5, 3.6	
Իրավական գործընթացներ	2.7, 3.2, 3.3	
Հաղորդակցություն և հասարակության հետ կապեր	2.2, 2.4, 2.6, 3.4, 3.6	
Հավատարմագրման հանձնաժողով և քարտուղարություն	2.3, 2.4, 2.5, 2.6, 2.7, 3.6	

Աղյուսակ 5. ESG չափանիշների արտացոլումը ՈԱԱԿ-ի պրոտոկոլներում

Գործակալության ընթացիկ մշակումներն ավանդաբար իրականացվում են բոլոր շահակիցների հետ սերտ հաղորդակցությամբ: 2020 թ. ՈԱԱԿ-ը գնահատել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքները: Արդյունքները քննարկվել են արտաքին և ներքին շահակիցների հետ (Հոգաբարձուների խորհուրդ, Հավատարմագրման հանձնաժողով, փորձագետներ, բուհերի ղեկավարություն, ՈՆԱ կենտրոնների ներկայացուցիչներ, ուսանողներ, ՈԱԱԿ-ի աշխատակազմ և միջազգային փորձագետներ), և մշակվել է ՈԱԱԿ-ի նոր ՌԾ-ն:

ՀՀ-ում ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ հավատարմագրում և բարելավման ծրագրի մշտադիտարկում

ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է որակի արտաքին ապահովման գործընթացներ՝ պարտադիր ինստիտուցիոնալ և կամավոր ծրագրային հավատարմագրումների միջոցով: 2011 թ.-ից ՈԱԱԿ-ն իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլային գործընթացներ: 2018 թ. ՈԱԱԿ-ն ավարտել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների առաջին շրջափուլը: Արդյունքում բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդրվել են որակի ապահովման ներքին համակարգեր:

Ընթացքի մեջ է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլը՝ շեշտադրելով որակավորումների արժանահավատ շնորհումը, արդյունքահենք կառավարումը և տարբեր մեխանիզմների կիրառումը կրթական ծառայությունների հետագա բարելավման նպատակով:

Համաձայն իր [կանոնադրության](#) և կառավարության պահանջների՝ ՈԱԱԿ-ը մշտադիտարկումներ է իրականացնում հավատարմագրված ՄՈՒՀ-երում՝ գնահատելու բարելավման ծրագրերը, իսկ չհավատարմագրված ՄՈՒՀ-երում՝ հետևելու ՈՆԱ համակարգի զարգացմանը:

2019 թ. ՈԱԱԿ-ը սկսել է ՄԿՈԻ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Այդ ժամանակից ի վեր 16 ՄԿՈԻ հաստատություն անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Բուհերում ծրագրերի շրջափուլային վերլուծության մշակույթի ձևավորում

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար՝ համաձայն կառավարության կողմից հաստատված Հավատարմագրման կարգի: Վերջին տարիներին ՈԱԱԿ-ը ջանքեր է գործադրել ծրագրային հավատարմագրումը որակի արտաքին ապահովման գործընթացներում պարտադիր բաղադրիչ ներդնելու ուղղությամբ: Մասնավորապես՝

- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքում ծրագրային հավատարմագրումը ներկայացվում է որպես պարտադիր բաղադրիչ՝ բուհերի համար ինքնավերլուծություն իրականացնելու և ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին արդյունքները ներկայացնելու հնարավորությամբ:
- Կլաստերային հավատարմագրման մոտեցումը (չափանիշներ և չափորոշիչներ, ինքնավերլուծության զեկույցի ձևանմուշներ, կլաստերների կազմ) մշակվել է բուհերի ղեկավարության գործուն մասնակցությամբ:
- Հավատարմագրված բուհերում իրականացվում է ՄԿԾ-ների պարբերական մշտադիտարկում՝ բացահայտելու ծրագրային մակարդակում որակի ապահովման լավագույն փորձը, ինչպես նաև օգնելու հաստատությանը նախապատրաստվելու ծրագրային վերլուծությանը: Մշտադիտարկումը նաև լավ մեխանիզմ է ՄՈԻՀ-երի գործունեության որակի շարունակական բարելավման համար:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում ՄԿԾ-ների խորը գնահատման նպատակով ՈԱԱԿ-ը ներդրել է մեթոդ, որն իրենից ենթադրում է ներկայացված ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկում փորձագիտական խմբի կողմից, և «Մասնագիտական գրույց» փորձագիտական այցի ընթացքում ՄԿԾ ղեկավարների, դասախոսների և ուսանողների հետ: Առաջադրանքների դիտարկումը և մասնագիտական հանդիպումները նպաստում են գնահատելու ուսանողների առաջադիմությունը և նրանց մասնագիտական մտածողությունը: Ներկայացված մեթոդը նաև արդյունավետ է ծրագրերի մարտահրավերները և լավագույն փորձը բացահայտելու տեսանկյունից:
- ՈԱԱԿ-ը նաև ընդլայնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի էլեկտրոնային հարցաշարը, ներառյալ քանակական տվյալները, որոնք բուհերը պետք է ներկայացնեն բոլոր ծրագրերի համար: Այս ամենն օգնում է փորձագետներին ավելի խորքային գնահատել ՄԿԾ-ների վերաբերյալ տվյալները նախքան փորձագիտական այցը և «Մասնագիտական գրույց» հանդիպումները:
- Դասախոսների և ՄԿԾ ղեկավարների համար իրականացվող կարողությունների ձևավորման վերապատրաստումներում 2019 թ.-ից շեշտադրվել են ծրագրերի մշակման և որակի ապահովման մեխանիզմները:
- Փորձագետների վերապատրաստումներում շեշտադրվել են ՄԿԾ գնահատումները:

Որակի մշակույթի խթանում

Շահակիցների ներգրավվածությունը ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ կառավարման մեջ ապահովվում է ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդում և Հավատարմագրման հանձնաժողովում նրանց մասնակցությամբ: Շահակիցները մասնակցում են քաղաքականությունների և կարգավորող փաստաթղթերի մշակմանը՝ ապահովելով հետադարձ կապ գործակալության հետագա գործընթացների բարելավման համար: Պարբերաբար իրականացվող համաժողովները, թեմատիկ քննարկումներն ու միջոցառումները, ինչպես նաև վերապատրաստումները դառնել են հարթակ որակի ապահովման վերաբերյալ շարունակական երկխոսության համար:

Ուսանողների ներգրավվածությունն ապահովվում է [«Ուսանողության ձայնը» նախագծի](#) միջոցով: ՈԱԱԿ-ը ձևավորել և աջակցում է նախագծին 2011 թ. -ից: Ամեն տարի հրապարակվում է նախագծին մասնակցության երկուսից երեք հայտ: Կարող են դիմել բոլոր այն ուսանողները, ովքեր ցանկանում են մասնակցել վերապատրաստմանը: «Ուսանողության ձայն» նախագծի երկարաժամկետ նպատակն է վերապատրաստել ուսանողների, ովքեր կմասնակցեն որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացներին՝ դառնալով ուսանող-փորձագետներ և միանալով ՄՈՒՀ-երում ներքին որակի ապահովման աշխատանքներին: ՈԱԱԿ-ի ուսանող-փորձագետների 2011-2020 թթ. գրանցած հաջողությունները արտացոլված են Աղյուսակ 6-ում:

N. Նկարագրություն	Ուսանողների թիվ
1. Մասնակցել են հավատարմագրման գործընթացներին	100
2. Դարձել են ՈԱԱԿ-ի աշխատակազմի անդամներ	9
3. Դարձել են բուհերի որակի ներքին ապահովման բաժնի աշխատակիցներ	8
4. Դարձել են Եվրոպական ուսանողական միավորման բազայի անդամ	8
5. Մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող տարեկան համաժողովներին	200

Աղյուսակ 6. «Ուսանողության ձայնը» նախագծի ուսանող-փորձագետների 2011-2020 թթ. գրանցած հաջողությունները

5.2 ՈԱԵԶՈՒ ԶԱՓՈՐՈՇԻԶ 3.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Զափոքոշիչ

Գործակալությունները պետք է ունենան ամրագրված իրավական հիմք և իրավասու պետական մարմինների կողմից պաշտոնապես ճանաչված լինեն որպես որակի ապահովման գործակալություններ:

ՈԱԱԿ-ը հիմնադրվել է կառավարության 2008 թ. նոյեմբերի 27-ի թիվ [1486-Ն որոշմամբ](#), ուստի համապատասխանում է ՀՀ օրենսդրական կարգավորումներին: Ինչպես նշված է կառավարության որոշման մեջ, ՈԱԱԿ-ը հիմնական պատասխանատու մարմինն է մասնագիտական կրթության արտաքին գնահատման ոլորտում՝ մասնավորապես, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության: ՈԱԱԿ-ի դիրքն ու խնդիրները ամրագրված են [կանոնադրությամբ](#):

ՈԱԱԿ-ը հիմնադրվել է որպես ոչ անդամակցային, ոչ առևտրային կազմակերպություն՝ հիմքում ունենալով հիմնադրի կամավոր գույքային վճարումները: ՈԱԱԿ-ի գործունեության նպատակն է իրականացնել թեմատիկ վերլուծություններ, ձևավորել որակի ապահովման համակարգի և մասնագիտական կրթության ոլորտում գնահատումներ իրականացնելու կարողություններ, իրականացնել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումներ, մշտադիտարկումներ, ինչպես նաև նաև ապահովել ՀՀ մասնակցությունը միջազգային ու եվրոպական նախագծերում և եվրոպական ցանցում:

ՈԱԱԿ-ն ունի նախաձեռնողական դիրքորոշում օրենսդիր և գործադիր մարմինների հետ քաղաքականությունների մշակման վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման հարցում: ՈԱԱԿ-ի համագործակցությունը պետական մարմինների հետ ընդգրկում է բարձրագույն կրթության համակարգը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ առաջարկների նախապատրաստումը, կրթության ոլորտում ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի մշակման մեջ գործակալության աշխատակազմի ընդգրկումը (որակավորումների ոլորտային շրջանակ, բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման կանոնակարգ և այլն):

ՈԱԱԿ-ն արդեն ավարտել է «ՀՀ-ում բուհերի և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական հավատագրման մասին կարգի» խմբագրության իրականացումը՝ համապատասխանեցնելով այն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախնական տարբերակին (Օրենքն ընդունման փուլում է): Նոր կարգը սահմանում է հավատարմագրման գործընթացի մոտեցումները՝ հավատարմագրման և մշտադիտարկումների իրավական հետևանքներ, հավատարմագրման տեսակներն ըստ ժամկետների, միջազգային հավատարմագրման արդյունքների ազգային ճանաչում:

Պետության կողմից Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների պետական ճանաչման համար ՀՀ ԿԳՄՍ-ն վավերացնում է հավատարմագրման հավաստագիրը՝ ապահովելով պետական մարմինների կողմից հավատարմագրման արդյունքների ամբողջական ճանաչումը: Հավատարմագրման որոշման ճանաչումը պետության կողմից ապահովվում է [«ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի»](#) և այլ կարգավորող փաստաթղթերի համաձայն և հավատարմագրման հետևանքների սահմանմամբ: Մասնավորապես՝ պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում միայն հավատարմագրված բուհերը: Չհավատարմագրված բուհերի ուսանողները չեն կարող շարժունություն ունենալ հավատարմագրված բուհեր և հակառակը: Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում բուհերը չեն կարող բացել նոր մասնագիտական կրթական ծրագիր:

Շահակիցները գործակալությանը քաղաքականությունների մշակման և իրականացման բոլոր գործընթացների հիմնական մասնակիցներն են: ՈԱԱԿ-ը շահակիցների հետ պարբերական հանդիպումները և նրանց ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում ապահովելը դիտարկում է իր գործունեության պլանավորման պարտադիր մաս, նմանատիպ միջոցառումներն են՝ ընթացիկ հանդիպումներ և քննարկումներ, ֆորումներ, համաժողովներ, ֆոկլուս խմբեր և այլն: Շահակիցների կարծիքով ՈԱԱԿ-ը ծառայում է լավ փորձի փոխանակման, մարտահրավերներին նորարարական լուծումների փնտրման և որակի ապահովման համակարգի ընթացիկ միտումների մասին հաղորդակցվելու հարթակ:

ՈԱԱԿ-ը հավասարապես է վերաբերվում ՀՀ-ում գործող բոլոր հաստատություններին: Բոլոր հաստատություններին տրամադրվում է նույն տեղեկատվությունը և իրականացվում են կարողությունների ձևավորմանն ուղղված նույն վերապատրաստումները:

5.3 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3 ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Չափորոշիչ

Գործակալությունները պետք է լինեն անկախ և գործեն ինքնուրույն: Նրանք պետք է կրեն ամբողջական պատասխանատվություն իրենց գործողությունների և դրանց վերջնարդյունքների համար՝ առանց երրորդ կողմի միջամտության:

Կազմակերպական անկախություն

Կանոնադրության համաձայն՝ ՈԱԱԿ-ը մասնագիտական ուսումնական հաստատություններից, ԿԳՄՄՆ-ից և երրորդ կողմից անկախ հիմնադրամ է: ՈԱԱԿ-ի կազմակերպական անկախությունը որոշվում է հիմնադրամի իրավական կարգավիճակով, որն ինստիտուցիոնալ կառավարվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Հոգաբարձուների խորհուրդը կազմված է շահակիցների տարբեր խմբեր ներկայացնող 12 անդամներից՝ գործատուներ, կառավարության ներկայացուցիչներ, համալսարանների գիտնականներ, գործատուների միության ներկայացուցիչներ, ուսանողներ՝ ապահովելով կառույցի անկախությունը և հակակշիռների առկայությունը: Հոգաբարձուների խորհրդի թեկնածուներին առաջարկում են պետական մարմինները, բուհերը, գործատուների միությունը և այլ կազմակերպություններ: Թեկնածուների ցանկը քննարկվում ու հաստատվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից: Խորհրդի աշխատանքները կազմակերպելու և նիստերը վարելու համար խորհրդի առաջին նիստում անդամների կողմից ընտրվում է խորհրդի նախագահը: Հոգաբարձուների խորհրդի դերն ու պարտականությունները ամրագրված են կանոնադրությամբ:

Խորհրդի անկախությունն ամրապնդելու համար ընդունված է, ըստ անհրաժեշտության, ներգրավել միջազգային խորհրդատուների՝ Հոգաբարձուների խորհրդին և ՈԱԱԿ-ի տնօրենին ռազմավարական զարգացումների վերաբերյալ խորհրդակցություններ տրամադրելու համար: Խորհրդատուները խորհրդատվություն են տրամադրում տնօրենի կամ Հոգաբարձուների խորհրդի պահանջից ելնելով:

Միջազգային մոտեցումը գործակալությանը տրամադրվում է միջազգային փորձագետների արձագանքների միջոցով, ովքեր ներգրավված են փորձագիտական խմբերում, յուրաքանչյուր փորձագիտական զեկույցում առկա է հատուկ հատված, որտեղ ներկայացվում է հավատարմագրված հաստատության վերաբերյալ միջազգային մոտեցումը: Ինչ վերաբերում է գործակալության գործադիր ղեկավարությանը, հիմնադրամի տնօրենն ընտրվում է հրապարակային մրցույթով:

[ՀՀ հիմնադրամների մասին օրենքով](#) սահմանված իրավական կարգավիճակով և ՈԱԱԿ-ի կանոնադրությամբ է պայմանավորված նախատեսված նպատակներին համապատասխան գույք ձեռք բերելու և օգտագործելու իրավունքը: ՈԱԱԿ-ի ֆինանսական քաղաքականության հետ մեկտեղ սա մեծացնում է ֆինանսական անկախությունը՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսական աղբյուրները:

Լինելով ՀՀ-ում պետական հավատարմագրում իրականացնող միակ գործակալությունը՝ ՈԱԱԿ-ը ֆինանսավորվում է պետության կողմից, ստանում է վճարներ հավատարմագրման գործընթացներից, որն ապահովվում է գործակալության կայունությունը, ինչպես նաև ձեռք է բերում որոշակի ֆինանսական մուտքեր միջազգային նախագծերից: Կուտակված գումարը, որը հավասար է գործակալության տարեկան բյուջեին, դրվում է բանկում որպես պահպանման ֆոնդ:

Գործառնական անկախություն

ՈԱԱԿ-ն անկախ է արտաքին գնահատման, աշխատակազմի և փորձագետների ընտրության և հավաքագրման հարցերում: Աշխատակազմի բոլոր պաշտոնները համալրվում են բաց մրցույթով կամ ՈԱ հանրային հանդիպումներին, ուսանողական աշխատաժողովներին մասնակցած հնարավոր թեկնածուների դիտարկմամբ: Կադրերի հավաքագրումն ու ընտրությունն իրականացվում է ՈԱԱԿ-ի Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության և ընթացակարգի հիման վրա: Արտաքին փորձագետները հավաքագրվում և ընտրվում են ՈԱԱԿ-ի փորձագետների տվյալների բազայից:

ՈԱԱԿ-ի [Էթիկայի և վարքագծի կանոնները](#) ներկայացնում են էթիկական վարքագծի և երրորդ կողմից անկախության սկզբունքները, ինչպես գործակալության աշխատակազմի, այնպես էլ արտաքին փորձագետների համար:

Լինելով ՀՀ որակի ապահովման ոլորտում քաղաքականության հիմնական մշակողը՝ ՈԱԱԿ-ը պատասխանատու է հաստատությունների և դրանց ՄԿԾ-ների արտաքին գնահատման չափանիշների ու չափորոշիչների սահմանման և մշակման, որակի ապահովման համակարգը կարգավորող փաստաթղթերի համար, որոնք հաստատվում են կառավարության կողմից և դառնում ազգային օրենսդրություն:

ՈԱԱԿ-ը խորհրդակցում է ՈԱ շահակիցների մեծ համայնքի հետ կարգավորող փաստաթղթերի մշակման ընթացքում: ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդը իրավասու է նաև հաստատել կամ ընդունել որակի արտաքին ապահովման իրականացմանն ուղղված իրավական ակտեր: Փորձագիտական խմբերում ներգրավվում են գիտնականներ, գործատուներ, ուսանողներ և միջազգային փորձագետներ, ովքեր ընտրվում են ՈԱԱԿ-ի վերապատրաստված փորձագետների տվյալների բազայից՝ համաձայն հստակ սահմանված ընթացակարգերի (տե՛ս ՈԱԵԶՈԻ 2.4): Միջազգային փորձագետների ներգրավվումն իրականացվում է փորձագիտական խմբի հետ նախապատրաստական հանդիպման ժամանակ, որի ընթացքում ներկայացվում է որակի ապահովման հայկական համատեքստը ներկայացնող փաստաթղթերի փաթեթը:

Յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացի համար ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին է ներկայացնում ընտրված փորձագետների կարճ ցանկը՝ հաստատման նպատակով, այնուհետև համաձայնեցված ցանկից կազմվում է փորձագիտական խումբը: Փորձագիտական խումբը համաձայնեցվում է փորձաքննություն անցնող հաստատության հետ: ՈԱԱԿ-ն ապահովում է փորձագետների անկախությունը շահերի բախման խիստ քաղաքականությամբ: Գործընթացի սկզբում հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են գաղտնիության մասին պարտավորագիր և շահերի բախումը բացառող հայտարարագիր, որը ներառված է փորձագետի պայմանագրում:

Որակի ապահովման մեխանիզմներից է այն, որ հավատարմագրման գործընթացում ներգրավված արտաքին փորձագետները հավատարմագրման գործընթացի ավարտից հետո հարցման մեթոդի միջոցով գնահատում են իրենց անկախությունը փորձաքննության անցկացման և հաշվետվության պատրաստման ընթացքում: Ըստ արդյունքների՝ փորձագետները բավականին անկախ են փորձաքննություն իրականացնելիս և դատողություններ անելիս: Հարցման արդյունքներն ամփոփված են գործակալության կողմից իրականացված համապարփակ վերլուծության մեջ:

Պաշտոնական արդյունքների անկախություն

Հավատարմագրման յուրաքանչյուր ընթացակարգ ավարտվում է անկախ մարմնի՝ ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշումներով: Հավատարմագրման հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է [«ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին»](#) ընթացակարգով, որը վերանայվել և հաստատվել է 2020 թ.՝ հիմնվելով որոշումների կայացման նոր քաղաքականության վրա:

Համաձայն վերանայված կարգավորման՝ Հավատարմագրման հանձնաժողովում ներգրավվում են գիտնականներ, դասախոսներ, հավատարմագրման գործընթացների նախկին փորձագետներ (13 անդամ, որից 10-ը ներկայացնում են բարձրագույն կրթության, 3-ը՝ ՄԿՈԻ համակարգը): Հավատարմագրման հանձնաժողովի թեկնածուներին առաջարկում են ՄՈԻՀ-երը (պետական և մասնավոր) և մասնագիտական միությունները (ներառյալ գործատուների միությունները): ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդը հաստատում է Հավատարմագրման հանձնաժողովի անդամների ցանկը՝ հիմնվելով հանձնաժողովի անդամների փորձագիտական կարողություններ վրա, որոնք անհրաժեշտ են հավատարմագրման վերաբերյալ անաչառ որոշում կայացնելու և շահակիցների շահերը պաշտպանելու համար:

Հավատարմագրման հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները նկարագրված են «ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին» ընթացակարգում: Նաև, շահերի բախումից և այլ էթիկական համատեքստից խուսափելու համար ՈԱԱԿ-ը պայմանագիր է կնքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի հետ՝ սահմանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները:

ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի գործունեության արդյունքը հավատարմագրումների վերաբերյալ կայացված որոշումներն են: Պաշտոնական արդյունքների անկախությունն ամրապնդելու նպատակով ՈԱԱԿ-ը ներդրել է Հավատարմագրման հանձնաժողովի կողմից փորձագիտական գնահատման դիտարկման ձևաթուղթը, որը լրացվում է հավատարմագրման հանձնաժողովի անդամների կողմից յուրաքանչյուր հավատարմագրման փաթեթի ուսումնասիրության արդյունքում: Նոր մոտեցման համաձայն՝ մինչև հավատարմագրման մասին որոշում կայացնելը Հավատարմագրման հանձնաժողովի նախագահը (ով ընտրվել է հանձնաժողովի անդամների կողմից հանձնաժողովի առաջին նիստի օրը) եզրակացությունը պատրաստելու համար կազմակերպում է հանձնաժողովի երեք անդամների ընտրություն: Ընտրված երեք անդամները մանրամասն ուսումնասիրում են հավատարմագրման ողջ գործընթացի փաստաթղթերը (մասնավորապես՝ հաստատությունների ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, հաստատությունների նախնական բարելավման ծրագիրը, որտեղ հաշվի են առնվել փորձագիտական առաջարկությունները), ապա առանձին-առանձին հանդիպումներ են ունենում փորձագիտական խմբերի և ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների հետ՝ չպարզաբանված հարցերը պարզաբանելու և ձևաթղթով պահանջվող արդյունքների ամփոփումը գրելու նպատակով: Հանձնաժողովի բոլոր անդամները նույնպես ուսումնասիրում են գործընթացի փաստաթղթերը: Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ընդունման նիստի ժամանակ երեք անդամները ներկայացնում են իրենց եզրակացությունները, որից հետո բաց քվեարկության արդյունքում կայացվում է հավատարմագրում շնորհելու՝ ըստ տարիների, կամ չշնորհելու մասին որոշում:

5.4 ՈԱԵՉՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉ 3.4 ԹԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Չափորոշիչ

Գործակալությունները պետք է պարբերաբար հրապարակեն զեկույցներ/հաշվետվություններ, որտեղ նկարագրվում և վերլուծվում են որակի արտաքին ապահովման գործունեության հիմնական արդյունքները:

ՈԱԱԿ-ը բարձր է գնահատում թեմատիկ վերլուծությունների պարբերական իրականացումը, և դրա համար տրամադրում է անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: ՈԱԱԿ-ի զարգացման քաղաքականությունը կենտրոնացված է բուհում իրականացվող բարեփոխումներին աջակցելու վրա: Այս նպատակի համաձայն՝ ՈԱԱԿ-ը կուտակում է համակարգի վերաբերյալ արձագանքները և կիսում արդյունքները շահակիցների հետ:

Վերլուծության համար տվյալները վերցվում են տարբեր աղբյուրներից՝ հարցումներ, ֆոկուս խմբային հանդիպումներ, շահակիցների հետ կլոբ-սեղան քննարկումներ, միջոցառումներ ու ֆորումներ, հավատարմագրման գործընթացներ: Վերլուծության թեմաների ընտրությունը հիմնված է շահակիցների հետ քննարկումների և հավատարմագրման գործընթացներից բացահայտված միտումների վրա:

Հավաքված տվյալները և վերլուծությունները, որոնք ամփոփում է բարձրագույն կրթության համակարգի մարտահրավերներն ու միտումները, աջակցում է քաղաքականության փաստաթղթերի մշակմանը և բարելավմանը ինչպես գործակալության, այնպես էլ համակարգի մակարդակով՝ առաջարկություններ ներկայացնելով պետական մարմիններին և բացահայտելով տարբեր միջազգային նախագծերի ուղղությունները: Վերլուծություններից ստացված տեղեկատվությունը մեծ նշանակություն ունի գործակալության և համակարգի համար որոշումներ կայացնելու տեսանկյունից: Թեմատիկ վերլուծությունների ուղղություններն են.

- **Հավատարմագրում.** համապարփակ վերլուծությունը, որն իրականացվում է երեք տարին մեկ, ամփոփում է հավատարմագրման գործընթացների արդյունքները և տրամադրում տվյալներ գործընթացի արդյունավետության վերաբերյալ՝ հավաստիացնելով, որ հավատարմագրման գործընթացը բարելավման հուսալի գործիք է:
- **Ուսանողների գնահատում.** վերլուծություն «Ուսանողների ձայնը» նախագծի ուսանողների կողմից: Ուսանողները ընտրում են թեմաները՝ ելնելով կրթական համակարգի միտումներից և մարտահրավերներից: Ձեկույցները ծառայում են որպես ուղեցույց գործակալության հետագա զարգացման համար:
- **Միջազգային նախագծեր.** գործակալության աշխատակազմը ներգրավված է ՈԱ բաղադրիչ ունեցող տարբեր միջազգային նախագծերում: Գործակալության քաղաքականությունն է ուղղորդել նախագծերի մշակումը՝ ապահովելու նախագծերի իրականացման կայունությունը: Ծրագրերի արդյունքները հրապարակվում են հաշվետվությունների և վերլուծությունների տեսքով: Վերլուծությունները և հաշվետվություններն ուղղված են Հայաստանում որակի արտաքին ապահովման համակարգի բարելավմանը:

Որոշ ուղղություններ հետևյալ թեմաների շուրջ են.

- Կրթական ծրագրերի համահնչեցումը ՈԱՇ-ին և դրա որակի ապահովումը,
- S2S ոլորտային որակավորումների շրջանակի մշակում՝ գրծատուների ներգրավվածությամբ,
- Կրթության համակարգի երրորդ (դոկտորական) մակարդակի որակի ապահովում,
- Որակի ապահովումը տրանսազգային կրթության համակարգում,
- Անզլերենի դասավանդման ծրագրերի (EMI) որակի ապահովում:

- **ՄԿՈԻ համակարգի գնահատում.** ամփոփվել են փորձնական հավատարմագրման գործընթացի արդյունքները և շահակիների հետ հաղորդակցությունը, մշակվել է քաղաքականություն, որն ուղղորդում է ՄԿՈԻ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումը: ՄԿՈԻ հավատարմագրման համակարգի տվյալները պարբերաբար գնահատվում և ներկայացվում են գործակալության կայքում:
- **Կառավարության կողմից առաջարկվող թեմաներ.** բենչմաքինգ է իրականացվել կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման վերաբերյալ: Արդյունքները ներկայացվել են ՀՀ կառավարություն «YES» նախագծի շրջանակներում:

Համակարգային վերլուծությունը մեկ այլ մեխանիզմ է մասնագիտական կրթության համակարգի վրա հավատարմագրման ազդեցության վերաբերյալ տվյալների հավաքագրման համար: ՈԱԱԿ-ն իրականացրել է երկու համակարգային վերլուծություն: Համակարգային երրորդ վերլուծությունը նախատեսվում է իրականացնել 2022 թ.՝ ըստ ժամանակացույցի:

Պարբերաբար իրականացվող վերլուծության արդյունքները տարածվում են տարբեր ձևաչափերով՝ պրեզենտացիաների ներկայացում համաժողովների ընթացքում, հրապարակումներ ՈԱԱԿ-ի կայքում և քննարկումներ շահակիցների հետ, առաջարկություններ լիազոր մարմիններին:

ՈԱԱԿ-ն իր նոր ռազմավարական ծրագրի շրջանակում առաջնահերթություն է համարում մասնագիտաան կրթության վերաբերյալ տեղեկատվության ընդլայնումը և հանրությանը որակյալ արդյունքների ճշգրիտ և հուսալի ցուցիչների տրամադրումը: Աղյուսակ 7-ում ներկայացված են վերջին հինգ տարիների հրապարակումները և կոնֆերանսները/ֆորումները:

N.	Տարի	Իրադարձություն/վերլուծություն	Նպատակ	Արդյունքների հասանելիություն
Հրապարակումներ				
1.	2021	Համապարփակ վերլուծություն 2018-2020 թթ. ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատում	Համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս 2018-2020 թթ. հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը:	Կայքէջ

2.	2020	ՄԿՈԻ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ մոտեցումները և ակնկալվող արդյունքները	Քաղաքականությունը սահմանում է ՈԱԱԿ-ի ակնկալիքները ՄԿՈԻ հաստատությունների հավատարմագրումից և ցույց է տալիս հավատարմագրման արդյունքները:	Կայքէջ
3.	2020	Համավարակի ազդեցությունը կրթական գործընթացի վրա ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում	Հետազոտության նպատակն է վեր հանել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առցանց տարբերակով ուսուցման թույլ կողմերը, հիմնական խնդիրներն ու դժվարությունները: Հետազոտությունն իրականացվել է «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակում:	Կայքէջ
4.	2019	Ձեռնարկ ՀՀ բարձրագույն կրթության կատարողականի հիմնական ցուցիչների և կատարողականի վրա հիմնված համաձայնագրերի ներդրման համար	Բենչմարքինգն ամփոփում է այլ երկրների փորձի խորը վերլուծությունը, որոնք վերջերս փոփոխություններ են կրել իրենց բարձրագույն կրթության ոլորտում, և որոնք ներկայացրել են կատարողականի հիմնական ցուցիչների և կատարողականի վրա հիմնված համաձայնագրերի համակարգը:	Կայքէջ

5.	2018	<p>Համակարգային խնդիրները Հայաստանի բուհերում. հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձագիտական զեկույցների համեմատական վերլուծություն</p>	<p>Վերլուծությունը հիմնված է փորձագիտական զեկույցների և բարելավման ծրագրերի վրա: Այն բացահայտում է բուհերի խնդիրներն ու լավ փորձը: Վերլուծությունն իրականացվել է «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակում:</p>	Կայքէջ
6.	2018	<p>Համապարփակ վերլուծություն 2015-2017 թթ. ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ</p>	<p>Համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս 2015-2017 թթ. հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը:</p>	Կայքէջ
7.	2018	<p>Հայաստանի Հանրապետությունում դոկտորական կրթության որակի ապահովման չափանիշներ/չափորոշիչներ և ուղեցույց</p>	<p>Վերլուծությունը տալիս է դոկտորական կրթության որակի ապահովման շրջանակի համապարփակ նկարագրությունը:</p>	Կայքէջ
8.	2017	<p>Հայաստանի և Վրաստանի միջպետական բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականության, չափանիշների և ընթացակարգերի մշակման ուղեցույցներ</p>	<p>Փաստաթուղթը սահմանում է միջպետական կրթության որակի արտաքին ապահովման ներդրման շրջանակը:</p>	Կայքէջ

9.	2017	ՄԿԾ-ների միջազգայնացում. հայեցակարգային փաստաթուղթ	Փաստաթղթում ամփոփված են հավատարմագրման փորձագիտական զեկույցներում գնահատված միջազգայնացմանն առնչվող խնդիրները:	Կայքէջ
10	2017	Տարածաշրջանային պետական քոլեջներում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունքների վերլուծություն	Ուսումնասիրությունն ամփոփում է տարածաշրջանային պետական քոլեջներում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունքները: Այն ներառում է քոլեջների վիճակը և հետագա բարելավմանն ուղղված առաջարկությունները:	Կայքէջ
11	2017	ՄԱՀԱԹՄԱ նախագիծը՝ որպես կլաստերային հավատարմագրման փորձ Հայաստանում և Վրաստանում:	Համեմատական հետազոտությունն իրականացվել է փորձնական ծրագրերի հավատարմագրման արդյունքների հիման վրա:	Կայքէջ
12	2017	Գործատուի համատեքստը կրթության մեջ. գործատուի ներգրավվածության շրջանակ:	Հողվածն անդրադառնում է գործատուների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ավելի լավ երկխոսության շրջանակի մշակման կարևորությանը՝ ուսանողների գնահատումը բարելավելու, անհրաժեշտ առաջընթացը և ակնկալվող կրթական վերջնաարդյունքների ձեռքբերումն ապահովելու նպատակով:	Կայքէջ

13	2017	Ուղեցույց ՄԿԾ-ները ՈԱՇ-ին համահնչեցնելու համար	Ուղեցույցը տրամադրում է առաջարկություններ՝ կապված ծրագրի համապատասխանեցման մեթոդաբանական և ընթացակարգային ասպեկտների հետ, և պարունակում է մի քանի գործիքներ, որոնք կարող են հեշտացնել համապատասխանեցման գործընթացը և ստացված համապատասխանեցման գնահատումը:	Կայքէջ
Իրադարձություններ				
1.	2021	Թեմատիկ քննարկում մշտադիտարկում անցած բուհերի ներկայացուցիչների հետ	Հանդիպման նպատակն է գնահատել մշտադիտարկման ազդեցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի և կրթական ծրագրերի բարելավման գործընթացների վրա:	Կայքէջ
2.	2021	Թեմատիկ քննարկում մշտադիտարկված ՄԿՈԻ հաստատությունների ներկայացուցիչների հետ	Հանդիպման նպատակն է գնահատել մշտադիտարկման ազդեցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի և կրթական ծրագրերի բարելավման գործընթացների վրա:	Կայքէջ

3.	2020	Թեմատիկ հանդիպում բժշկական համալսարանների ուսանողների հետ	Բժշկական բուհերի ուսանողների հետ քննարկվել են առցանց կրթության առավելություններն ու թերությունները:	Կայքէջ
4.	2020	Առցանց կրթության որակի ապահովում	ՄՈՒՀ-երի ՈԱ մասնագետների հետ քննարկվել են առցանց կրթության և որակի ապահովման հարցերը:	Կայքէջ
5.	2019	Արցախում տեղի ունեցած «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով համաժողովը	Համաժողովի նպատակն է քննարկել որակավորումների շնորհման և ՄԿԾ-ների իրականացման խնդիրները:	Կայքէջ
6.	2019	«Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով համաժողով	Հանդիպման նպատակն է գնահատել մշտադիտարկման ազդեցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի և կրթական ծրագրերի բարելավման գործընթացների վրա:	Կայքէջ
7.	2019	«ՄԿՈՒ-գործատու համագործակցություն. համատեղ ռազմավարության բանաձև» համաժողով	Համաժողովի նպատակն է քննարկել և բացահայտել գործատու-ՄԿՈՒ համագործակցության շրջանակը:	Կայքէջ

8.	2019	<p>ՈԱԱԿ-ի նախաձեռնություն. բուհերի խնդիրների քննարկում թեյախմության ընթացքում</p>	<p>Որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) մեկնարկել է իր տասնամյակին նվիրված միջոցառումները թեյախմություն-քննարկմամբ, որը տեղի է ունեցել Մատենադարանում: Առաջին անգամ, Կրթության և գիտության նախարարը, ՈԱԱԿ-ի տնօրենը և հոգաբարձուների խորհուրդների ղեկավարները թեյի սեղանի շուրջ քննարկել են բուհերի խնդիրները:</p>	<p>Կայքէջ</p>
9.	2018	<p>«Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» որակի ապահովման ֆորում</p>	<p>Նպատակն է քննարկման առարկա դարձնել հաստատությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչման հարցը:</p>	<p>Կայքէջ</p>
10	2018	<p>Համաժողով՝ նվիրված ՈԱ համակարգի ներդրմանը ՄԿՈԻ հաստատություններում</p>	<p>ՈԱԱԿ-ի կազմակերպած համաժողովի ընթացքում քննարկվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը, խնդիրներն ու հնարավորությունները:</p>	<p>Կայքէջ</p>

11	2018	Երիտասարդ դասախոսների, կարիերայի պատասխանատուների և ուսանողների աշխատաժողով	Միջոցառման նպատակն է հիմքեր ստեղծել երիտասարդ դասախոսների, ուսանողների, գործատուների և կարիերայի կենտրոնների միջև շարունակական հաղորդակցության ապահովման համար:	Կայքէջ
12	2017	«Որակը լսարանում. գնահատման համակարգի քարտեզավում»	Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել որակի ապահովման առկա խնդիրներին, ապագա մարտահրավերներին:	Կայքէջ
13	2017	“Որակի շաբաթ”	Արդեն երրորդ անգամ կազմակերպված Որակի շաբաթի նպատակն էր կրթության ոլորտի ներկայացուցիչների, ղեկավար մարմինների և հասարակության ուշադրությունը կենտրոնացնել որակի ապահովման վրա, քննարկել ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև կիսել լավագույն փորձը և ձևավորել ապագայի ընդհանուր տեսլականը:	Կայքէջ

Աղյուսակ 7. Վերջին հինգ տարիների հրապարակումները և կոնֆերանսները/ֆորումները

5.5 ՈԱԵԶՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.5. ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Չափորոշիչ

Գործակալությունները պետք է ունենան և՛ մարդկային, և ֆինանսական համապատասխան ռեսուրսներ՝ իրենց գործունեությունը ծավալելու համար:

Նյութական ռեսուրսներ

ՈԱԱԿ-ն ունի բավարար ռեսուրսներ ռազմավարական նպատակներն ու որակի արտաքին ապահովման գործընթացների պարբերական իրականացման համար: ՈԱԱԿ-ի՝ որպես որակի արտաքին ապահովման մարմնի ռազմավարական առաջնահերթություններից է գործակալության կարողությունների շարունակական բարելավումը՝ սովորող կազմակերպության սկզբունքի կիրառմամբ:

Հիմնադրման օրից ի վեր ՈԱԱԿ-ը զբաղեցնում է կառավարության կողմից շահագործման տրամադրած 750 մ² տարածքը, այն բավարար է ՈԱԱԿ-ի գործունեության իրականացման համար (ամենօրյա գործունեություն, վերապատրաստուման դասընթացներ, փորձագիտական խմբերի հետ հանդիպումներ, հավատարմագրման հանձնաժողովի նիստեր, «Ուսանողության ձայնը» նախագծի համար հատկացված տարածք):

Գրասենյակները կահավորված են և ունեն անհրաժեշտ հարմարություններն աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար: ՈԱԱԿ-ը տարեկան կտրվածքով իրականացնում է տեխնիկական և համակարգչային բազայի գույքագրում և ըստ անհրաժեշտության թարմացում է ինչպես սարքավորումները, այնպես էլ ծրագրային ռեսուրսները:

Գործակալությունն ունի միջավայր ամենօրյա աշխատանքը և որակի արտաքին ապահովման գործընթացներն առցանց կազմակերպելու համար: Zoom հարթակը հասանելի է վեբինարների անցկացման և թարգմանության գործառույթներով: Գործակալության աշխատակազմը վերապատրաստվել է հարթակն արդյունավետ կիրառելու համար: Բացի այդ, գործակալությունը հնարավորություն է տալիս աշխատակազմին աշխատել տանից՝ ապահովելով նորթութերով:

Ներկայումս ՈԱԱԿ-ը փաստաթղթերի կառավարումն իրականացնում է Office 365-ի միջոցով:

Գործակալությունն ունի Office 365-ի տարեկան բաժանորդագրություն և լիցենզիա: 2018 թ.-ից գործակալության աշխատակազմը արդյունավետ օգտագործում է համակարգը: Հարցման գնահատման արդյունքների համաձայն՝ գործակալության աշխատակազմը գոհ է նյութական ռեսուրսներից և համարում է, որ ունի արդյունավետ միջավայր գործակալության ռազմավարական ծրագրից բխող խնդիրները լուծելու համար:

Մարդկային ռեսուրսներ

ՈԱԱԿ-ը մեծ նշանակություն է տալիս մոտիվացված և բարձր որակավորում ունեցող կադրերի հավաքագրմանը, ովքեր հավատարիմ կլինեն ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավմանը: Գործակալությունը հոգ է տանում աշխատակազմի պլանավորման և մասնագիտացման մասին՝ ընդունված ռազմավարության զարգացումներն արդյունավետ կառավարելու համար: ՈԱԱԿ-ը կարևորում է մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը՝ հետևելով իր քաղաքականությանը և կառավարելով սահմանափակ ռեսուրսներով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Գլխավոր մոտեցումը հիմնական անձնակազմի կառավարումն է մի կողմից բազմագործառնության մոտեցմամբ՝ ապահովելու շրջափուլային հավատարմագրման գործընթացների համակարգման կարողությունները, մյուս կողմից՝ իրականացնելու գործընթացներ, որոնք երաշխավորում են գործակալության կայուն աշխատանքը՝ ըստ կանոնադրության և կառավարության հետ կնքվող ամենամյա համաձայնագրի: Նպատակը աշխատակազմի թվաքանակի արդյունավետ կառավարումն է՝ կախված բեռնվածությունից և հնարավոր ռիսկերի գնահատումից:

ՈԱԱԿ-ը երկու տարվա կտրվածքով գնահատում է աշխատակազմի, համակարգողների, փորձագետների և ուսանող-փորձագետների անհրաժեշտ թիվը: Աշխատակազմի պլանավորմանը զուգահեռ մշակվում է աշխատակազմի մասնագիտական զարգացման ծրագիր: Միևնույն ժամանակ ռիսկերի պատշաճ կառավարման համար կիրառվում է աշխատակազմի աստիճանական ներդրման նոր մեխանիզմ:

ՈԱԱԿ-ը կադրեր է հավաքագրում տարբեր աղբյուրներից.

- «Ուսանողության ձայնը» նախագիծը նաև ՈԱԱԿ-ին մոտիվացված մարդկային ռեսուրս տրամադրող աղբյուր է: Ակտիվ ուսանողները, ովքեր վերապատրաստման դասընթացներ են անցնում նախագծում և ունեն փորձ քանակական և որակական հետազոտական նախագծերում, հրավիրվում են ՈԱԱԿ-ում պրակտիկա անցնելու և որպես դիտորդ մասնակցելու հավատարմագրման գործընթացներին: ՈԱԱԿ-ի տնօրենը ամեն տարի հանդիպումներ է ունենում «Ուսանողության ձայն»-ի հավանական և ներկա անդամների հետ՝ նրանց՝ ՈԱԱԿ-ի թիմում ներգրավվելու հարցում մոտիվացնելու, ինչպես նաև փնտրելու տաղանդներ, ովքեր մոտիվացված են իրականացնել հետազոտություններ կրթության ոլորտում:
- «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագրերի շրջանավարտներ և ուսանողներ: ՈԱԱԿ-ն ամեն տարի կազմակերպում է հանդիպումներ մասնագիտությունների կրթական ծրագրի ուսանողների և շրջանավարտների հետ՝ քննարկելու կրթական համակարգի ընթացիկ միտումներն ու մարտահրավերները, ինչպես նաև ՈԱԱԿ-ում կարիերայի հնարավորությունները: Ուսանողները հնարավորություն ունեն գործակալությունում գրել թեզ/իրականացնել հետազոտական աշխատանք և որպես համակարգողների օգնականներ ներգրավվել հավատարմագրման գործընթացներում: Այս պարագայում գործում է «սովորել կիրառելով» մեթոդը:

- Դասախոսների, բուհերի ՈԱ աշխատակազմի և անկախ փորձագետների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներից հետո ՈԱԱԿ-ը գնահատում է մասնակիցների կարողությունները՝ համաձայն մշակված գնահատման սանդղակի: Մոտիվացված և աշխատանքին նվիրված դասախոսները հրավիրվում են հավատարմագրման գործընթացներում ներգրավվելու որպես փորձագետներ կամ ինտեգրվում են ՈԱԱԿ-ի ընթացիկ աշխատանքներում՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատակիցներ, և ըստ գործակալության կարիքների՝ մասնակցում քաղաքականության փաստաթղթերի մշակմանը:
- Բաց հայտարարություններ տարբեր մասնագիտական սոցիալական ցանցերում:

Քիչ թվով աշխատակազմի և բազմազան պարտականությունների պատճառով գործակալությունն իր հիմնական գործունեությունն իրականացնելիս կիրառում է աշխատակազմի ներգրավման ճկուն մեթոդ: Գործակալությունում աշխատանքը պլանավորվում է ըստ նախագծերի, որոնցից յուրաքանչյուրն ունի մեկ պատասխանատու: Մյուսները ներգրավվում են որպես նախագծերի մշակողներ կամ խորհրդատուներ: Աշխատակազմի յուրաքանչյուր անդամ ունի իր հիմնական պատասխանատվությունը գործակալության բաժիններում: Բացի այդ, աշխատակազմի յուրաքանչյուր անդամ կարող է ներգրավվել մեկ այլ աշխատանքային նախագծում՝ ելնելով իր բեռնվածության և ծրագրի համար անհրաժեշտ փորձառությունից: Բացի հիմնական գործունեությունից, բաժիններն իրականացնում են.

- Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում
- ՄԿՈԻ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում,
- Ծրագրային հավատարմագրում,
- ՄՈԻՀ-երի մշտադիտարկում,
- Շահակիցների հետ հարաբերություններ,
- Որակի ներքին ապահովում,
- «Ուսանողության ձայնը» նախագիծ,
- Նոր մշակումներ:

Յուրաքանչյուր ծրագրի համար ՈԱԱԿ-ը պահանջում է կիրառել ՊԻԳԲ շրջափուլը՝ ծրագրի արդյունավետ գնահատման համար հատուկ ցուցանիշներ ապահովելու նպատակով:

Ներկայումս գործակալությունն ունի 18 աշխատակից: ՈԱԱԿ-ը վարում է վճարովի ծառայությունների պայմանագրերի միջոցով տարբեր ծրագրերում և գործողություններում արտաքին փորձագետների ներգրավման քաղաքականություն:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կատարել հաստիքացուցակում նախատեսված պաշտոններից բխող գործառույթները՝ միաժամանակ ավելի արդյունավետ օգտագործելով աշխատավարձի ֆոնդը և կիրառելով պարբերական խրախուսման համակարգը՝ որպես աշխատակիցների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող միջոց:

Ներկայումս աշխատակազմի 8 անդամ ունի հավատարմագրման գործընթացի համակարգողի կարողություններ և փորձ: Յուրաքանչյուր համակարգող կարող է ղեկավարել տարեկան 5-6 գործընթաց: Այսպիսով, ՈԱԱԿ-ն ունի բավականաչափ կարողություններ տարեկան մոտ 50 հավատարմագրման գործընթաց կառավարելու համար:

Աշխատակազմի մասնագիտական զարգացում

ՈԱԱԿ-ը մեծ ուշադրություն է դարձնում աշխատակազմի պարբերական մասնագիտական զարգացմանը՝ նպաստելով և հնարավորություն ընձեռելով ներգրավվել աշխատակազմի մասնագիտական զարգացմանն ուղղված տարբեր աշխատանքներում, ինչպիսիք են՝ արտասահմանում վերապատրաստումները, վեբինարներին մասնակցությունը և քննարկումները: Գործակալությունում կիրառվում է նաև ներքին սեմինարի մեթոդը տարբեր թեմաների քննարկման և փորձի փոխանակման նպատակով: Փորձի փոխանակման նպատակով աշխատակազմի անդամները նաև կանոնավոր կապի մեջ են տեղացի և միջազգային փորձագետների հետ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի մեկնարկով ՈԱԱԿ-ն անհրաժեշտություն է համարել ուղղորդել հավատարմագրման գործընթացի համակարգողներին՝ ըստ մասնագիտական ոլորտների (բժշկական, ճարտարագիտական, տնտեսական, ռազմական և այլն)՝ տարբեր ոլորտներում լավ փորձը հավաքագրելու և ոլորտային որակավորումների շրջանակի մշակման գործում աշխատակազմի ներգրավվածությունը խթանելու նպատակով:

Ներկայումս գործընթացի համակարգողները ներգրավված են ոլորտային որակավորման շրջանակի մշակման աշխատանքային խմբերում:

Աշխատակազմի կայունությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը սահմանել է միջին աշխատավարձի դրույքաչափը, որը երկրի միջին աշխատավարձից բարձր է: Առավել մանրամասն՝ ստորև բերված աղյուսակում.


Միջին ամսական աշխատավարձին համարժեք վճարումներ	Հայաստանի Հանրապետությունում		ՈԱԱԿ-ում		Տարբերություն +, - (3-2)		Տարբերություն %-ով (4:2*100)
	Դրամ	Եվրո	Դրամ	Եվրո	Դրամ	Եվրո	
<i>1</i>	<i>2</i>		<i>3</i>		<i>4</i>		<i>6</i>
2016	174,445	318	254,161	463	+79,716	145	+45.70
2017	177,817	324	242,046	441	+64,229	117	+36.12

2018	172,727	315	258,384	471	+85,657	156	+49.59
2019	182,673	333	250,361	456	+67,688	123	+37.05
2020	189,716	346	250,828	457	+61,112	111	+32.21

Աղյուսակ 8. ՈԱԱԿ-ի աշխատակազմի միջին աշխատավարձը երկրի միջին աշխատավարձի դրույքաչափի համեմատ

Աղյուսակ 8-ի տվյալները ցույց են տալիս, որ ՈԱԱԿ-ում վերջին 5 տարիների ընթացքում վճարված միջին ամսական անվանական աշխատավարձը միջինում 40%-ով բարձր է Հայաստանում վճարվող միջին ամսական աշխատավարձից:

Գծապատկեր 4.ՀՀ-ում և ՈԱԱԿ-ում վճարվող միջին ամսական անվանական աշխատավարձի համեմատությունը 2016-2020թթ.-...



Վերոնշյալ գրաֆիկը ցույց է տալիս պետական ֆինանսավորումից ստացվող աշխատավարձերի դինամիկան:

ՈԱԱԿ-ը վճարում է հավելյալ աշխատավարձ՝ հիմնվելով տարեկան ծրագրի առաջընթացի և այլ ծառայությունների կատարման վրա: Աշխատավարձի աճը կազմում է մոտ 30%:

ՈԱԱԿ ՈՆԱ-ի և մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիման վրա պարբերաբար անցկացվում են հարցումներ՝ գնահատելու աշխատակիցների բավարարվածությունը գործակալության աշխատանքային միջավայրից և ընդհանուր ղեկավարումից: Վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատակազմի անդամները վստահում են ՈԱԱԿ-ի ղեկավարությանը, բարձր են գնահատում գործակալության աշխատանքային էթիկան և մոտիվացված են կարիերայի զարգացման խթանման հեռանկարներով:

ՈԱԱԿ-ի նախկին աշխատակիցների մեծ մասը հեռացել է ՈԱԱԿ-ից՝ կարիերայի ավելի բարձր մակարդակի վրա հասնելու կամ միջազգային կազմակերպություններում:

Աշխատակազմի գնահատում

Կադրերի վարման քաղաքականության համաձայն՝ ՈԱԱԿ-ն իրականացնում է աշխատակազմի գնահատում՝ հիմնվելով մշակված կարողությունների շրջանակի վրա: ՈԱԱԿ-ի տնօրենը յուրաքանչյուր աշխատակցի վերաբերյալ իրականացնում է SWOT վերլուծություն, բացահայտում աշխատակիցների ուժեղ կողմերն ու վերապատրաստման կարիքները, և ամեն տարի արդյունքները քննարկվում են բաժինների ղեկավարների հետ: Այս մոտեցումն օգնում է աշխատակազմի անդամներին ներկայացնելու այնպիսի հմտություններ, որոնք դեռևս ՈԱԱԿ-ում չեն օգտագործել: 2020 թ. SWOT վերլուծության արդյունքում աշխատակազմի երկու անդամներ ստացել են պաշտոնի առաջխաղացում, և մեկ աշխատակից ներգրավվել է միջազգային նախագծում:

Աշխատակազմի գնահատման մեկ այլ մեխանիզմ են հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացից հետո փորձագետների կողմից լրացված հարցման արդյունքները: Հավատարմագրման գործընթացի համակարգողի աշխատանքը գնահատում են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային փորձագետները: Գնահատման արդյունքները փաստում են համակարգողների բարձր պրոֆեսիոնալիզմի մասին: Փորձագետները նշում են համակարգողների հաղորդակցական, թիմային աշխատանքի հմտությունների և հավատարմագրման գործընթացում ելրոպակական մոտեցումները խթանելու մասին:

Ֆինանսական ռեսուրսներ

ՈԱԱԿ-ն առաջնահերթություն է տալիս ֆինանսական կայունությանը և բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսներին: Հիմնադրված լինելով պետության կողմից և մինևոյն ժամանակ մնալով անկախ՝ ՈԱԱԿ-ը մշակել և իրականացնում է ֆինանսական դիվերսիֆիկացման քաղաքականություն՝ ապահովելու գործակալության ֆինանսական անկախությունն ու կայունությունը:

ՈԱԱԿ-ի ֆինանսական քաղաքականությունը և կանոնադրությունը սահմանում են այն ուղղությունները, որոնցով ձևավորվում են ՈԱԱԿ-ի ֆինանսական հոսքերը.

- բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման համար պետական ֆինանսավորում,
- եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից՝ հավատարմագրում, վերապատրաստում,
- ֆինանսական հոսքեր միջազգային դրամաշնորհային ծրագրերից:

ԵԿԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	2016	2017	2018	2019	2020
		Մասնաբաժին			
Պետական բյուջե	56.6	52.2	59.8	41.2	64.78
Հավատարմագրման վճարներ	15.2	19.5	27.8	43.1	30.00

Վերապատրաստումներ	2.5	1.95	1.6	8.5	0.38
Միջազգային նախագծեր	25.7	24.4	6.8	6.2	3.15
Այլ եկամուտներ	0	1.95	4	1.0	1.68

Աղյուսակ 9. Եկամուտի աղբյուրներ

Եկամուտի աղբյուրների դիվերսիֆիկացման առաջընթացը ներկայացված է Աղյուսակ 9-ում: Նախորդ տարիների համեմատությամբ 2020 թ. պետությունից ստացվող ֆինանսական միջոցներն աճել են՝ պայմանավորված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հավատարմագրման գործընթացն իրականացնելու պետական ֆինանսավորմամբ: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, վերապատրաստման ֆինանսական հոսքերը նվազել են՝ պայմանավորված COVID-19 համաճարակով: Միջազգային նախագծերը պակասել են, սակայն դրանք ՈԱԱԿ-ի զարգացման ուշադրության կենտրոնում են: ՈԱԱԿ-ը միացել է DEQAR CONNECT, EUniQ, Էրազմուս+ SMARTi ծրագրերին և իրականացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կարողությունների ձևավորման նախագիծը ֆրանկոֆոն համալսարանների համար:

ՈԱԱԿ-ն ունի խնայողություններ, որոնք օգտագործվում են որպես պահպանման ֆոնդ՝ համագործակցելով ՀՀ բանկերի հետ: Այն հատուկ տեղ ունի բյուջեում և օգտագործվում է ՈԱԱԿ-ի կարողությունների զարգացման համար:

Ֆինանսական անկախությունը գործակալության առաջնահերթություններից է: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը ձգտում է մշակել և իրականացնել նախագծահենք ֆինանսական կառավարում՝ հիմնված հստակ վերջնարդյունքների վրա:

ՈԱԱԿ-ն ունի պահուստային ֆոնդի կայուն աճ բուհերի և ՄԿՈԻ հաստատությունների յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացից: Պահուստային ֆոնդը հիմնականում օգտագործվում է գործակալության աշխատակազմի, ինչպես նաև միջազգային շուկա դուրս եկած և դրսում աշխատող (outsourced) աշխատակազմի կողմից իրականացվող անհրաժեշտ աշխատանքների համար: Վերջին 10 տարում ՈԱԱԿ-ը կուտակել է ֆոնդ, որը հավասար է կառավարությունից ստացված մեկ տարվա բյուջեի գումարին և կարող է օգտագործվել միայն որևէ արտակարգ իրավիճակում՝ շարունակելու ՀՀ-ում որակի արտաքին ապահովման հիմնական առաքելության շարունակական իրականացումը, ինչպես նաև հնարավոր վերակազմավորումների համար:

5.6 ՈԱԵԶՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.6. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Չափորոշիչ

Գործակալությունները պետք է ունենան որակի ներքին ապահովման գործընթացներ՝ կապված իրենց գործունեության որակի և ամբողջականության սահմանման, ապահովման և բարելավման հետ:

Հիմնադրումից ի վեր ՈԱԱԿ-ը մեծ նշանակություն է տալիս իր ներքին և արտաքին գործընթացների ընդլայնմանն ուղղված կանոնավոր զարգացմանը և գնահատմանը՝ կիրառելով ՊԻԳԲ շրջափուլը: ՈԱԱԿ-ը որակի ներքին ապահովման համակարգում որդեգրել է ներդրումների, գործընթացների և վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցումը:

ՈԱԱԿ-ի գործունեությունը բաժանված է որակի ապահովման տիրույթների: Գործընթացը կառավարելու համար մշակվել են պրոտոկոլներ, որոնք ղեկավարում են յուրաքանչյուր տիրույթի պատասխանատուները: ՈԱԱԿ-ը 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի ներդրմամբ և գնահատված փորձով վերանայել է պրոտոկոլները: Ներկայումս պրոտոկոլներն օպտիմալացված են, որոշ տիրույթներ համատեղ են կառավարվում, ինչպես օրինակ՝ S2S և ռեսուրսների կառավարում, Առաջնորդություն և մարդկային ռեսուրսներ, Քարտուղարություն և Հավատարմագրման հանձնաժողով: Քանի որ մշտադիտարկումը դարձել է կանոնավոր գործընթաց, տիրույթը կառավարվում է առանձին պրոտոկոլով: Այժմ կառավարվում է [որակի ինքն տիրույթ](#):

1. Առաջնորդություն և մարդկային ռեսուրսներ,
2. ՄՈԻՀ-երի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում,
3. ՄՈԻՀ-երի մշտադիտարկում,
4. Քարտուղարություն և Հավատարմագրման հանձնաժողով,
5. Իրավական գործընթացներ,
6. Միջազգային հարաբերություններ,
7. Հաղորդակցություն և հասարակության հետ կապեր,
8. Ռեսուրսների կառավարում և S2S,
9. Որակի ներքին ապահովում,

Պրոտոկոլները սահմանում են յուրաքանչյուր տիրույթի նպատակները, համապատասխան հիմնական գործողությունները, արդյունավետության ցուցիչները, որակի ապահովման գործիքները և գործողությունները: Տվյալների աղբյուրներն են՝ աշխատակազմի պարբերական հանդիպումները, հանդիպումները ներքին և արտաքին շահակիցների /ՈԱԱԿ-ի Կառավարման խորհուրդի, Հավատարմագրման հանձնաժողովի, փորձագետների, ուսանողների, համալսարանի ղեկավարության ներկայացուցիչների, վարչական աշխատակազմի, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ/, հարցումները և ֆոկուս խմբային քննարկումները:

ՈԱԵԶՈՒ-ի հետ համապատասխանությունը պահելու նպատակով պարբերաբար հավաքագրվում են տվյալներ և առաջընթացի ցուցիչներ: Հավաքագրված տվյալների գնահատման արդյունքներն ամփոփված են գործակալության տարեկան հաշվետվության մեջ:

Վերջերս ՈԱԱԿ-ը որոշել է կրճատել հարցումների քանակը և ավելացնել դեմ առ դեմ հաղորդակցության, մտազրուցի և ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը: ՈԱԱԿ-ի աշխատակիցները լրացնում են միայն մեկ հարցում, որը հնարավորություն է տալիս SWOT վերլուծություն կատարել գործակալության զարգացման յուրաքանչյուր ուղղության համար և առաջարկություններ անել: SWOT մեթոդի կիրառումը տալիս է գործակալության գործունեության ընդհանուր պատկերը և հիմք է ստեղծում արդյունավետության գնահատման համար: Այսպիսի վերլուծություններից հետո առաջարկությունները պահպանում են բուն համատեքստը և վերածվում բարելավման գործողությունների:

Որակի ներքին ապահովման գործունեությունը հանգեցրել է հետևյալ արդյունքների.

- Ինստիտուցիոնալ հավատարմագրման բարելավում. հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացից հետո բոլոր շահակիցների և ֆոկուս խմբերի հետ քննարկումների արդյունքում ՈԱԱԿ-ն ամրապնդել է ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում երեք ՄԿԾ-ների գնահատումը: Հավատարմագրման գործընթացում ներդրվել է փորձագետների կողմից առաջադրանքների ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում ՄԿԾ պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ մասնագիտական քննարկումները:
 - Համաձայնակի բռնկմամբ ՈԱԱԿ-ը մեկնարկել է առցանց և հիբրիդային ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը: Վերլուծելով ռիսկերը, միջազգային լավ փորձը, պարբերաբար խորհրդակցելով ԿԳՄՄՆ-ի, փորձագետների և ՄՈԻՀ-երի հետ՝ ՈԱԱԿ-ը ներկայացրել է [«Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգը»](#):
- Կարգավորող փաստաթղթերի բարելավում. ՈԱԱԿ-ը վերանայել և վերջնականացրել է համակարգողի քայլերը հավատարմագրման գործընթացում, ինչպես նաև թարգմանչի և գործընթացի համակարգողների փաթեթները, նախնական գնահատման ձևաչափը և այլն:
- Հավատարմագրման որոշումների կարգավորումների և փորձագիտական զեկույցների բարելավում. որոշումների բարելավումը, փորձագիտական զեկույցները գնահատվում են մշտադիտարկման միջոցով: Գնահատումների արդյունքում վերանայվել է որոշումների ձևաչափը, և բարելավվել են փորձագետների վերապատրաստման դասընթացները:
- Համակարգողների աշխատանքի բարելավում. յուրաքանչյուր գործընթացի համար Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավարը վերահսկում է համակարգողների աշխատանքը և պարբերաբար արձագանքներ տալիս: Տեղացի և միջազգային փորձագետները արձագանքում են համակարգողների աշխատանքին: Արդյունքների համաձայն՝ բարելավվել է համակարգողների փաթեթը:
- Փորձագետների ընտրության և հավաքագրման գործընթացների բարելավում. բարելավվել է փորձագետների ընտրության և հավաքագրման ընթացակարգը: Այժմ հավանական փորձագետների համար առաջադրանքները տրվում են դերախաղի միջոցով: Խմբային քննարկումները հնարավորություն են տալիս մասնակիցներին ցույց տալու իրենց փորձագիտական կարողությունները: Այսպիսով՝ համակարգողները կարողանում են գործնականում գնահատել մասնակիցների գործնական կարողությունները և լրացնել գնահատման թերթիկը հետագա ընտրության համար:

Որակի ներքին ապահովման մոդելը նկարագրված է [ՈԱԱԿ-ի ՈՆԱ քաղականության](#) և ընթացակարգի մեջ: Գործակալության աշխատանքն առաջնորդվում է [ՈԱԱԿ-ի էթիկայի և վարքագծի կանոններով](#): Ներքին աշխատակազմի և արտաքին

փորձագետների ծանոթացնող փաթեթը ներառում է էթիկայի և վարքագծի կանոնները: ՈԱԱԿ-ի համակարգողները պատասխանատու են հավատարմագրման գործընթացում էթիկայի կանոնների պահպանման համար: ՈԱԱԿ-ի էթիկայի և վարքագծի կանոնները սահմանում են աշխատակազմի, փորձագետների, Խորհրդի անդամների, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների և բուհերի ներկայացուցիչների հետ միջանձնային հարաբերությունները պրոֆեսիոնալ և էթիկապես կառավարելու կանոնները: ՈԱԱԿ-ի ղեկավարությունը պարբերական հանդիպումների և քննարկումների միջոցով ապահովում է յուրաքանչյուր աշխատակցի և փորձագետի մասնագիտական և արդյունավետ աշխատանքը՝ աշխատակազմի ներսում բացառելով անհանդուրժողականությունը և խտրականությունը: Հարցումների և քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ խտրականության կամ էթիկայի կանոնների խախտման որևէ դեպք չի գրանցվել:

5.7 ՈԱԵԶՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.7. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՓՈՒԼԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չափորոշիչ

Գործակալությունները պետք է առնվազն հինգ տարին մեկ անգամ անցնեն արտաքին գնահատում, որպեսզի ցույց տան իրենց համապատասխանությունը ՈԱԵԶՈՒ-ին:

ՈԱԱԿ-ը մեծ կարևորություն է տալիս շրջափուլային հիմունքներով արտաքին գնահատում անցնելու գործընթացին: Գործակալության ռազմավարական ծրագիրը և «ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը» նախատեսում են, որ ՈԱԱԿ-ը Եվրոպայում հավատարմագրման արդյունքների թափանցիկությունն ապահովելու համար պետք է իրականացնի արտաքին գնահատում:

ՈԱԱԿ-ը երկրորդ անգամ է ջանքեր գործադրում, ըստ որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցների, բարձրագույն կրթության ոլորտում արտաքին գնահատում անցնելու համար: 2014 թ. ՈԱԱԿ-ն արտաքին գնահատման համար հինգեր ստեղծելու նպատակով սահմանել է տվյալների հավաքագրման, վերլուծության և գործընթացների բարելավման համար համապատասխան մեխանիզմներ: Մեխանիզմները գնահատվել և բարելավվել են առաջին արտաքին գնահատման առաջարկությունների հիման վրա: ՈՆԱ-ի պրոտոկոլները հետևում են գործակալության գործունեության համապատասխանությանը ՈԱԵԶՈՒ-ին:

6. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈԱԵԶՈՒ (ESG) ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ)

6.1 ՈԱԵԶՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ

Չափորոշիչ

Որակի արտաքին գնահատումը պետք է ուղղված լինի Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների՝ (ՈԱԵԶՈՒ) 1-ին մասում նկարագրված որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությանը:

ՈԱԱԿ-ի որակի արտաքին ապահովման քաղաքականությունը խթանում է ՄՈՒՀ-երում որակի ներքին ապահովման համակարգի շարունակական բարելավումը: Որակի արտաքին ապահովման գործընթացները և հաղորդակցության այլ ձևերը ՄՈՒՀ-երի ղեկավարության, վարչական աշխատակազմի, ՈՆԱ ներկայացուցիչների և դասախոսների հետ կենտրոնացած են հաստատությունների զարգացման բարելավման վրա՝ արդյունավետ և վերջնարդյունքահենք որակի ներքին ապահովման համակարգի միջոցով:

Հայաստանում որակի արտաքին ապահովման շրջանակը ներառում է ինստիտուցիոնալ հավատարմագրումը, որը պարտադիր է բոլոր տեսակի ՄՈՒՀ-երի համար, և կամավոր հիմունքով իրականացվող ծրագրային հավատարմագրումը: Համաձայն Հավատարմագրման կարգի՝ ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Ծրագրի մշակման ինստիտուցիոնալ քաղաքականությունը փորձագիտական խմբերի կողմից խորապես ուսումնասիրվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում:

ՄԿԾ-ների բարելավումը և ուսանողակենտրոն ուսումնառությունը ՄՈՒՀ-երում խթանելու նպատակով ՈԱԱԿ-ը ներդրել է որակի արտաքին ապահովման գործիք, որով փորձագետները գնահատում են՝ որքանով են ձեռք բերվում սահմանված կրթական վերջնարդյունքները, որքանով է դրան հանգեցնում ձևավորող գնահատումը, ինչպես է այս գործընթացն ուսումնասիրվում որակի ապահովման տեսանկյունից: Այս մոտեցումն սկսել է կիրառվել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի երկրորդ շրջափուլի մեկնարկին ընդառաջ:

Ուսանողակենտրոն ուսումնառությունը ինստիտուցիոնալ հավատարմագրման ուսումնասիրման առանցքում է: [Փորձագիտական զեկույցներում](#) արտացոլված է, թե ՄՈՒՀ-երը որքանով ունեն մեխանիզմներ՝ ուսանողների ձեռքբերումների որակի ապահովման և ընդհանրապես որակավորումների շնորհման արժանահավատության համար: 2016 թ. ՈԱԱԿ-ը մշակել է փաստաթուղթ՝ [«Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափորոշիչների համահնչեցումը Մաս 1-ի հետ. Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ քարձրագույն կրթության ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար»](#): Քարտեզագրումը ցույց է տալիս ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների համապատասխանությունը ՈԱԵԶՈՒ մաս 1-ին:

Գործակալությունը որակի արտաքին ապահովման գործընթացների հայեցակարգը գնահատելիս ու բարելավելիս հաշվի է առնում ՈԱԵԶՈԻ մաս 1-ի առանձնահատկությունները և գնահատումների ու փորձագետների վերապատրաստման ընթացքում առաջնորդվում է հետևյալ քարտեզագրմամբ:

Աղյուսակ 10-ը ցույց է տալիս, թե ՈԱԱԿ-ի կազմակերպած ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ընթացքում որակի ներքին ապահովումը որքանով է արդյունավետ ուղղված ՈԱԵԶՈԻ մաս 1-ին:

ՈԱԵԶՈԻ 1-ին մասի չափորոշիչներ	Ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ չափանիշներ և չափորոշիչներ	Ծրագրային հավատարմագրման և ՈԱԱԿ չափանիշներ և չափորոշիչներ
1.1. Որակի ապահովման քաղաքականություն	1 (1.1; 1.2; 1.3), 2 (2.1; 2.2; 2.3; 2.5); 4 (4.8); 5 (5.7); 10 (10.1; 10.2; 10.3; 10.4)	7 (7.1; 7.2; 7.4)
<p>Որակի ներքին համակարգի մշակում և ներդրում</p> <p>Գնահատումը կենտրոնացած է նրա վրա, թե արդյոք բուհերն իրականացնում են որակի ներքին քաղաքականություն և ռազմավարություն, որոնք առնչվում են հաստատությունների զարգացման բոլոր ոլորտներին: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը մշակվում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ: Քաղաքականությունն ընդգծում է նրանց շահերը և հրապարակվում կայքում: Որակի ապահովման աշխատանքները ապահովում են անհրաժեշտ տվյալներ ուսանողների ձեռքբերումների վերաբերյալ: Համակարգն աջակցում է բուհերում որակի մշակույթի շարունակական զարգացմանը: Որակի մշակույթը վերջնարդյունքահենք է և հանգեցնում է տարբեր ասպեկտներով ինստիտուցիոնալ որակի ապահովման գործընթացների համակարգային բարելավմանը:</p> <p>Բուհերի ղեկավարության վստահությունը որակի ներքին ապահովման համակարգի նկատմամբ</p> <p>Բուհի ղեկավարությունը վստահում է տվյալահենք որոշումների կայացմանը, հենվում է որակի ներքին ապահովման գործունեության արդյունքների վրա և օգտագործում տվյալները որոշումների կայացման մեջ: Կառավարման համակարգը աջակցում է որակի ապահովմանը և դրա զարգացմանը:</p>		
1.2. Ծրագրերի մշակում և հաստատում	3 (3.1; 3.2; 3.3; 3.4); 6 (6.4); 9 (9.5)	1 (1.1; 1.2; 1.3; 1.4); 3 (3.1; 3.2); 5 (5.1; 5.2; 5.3; 5.4)

ՄԿԾ–ների որակի պլանավորում և կառավարում

Մասնագիտական կրթական ծրագրերը արդյունքահենք են և արտացոլում են ուսանողների և դասախոսական կազմի կարիքները. բոլոր ծրագրերը և դասընթացների նկարագրություններն ունեն հստակ սահմանված կրթական վերջնարդյունքներ՝ կապված ծրագրի վերջնարդյունքների և գնահատման համապատասխան մեթոդների հետ: Պլանավորման գործընթացն իրականացվում է ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավմամբ:

Պլանավորման գործընթացում հիմնական ուշադրությունը ՄԿԾ–ների կրթական վերջնարդյունքների համահնչեցումն է ՈԱՇ–ին: Գործում են համահունչությունն ստուգելու մեխանիզմները: Ուսանողների բեռնվածությունը սահմանվում է ECTS-ի (Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ) սկզբունքներին համապատասխան:

Կրթության կապը հետազոտությունների և ծրագրերի միջազգայնացման հետ

Հետազոտության և միջազգայնացման գործընթացները ՄԿԾ–ների մի մասն են: Ապահովված է կրթության և հետազոտության միջև կապը, ծրագրերում կարևորվում է միջազգային լավ փորձը: Ծրագրի մրցունակությունն ապահովելու նպատակով իրականացվում է բենչմարքինգ:

<p>1.3. Ուսանողակենտրոն ուսումնառություն, դասավանդում և գնահատում</p>	<p>3 (3.2; 3.3); 4 (4.2; 4.6)</p>	<p>3 (3.1; 3.2); 4 (4.1; 4.2; 4.3; 4.4; 4.5)</p>
--	-----------------------------------	--

Ուսանողակենտրոն ուսումնառություն

Բուհերն ունեն քաղաքականություն՝ բոլոր ծրագրերի համար ապահովելու ուսանողակենտրոն ուսումնառություն: Գործի են դրված մեխանիզմներ ու գործիքներ՝ ապահովելու ուսանողների ակտիվ մասնակցությունը դասավանդման և ուսումնառության գործընթացում: Ուսանողները պարբերաբար ստանում են արձագանք իրենց ուսումնառության վերաբերյալ, ինչն ապահովում է առաջադիմությունը և կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունն ապահովում է կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Ուսանողներն ակտիվորեն ներգրավված են այդ գործընթացում, և գնահատման արդյունքները ընդունելի են նրանց համար:

<p>1.4. Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և հավաստագրում</p>	<p>3 (3.1); 4 (4.1; 4.2; 4.5); 5 և 7</p>	<p>1 (1.2)</p>
--	--	----------------

Ուսանողների ընդունելության, առաջադիմության, ճանաչման և ատեստավորման կարգավորումներ

Բուհերն ունեն և իրականացնում են ուսանողների ընդունելության, ձեռքբերումների ճանաչման և ատեստավորման գործընթացների արդյունավետ կառավարման կարգավորումներ:

Բուհերն ունեն կանոնակարգեր՝ գրանցելու ուսանողների ընդունելությունը և առաջադիմությունը, ինչը գրանցվում է ռեգիստրում:

Որակավորումների շնորհում

ՄԿԾ-ները, պրոֆեսորադասախոսական կազմը և ռեսուրսները արդյունավետ կառավարվում են որակավորումների արժանահավատ շնորհումն ապահովելու համար: Շնորհված որակավորումներն արտահայտում են և՛ մասնագիտական ոլորտի, և՛ ՈԱՇ-ի պահանջները, ինչպես նաև համապատասխանում են հետազոտական հմտությունների ձեռքբերման պահանջներին: Ընտրված առաջադրանքների ցանկը նպաստում է ուսանողների մասնագիտական մտածողության զարգացմանը և առաջընթացին:

ՄԿԾ-ների շարունակական բարելավման քաղաքականությունն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

Ուսանողների կարիերայի ուղին

Բուհերն ունեն համապատասխան մեխանիզմներ՝ երաշխավորելու շրջանավարտների համար նախատեսված մասնագիտական ուղին: Բուհերը հավաքում են շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներ՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաև հետևում են նրանց մասնագիտական ուղուն:

1.5. Պրոֆեսորադասախոսական կազմ	5 (5.1; 5.2; 5.3; 5.4; 5.5; 5.6)	2 (2.1; 2.2; 2.3; 2.4)
---------------------------------------	----------------------------------	------------------------

Բուհերն ապահովում են դասախոսական կազմի արդյունավետ հավաքագրումը՝ առաջնահերթություն տալով նրանց կարողություններին, ինչպես նաև հաշվի առնելով դասախոսի համապատասխանությունը ՄԿԾ-ների առանձնահատկություններին: Դասավանդման գործընթացի մի մասն է մասնագիտական դաշտից դասախոսական կազմի ներգրավումը:

Գործում են դասախոսական կազմի կարիքների շարունակական գնահատման մեխանիզմները: Դասախոսների մասնագիտական զարգացումը, նրանց մոտիվացնելը իրականացնելու հետազոտական գործունեություն և գնահատելը նրանց բեռնվածությունը, հիմնականում մասն են կազմում բուհերի որակի ապահովման համակարգի:

1.6. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին	2 (2.1); 4 (4.2; 4.3; 4.4; 4.5; 4.7); 7 (7.1; 7.2; 7.3; 7.4; 7.6)	6 (6.1; 6.2; 6.3)
--	---	-------------------

Բուհերն ունեն բավարար ենթակառուցվածքներ և ռեսուրսներ ՄԿԾ–ներն արդյունավետ իրականացնելու համար: ՄԿԾ–ները, դասախոսական կազմը և տեխնիկական ռեսուրսները ստեղծում են միջավայր՝ ապահովելու ժամանակակից, գործնական հմտություններ ունեցող, ՈԱՇ-ի և գործատուի պահանջներին համապատասխան շրջանավարտներ:

Հաստատության ֆինանսական միջոցները ապահովում են կայունություն, ինչպես նաև հնարավորություն հաղթահարելու առաջ եկած մարտահրավերները: Դիտարկվում է նաև ուսումնական միջավայրի առկայությունը սահմանափակ կարողություններով ուսանողների համար:

Պարբերաբար գնահատվում են աշխատակազմի և ուսանողների կարիքները, պլանավորվում և իրականացվում են համապատասխան միջոցառումներ:

1.7. Տեղեկատվության կառավարում	2 (2.4; 2.5; 2.6; 2.7); 4 (4.2; 4.8); 7 (7.5; 7.7); 8 (8.3)	2 (2.2); 3 (3.3); 7 (7.3)
---------------------------------------	---	---------------------------

Բուհերն ունեն համապատասխան մեխանիզմներ և գործիքներ ՄԿԾ–ների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման և կառավարման համար, ներառյալ ուսանողների հաջողությունները, շրջանավարտների մասնագիտական ուղիները և այլն:

ՈԱ հարցումները չափում են ուսանողների, շրջանավարտների և այլ շահակիցների գոհունակության մակարդակը: Բացի հարցումներից կիրառվում են նաև տեղեկատվության հավաքագրման այլ մեթոդներ, որոնց արդյունքներն օգտագործվում են բարելավումների նպատակով:

Բուհերն ունեն որակավորումների արժանահավատ շնորհման վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ:

1.8. Հանրային տեղեկատվություն	8 (8.1; 8.2; 8.3; 8.4); 10 (10.6)	
--------------------------------------	-----------------------------------	--

Բուհերն ունեն կայքէջեր և ապահովում են ծրագրերի, ուսանողական կյանքի, հաջողության պատմությունների և հաստատությունների վերաբերյալ փաստաթղթերի կանոնավոր թարմացումները: Հաստատություններն ապահովում են բոլոր գործընթացների վերաբերյալ որակական և քանակական տեղեկատվության հրապարակայնությունը և թափանցիկությունը՝ կարևորելով շահակիցներին ամբողջական և վստահելի տեղեկատվության փոխանցումը:

1.9. Ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում և պարբերական վերանայում	3 (3.4; 3.5); 4 (4.2; 4.8)	1 (1.5; 1.6; 1.7); 3 (3.3); 7 (7.3; 7.5)
--	----------------------------	--

Բուհերն ունեն և պատշաճ իրականացնում են ՄԿԾ–ների մշտադիտարկում: Ուսանողների, դասախոսական աշխատակազմի և գործատուների կարիքներն ու արձագանքները պարբերաբար գնահատվում են և հաշվի են առնվում ծրագրերը վերանայելիս:

Բուհերը պարբերաբար վերահսկում են ուսանողների ուսումնառության ինքնավարության աստիճանական բարձրացման համապատասխանեցումը առաջադրանքների բաշխմանը՝ ըստ ուսանողներից ակնկալվող առաջադիմության:

Առաջնահերթություն է պատշաճ և կանոնավոր իրականացվող բենչմարքինգը: ՈՆԱ համակարգն ունի գործող ընթացակարգեր ծրագրերի արդյունավետ գնահատման համար:

<p>1.10. Շրջափուլային որակի արտաքին ապահովում</p>	<p>10 (10.5)</p>	
--	------------------	--

ՀՀ-ում գործող իրավական կարգավորումները պահանջում են պարտադիր ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ (սոր օրենքն ընդունման փուլում է և պահանջում է ծրագրերի պարտադիր շրջափուլային գնահատում): Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչներից մեկը պահանջում է նաև, որ ՈՆԱ համակարգն ապահովի հիմնավոր և բավարար նախադրյալներ ՈԱ արտաքին գնահատման հաջող իրականացման համար:

Աղյուսակ 10. Հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների ուղղվածությունը ՈԱԵԶՈԻ 2015թ.

6.2. ՈԱԵԶՈԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Չափորոշիչ

Որակի արտաքին ապահովումը պետք է այնպես սահմանվի և մշակվի, որ համապատասխանի նպատակների իրագործմանն ու խնդիրների լուծմանը՝ միաժամանակ հաշվի առնելով համապատասխան կարգավորումները: Շահակիցները պետք է ներգրավված լինեն դրա մշակման և շարունակական բարելավման գործընթացներում:

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ուղղված են բուհերում որակի շարունակական բարելավմանը՝ խթանելով ներքին և արտաքին շահակիցների համար ողջ գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

Հավատարմագրման գործընթացների առաջին փուլով ՈԱԱԿ-ը նպատակ ուներ բուհերում ձևավորելու որակի մշակույթ, շահակիցներին ներգրավելու որակի շուրջ երկխոսության մեջ, ստեղծելու հարթակ, որտեղ շահակիցները կհաղորդակցվեն կրթական խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորելու համակարգ, որը ընկալելի և ընդունելի կլինի շահակիցների համար:

Հավատարմագրված բուհերի բարելավման ծրագրի գնահատման նպատակով իրականացված մշտադիտարկման այցերը, պլանավորված պարբերական հանդիպումները շահակիցների հետ և նրանց շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս որակի արտաքին ապահովման գործընթացների մեծ ազդեցությունը բուհերի հետագա ռազմավարական զարգացման վրա:

Գնահատումների արդյունքներով ակնհայտ է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրումն իր ազդեցությունն ունի բուհական բարեփոխումների վրա:

Մասնավորապես.

- բարելավվել են ռազմավարական պլանավորումը և կառավարումը,
- ՄԿԾ-ների գնահատումը դարձել է ամենօրյա աշխատանքի անբաժան մաս,
- մեծ առաջնահերթություն է տրվում ուսանողների գնահատման և առաջադիմության արդյունավետության բարձրացմանը,
- հետազոտական մեթոդները շեշտադրում են դասավանդման և ուսումնառության գործընթացներում,
- ուշադրության կենտրոնում է վերջնարդյունքների միջազգային ճանաչումը,
- տվյալների հավաքագրումը և գնահատումը դարձել է մշակույթ,
- կազմակերպվում են միջոցառումներ նպաստելու դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը,
- բարելավման ծրագրերն ուղղորդում են ռազմավարական զարգացման ուղղությունները բոլոր ինստիտուցիոնալ գործընթացներում:

Վերլուծությունները և ֆոկուս խմբային քննարկումները շահակիցների և Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հետ ցույց են տալիս, որ հավատարմագրման որոշումները և բուհերում բարելավումները հիմնականում հասկանալի ու ընդունելի են ներքին շահակիցների համար: Այնուամենայնիվ, ավելի լայն հասարակությունը դեռևս փաստացի է ընդունում հավատարմագրման որոշումները:

Հաշվի առնելով շահակիցների արձագանքները և ուսումնասիրելով ոլորտը՝ ՈԱԱԿ-ը, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հետ սերտ համագործակցությամբ, մշակել է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի որոշումների կայացման նոր [քաղաքականություն](#):

Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները խմբավորվել են ավելի լայն ուղղություններով և տիրույթներով՝ արդյունքները հասարակության առավել լայն շրջանակին առավել տեսանելի դարձնելու համար:

Մասնավորապես՝ **որակավորումների արժանահավատ շնորհումն ապահովելու տեսակետից** դիտարկվում են հետևյալ 3 չափանիշները.

- Մասնագիտության կրթական ծրագրերը,
- Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմը,
- Ենթակառուցվածքը և ռեսուրսները:

ՄՈՒՀ-ի **տվյալահեղձ որոշումների կայացման** հնարավորությունների տեսանկյունից դիտարկվում են հետևյալ 3 չափանիշները.

- Առաքելությունը և նպատակները,
- Կառավարումը և վարչարարությունը,
- Որակի ներքին ապահովման համակարգը:

Հետագա **զարգացման և բարելավման** տեսանկյունից դիտարկվում են հետևյալ 4 չափանիշները.

- Ուսանողները,
- Հետազոտությունը և զարգացումը,
- Հասարակական պատասխանատվությունը,
- Արտաքին կապերը և միջազգայնացումը:

Հավատարմագրման որոշումները պատրաստվում են այնպես, որ որ ցույց տան, թե յուրաքանչյուր չափանիշների խմբի համար ինչպիսի ակնկալիքներ կան ՄՈՒՀ-ից, բացի այդ, տրվում է նաև խորհրդատվություն, թե ինչին հատկապես ՄՈՒՀ-ը պետք է ուշադրություն դարձնի թերությունների վերացման ծրագրում: Ինչպես նաև պարզեցվել է օգտագործվող տերմինաբանությունը՝ ապահովելով որոշումների հասկանալի լինելը հասարակության լայն շրջանակի համար:

Ծրագրային հավատարմագրում

Հավատարմագրման կարգը սահմանում է ծրագրային հավատարմագրման որակի չափանիշները: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է և նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Հայաստանում ծրագրային հավատարմագրումը դեռևս պարտադիր չէ: Բուհերը դիմում են ինստիտուցիոնալ հավատարմագրման, սակայն չեն դիմում ծրագրային հավատարմագրման համար ՄԿԾ-ների մեծ քանակի պատճառով: Բուհերը ֆինանսական խնդիրների պատճառով չեն կարողացել հոգալ բոլոր ՄԿԾ-ների հավատարմագրման ծախսերը: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ բուհերն իրականացնում են ծրագրերի վերանայում իրենց ներքին ընթացակարգերով և զուգահեռ օպտիմալացնում են ծրագրերի քանակը: Բուհերն ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում հաշվետու են որակավորումների արժանահավատ շնորհման և ՄԿԾ-ների արդյունավետության համար: ՄԿԾ-ների վերլուծություններն իրականացնում են ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ՝ հաշվի առնելով գործատուների կարիքները:

Որպես ինստիտուցիոնալ հավատարմագրման ազդեցության հետևանք՝ շահակիցները նշում են, որ ՄԿԾ-ները դարձել են արդյունքահեղձ, բարելավվել է ուսանողների գնահատման գործընթացը:

Ներկայումս «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունմամբ ծրագրային հավատարմագրումը կլինի պարտադիր, իսկ վեց տարվա շրջափուլում բուհերը կխրախուսվեն իրականացնել իրենց բոլոր ՄԿԾ-ների հավատարմագրումը:

Հավատարմագրումը COVID-19-ի ժամանակաշրջանում

COVID-19-ի բռնկումը նոր մարտահրավերներ առաջ բերեց կրթության համակարգի համար: Հավատարմագրման գործընթացները դադարեցին՝ ռիսկերը գնահատելու և պլանավորելու համար՝ հաշվի առնելով նոր իրավիճակով պայմանավորված մարտահրավերները:

Իրավիճակը գնահատելու և արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է մի շարք հանդիպումներ բուհերի ղեկավարության, փորձագետների, ՈՆԱ ներկայացուցիչների, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հետ: Քննարկումներ են տեղի ունեցել ԿԳՄՄՆ-ի հետ: Հանդիպումներին և քննարկումներին զուգահեռ ուսումնասիրվել է COVID-19-ի տարածմամբ պայմանավորված հավատարմագրման իրականացման միջազգային փորձը: ՈԱԱԿ-ը ՄՈՒՀ-երին որակի ներքին ապահովման հարցում աջակցելու համար ներկայացրել է համավարակային իրավիճակում գործելու [ոլորտային](#) [ուղեցույցներ](#): Ըստ շահակիցների՝ ուղեցույցներն արդյունավետ են եղել և ուղղորդել են ՈՆԱ կենտրոններին իրենց աշխատանքում:

Բացի այդ, առանձնահատկությունները, ռիսկերն ու մեխանիզմները բացահայտելու, առցանց և հիբրիդային հավատարմագրման հուսալի գործընթացներ ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը հարցում է իրականացրել շահակիցների շրջանում: Աշխատաժողովների և հարցումների արդյունքում Հոգաբարձուների խորհրդի կողմից մշակվել, փորձարկվել և ընդունվել է [«Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման»](#) ընթացակարգը: Ընթացակարգը ներառում է իրականացվող գործընթացների նկարագրությունը, որով ՈԱԱԿ-ը և փորձաքննությունն անցնող ՄՈՒՀ-ը պետք է ապահովեն առցանց և հիբրիդային հավատարմագրման իրականացումը:

Առցանց հավատարմագրման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով վերապատրաստումներ են կազմակերպվել փորձագետների, բուհերի ՈԱ պատասխանատուների և ՈԱԱԿ-ի համակարգողների համար: 2020 թ. վերջից ՈԱԱԿ-ն սկսել է իրականացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման առցանց և հիբրիդային գործընթացներ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը ՄԿՈԻ հաստատություններում

Վերլուծելով ՄԿՈԻ ոլորտի տարբեր շահակիցների կարիքներն ու մարտահրավերները՝ ՈԱԱԿ-ն ամփոփել է ՄԿՈԻ հաստատությունների շահակիցների հետ քննարկումների ու փորձնական հավատարմագրման գործընթացների արդյունքները՝ ներկայացնելով ՄԿՈԻ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման քաղաքականությունը: Համաձայն այդ քաղաքականության՝ ինստիտուցիոնալ հավատարմագրումը պետք է դառնա գործիք թափանցիկության, հաշվետվողականության, տեսանելիության, ինքնավարության բարձրացման և որակավորումների ճանաչման համար:

Փաստաթղթում ներկայացված մոտեցումներն ուղղորդում են ՆԿՈԻ հաստատություններին համատեղ ռազմավարություն մշակել տարածաշրջանային գործատուների հետ՝ երկու կողմերից ապահովելով ներդրումներ երկարաժամկետ պլանավորման՝ դասավանդման և ուսումնառության համար: ՈԱԱԿ-ը նպաստում է ՄԿՈԻ

ուրուտի ինստիտուցիոնալ բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, գնահատման համար SWOT վերլուծության իրականացմանը, ինչպես նաև տվյալների պարբերական հավաքագրմանը՝ կառավարման և որոշումների կայացման գործընթացում տվյալահենք մոտեցումը կիրառելով: Քաղաքականության փաստաթուղթը հասանելի է [ՈԱԱԿ-ի կայքէջում](#):

Կարգավորող շրջանակ

ՈԱԱԿ-ի մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը, որը **Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի** բաղկացուցիչ մասն է, մշակվել է 2011 թ. շահակիցների ակտիվ մասնակցությամբ, փոփոխվել է 2015 և 2021 թթ.՝ հիմնվելով քաղաքականություն սահմանող մի շարք և փաստաթղթերի փոփոխությունների վրա: [ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը-ի](#) նախնական տարբերակն այժմ քննարկվում է շահակիցների հետ: Նախատեսվում է, որ ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդը մինչև 2021 թ. վերջը կհաստատի վերանայված ձեռնարկը:

Հավատարմագրման գործընթացի ծախսարդյունավետությունը և ծանրաբեռնվածությունը

ՈԱԱԿ-ը պարբերաբար արձագանքներ է հավաքում հավատարմագրման գործընթացների արդյունավետության և ծախսարդյունավետության վերաբերյալ: Արդյունքների համաձայն՝ բուհերը կարծում են, որ փորձագետների զեկույցներն ու առաջարկությունները օգտակար գործիք են իրենց երկարաժամկետ զարգացման հստակեցման համար: Բուհերը նշել են, որ արտաքին գնահատման արդյունքում ստացված փորձագիտական զեկույցներն արդյունավետ են, քանի որ հիմնված են բուհերի ինքնավերլուծության վրա և փորձագիտական այցերի ընթացքում քննարկվել են տարբեր շահակիցների հետ:

Ինչ վերաբերում է հավատարմագրման վճարներին, հավատարմագրման վճարի դրույքաչափերը մնում են նույնը հավատարմագրման գործընթացների առաջին և երկրորդ շրջափուլերի համար: Սակայն պայմանավորված նրանով, որ բուհերը և փորձագետները փորձ են ձեռք բերել ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլից հետո, հավատարմագրման տարբեր փուլերի աշխատանքային օրերը կրճատվել են, ինչի հետևանքով կրճատվել է հավատարմագրման ընդհանուր գումարը: Հավատարմագրման վճարը դարձել է հաստատությունների պլանավորված բյուջեի մաս: Վարձավճարի վերաբերյալ միակ մտահոգությունը ստացվել է մասնավոր փոքր բուհերից՝ ուսանողների թվի նվազման պատճառով, ինչը հանգեցնում է ֆինանսական խնդիրների:

Հաստատությունները ցույց են տալիս, որ հավատարմագրման ծախսերը ուսանողների հետագա զարգացման և կրթական հուսալի ծառայություններով ներգրավման տեսանկյունից գնահատվում են արդյունավետ:

Ինչ վերաբերում է ծանրաբեռնվածությանը, ըստ բուհերի՝ ընդհանուր առմամբ հավատարմագրման ժամանակացույցով սահմանված ծանրաբեռնվածությունը իրատեսական է եղել: Հավատարմագրման գործընթացի յուրաքանչյուր փուլ բավարար ժամանակ է տրամադրում նախապատրաստվելու համար, ինչպես նշված է բուհերի կողմից համապարփակ վերլուծության մեջ:

6.3 ՈԱԵԶՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Չափորոշիչ

Որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է լինեն վստահելի, օգտակար, նախապես սահմանված, հետևողականորեն իրականացվող և հրապարակային: Դրանք ներառում են.

- ինքնավերլուծություն կամ համարժեք գործընթաց,
- արտաքին գնահատում, որը սովորաբար ներառում է փորձագիտական այց,
- արտաքին գնահատման արդյունքում ստացված զեկույց,
- հետևողական բարելավում:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը կարգավորող փաստաթղթերը, առաջնորդող սկզբունքները, չափանիշներն ու չափորոշիչները նկարագրված են ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկում, որը վերանայվել է 2021 թ.՝ հաշվի առնելով նոր մարտահրավերները, «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության» և «Հավատարմագրման հանձնաժողովի կողմից հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականության» մասին վերանայված կարգավորումները: [Ինքնագնահատման ուղեցույցը](#), [ինքնավերլուծության ձևաչափը](#) և [տերմինաբանական բառարանը](#) հասանելի են ՈԱԱԿ-ի կայքում և ուղղորդում են ՄՈՒՀ-երին արտաքին գնահատման գործընթացն իրականացնելիս:

Արտաքին գնահատման գործընթացները կարգավորող այլ հիմնական փաստաթղթերը և ձևաչափերը, ինչպիսիք են [«Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգը»](#), [Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի ձևաչափը](#) և դրա գնահատման սանդղակը, ինչպես նաև փորձագետների կողմից օգտագործվող ձևաչափերը ներկայացված են երկու լեզուներով (անգլերեն և հայերեն) հասանելի են ՈԱԱԿ կայքում և ներքին ցանցում: Երկլեզու փաթեթները պատրաստված են գործընթացի համակարգողների, թարգմանիչների, տեղացի և միջազգային փորձագետների համար: Բոլոր փաթեթները հասանելի են ՈԱԱԿ-ի ներքին ցանցում:

Հավատարմագրման ողջ գործընթացը երկլեզու է (հայերեն և անգլերեն): Հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացից հետո ՄՈՒՀ-երի, տեղացի, միջազգային փորձագետների և հավատարմագրման գործընթացի համակարգողների շրջանում անցկացվում են հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ՝ գնահատելու գործընթացի արդյունավետությունն ու բացահայտելու բարելավման ուղիները:

Ե՛վ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են հետևյալ փուլերով.

Դիմում–հայտ հավատարմագրման գործընթաց անցնելու համար

ՄՈՒՀ-երը դիմում են հավատարմագրման գործընթաց անցնելու համար՝ լրացնելով [դիմում-հայտը](#), որը հասանելի է ՈԱԱԿ-ի կայքում: ՄՈՒՀ-երը նաև ներկայացնում են լիցենզիաները, ՄԿԾ-ների մասին տվյալները, ուսանողների թիվը: ՄՈՒՀ-ի դիմումն ընդունելու պայմաններից մեկն է էլեկտրոնային առցանց հարցաշարի լրացումն է: Էլեկտրոնային առցանց հարցաշարը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://forms.anqa.am>: Հարցաշարը լրացնելու համար պատրաստվել է [նուլեցույց](#): Հարցաշարը ներառում է բոլոր ՄԿԾ-ների տվյալները, յուրաքանչյուր ծրագրի ուսանողների թիվը, դուրս մնացածների տոկոսը, շրջանավարտների զբաղվածությունը, դասախոսների թվաքանակը և մասնագիտական ուղղվածությունը, ՄՈՒՀ-ի բյուջեն և այլն: Համաձայն ՄՈՒՀ-երի արձագանքների և [համապարփակ վերլուծության](#)՝ դիմելու գործընթացը պարզ է, իսկ առկա ձևանմուշները արդյունավետ են կիրառման համար:

Ինքնավերլուծություն

Օգտագործելով հավաքագրված տվյալները՝ ՄՈՒՀ-երը տարբեր գործընթացների արդյունավետությունը ցույց տալու համար իրականացնում են ինքնավերլուծություն: Այն կատարվում է ձևաչափի հիման վրա, որը պարունակում է ուղենիշներ յուրաքանչյուր չափանիշի և չափորոշի համար: ՄՈՒՀ-ը ներկայացնում է ինքնավերլուծությունը ինչպես հայերենով, այնպես էլ անգլերենով:

Համաձայն Հավատարմագրման կարգի՝ ՈԱԱԿ համակարգողներն ինքնավերլուծությունն ուսումնասիրում են տեխնիկական, կառուցվածքային և բովանդակային առումներով: ՈԱԱԿ-ն ընդունում կամ վերադարձնում է ինքնավերլուծությունը ՄՈՒՀ-ին՝ հիմնվելով հստակ կարգավորումների վրա:

Վերջին տարիներին, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի երկրորդ շրջափուլի մեկնարկով պայմանավորված, փոփոխվել է ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության ընդհունման ձևաչափը: Հատուկ ուշադրություն է դարձվում, թե ՄՈՒՀ-երը ինչ տվյալային հենք են ներկայացրել յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ, և որքանով է հաստատության կողմից գնահատվել նախորդ հավատարմագրումից հետո գրանցված առաջընթացը:

ՄՈՒՀ-երի հետ իրականացվող ֆոկուս-խմբային քննարկումները և հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ինքնավերլուծության ձևաչափը օգնում է ներկայացնել հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների համաձայն պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը: Շահակիցները նշել են, որ ձևաչափը ՄՈՒՀ-ին հնարավորություն է տալիս գնահատելու տարբեր տիրույթներում արձանագրած առաջընթացը:

Արտաքին գնահատում

Արտաքին գնահատումը ներառում է փորձագետների կողմից իրականացվող նախնական գնահատումը, փորձագիտական այցը և զեկույցների պատրաստումը:

Փորձագետներն իրականացնում են նախնական գնահատում՝ ուսումնասիրելով ինքնավերլուծությունը, հավելվածները, էլեկտրոնային հարցաշարում ներկայացված տվյալները, և բացահայտում են փորձաքննություն անցնող ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև նախնական գնահատման ձևաչափի հիման վրա նախապատրաստում են հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձագիտական այցի ընթացքում: Այցից առաջ պարբերաբար հանդիպումներ են անցկացվում՝ քննարկելու նախնական գնահատման

արդյունքները և նախապատրաստելու փորձագիտական այցի հանդիպումների ժամանակացույցը: Քննարկումներին առցանց միանում են նաև միջազգային փորձագետները:

Հիմնվելով ՈԱԱԿ-ի գնահատման գործընթացների վրա՝ վերջին տարիներին փորձագետները ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում դիտարկվող երեք ՄԿԾ-ներն ուսումնասիրելիս դիտարկում են ուսանողներին տրվող առաջադրադրանքները, դրանց գնահատումը, իրականացում են դասալսումներ և ուսումնասիրում պրակտիկաների իրականացման ընթացքը: Փորձագետներն այցելել են որոշ գործատուների աշխատավայրեր՝ ուսումնասիրելու պրակտիկայի իրականացման հնարավորությունները:

Այսպես փորձագետները նախապատրաստվում են դասավանդվող առարկաների, մասնագիտական մտածողության և ուսանողների առաջընթացի վերաբերյալ փորձագիտական այցի ընթացքում իրականացվող քննարկումներին ՄԿԾ-ների պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ և գնահատում են ուսանողների տարեկան առաջընթացը ոլորտի մասնագետ դառնալու տեսանկյունից:

Առցանց և հիբրիդային հավատարմագրման գործընթացների ժամանակ փորձագետների հանդիպումները և դասալսումներն իրականացվում են Zoom հարթակի միջոցով:

Այս ամենին հաջորդում է փորձագիտական այցը, որը ներառում է հանդիպումներ քննարկում և արտաքին շահակիցների հետ՝ խնդիրները վերհանելու, լավ փորձը բացահայտելու և հետագա զարգացման համար խորհրդատվություններ պատրաստելու համար: Այցը կարող է տևել երեքից հինգ օր՝ կախված ՄՈՒՀ-ի մեծությունից և գործունեության ծավալից: Բացի այդ, փորձագետներն ունենում են առանձին ներքին հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են այցի և լրացուցիչ պահանջված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները: Ռեսուրսների դիտարկումը ևս ներառված է փորձագիտական այցի ժամանակացույցում: Առցանց տարբերակով իրականացվող հավատարմագրումների ընթացքում փորձագիտական այցերն իրականացվում են Zoom-ի միջոցով: ՄՈՒՀ-ը պատրաստում է տեսանյութեր, որտեղ ներկայացված են ռեսուրսները:

Հիբրիդային հավատարմագրման գործընթացի համար տեղացի փորձագետները այցելում են ՄՈՒՀ, իսկ միջազգային փորձագետը միանում է Zoom-ի միջոցով: Տվյալ դեպքում ՄՈՒՀ-ը միջազգային փորձագետի համար պատրաստում է ռեսուրսների մասին տեսանյութեր: Միջազգային փորձագետները կարող են մասնակցել առցանց դասերի կամ այլ գործընթացների, ինչպիսիք են ավարտական քննությունները և այլն:

Փորձագիտական այցի ընթացքում յուրաքանչյուր հանդիպումից հետո ՈԱԱԿ-ը տրամադրում է ներկաներին հարցաթերթիկ՝ գնահատելու հանդիպումների արդյունավետությունը: Յուրաքանչյուր օրվա ավարտին գործընթացի համակարգողները դիտարկում են լրացված հարցումները, քննարկում արդյունքները փորձագետների հետ և արձագանք տալիս փորձագիտական աշխատանքի վերաբերյալ:

Նախնական գնահատման և փորձագիտական այցի արդյունքների հիման վրա փորձագիտական խումբը պատրաստում է զեկույց, որը ներառում է յուրաքանչյուր չափորոշիչի վերաբերյալ փաստեր, յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դիտարկումներ, գնահատում և խորհրդատվություններ:

Զեկույցները համաձայնեցվում են ՄՈՒՀ-երի հետ (առավել մանրամասն՝ Չափորոշիչ 2.6): Փորձագիտական զեկույցի վերաբերյալ ՄՈՒՀ-ի դիտարկումները ուսումնասիրվում են

փորձագիտական խմբի կողմից և քննարկվում փորձագիտական խմբի և ՄՈՒՀ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվող հանդիպման ընթացքում:

Թերությունների վերացման ծրագիր

Փորձագետների առաջարկությունների հիման վրա ՄՈՒՀ-երը պատրաստում են թերությունների վերացման արդյունքահենք ծրագրեր՝ առաջնորդվելով ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված ձևաչափով: Փորձագիտական խումբը գնահատում է, թե որքանով է իրատեսական ծրագիրը նախատեսված ժամկետներում իրականացման տեսանկյունից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի առաջին շրջափուլից հետո ՈԱԱԿ-ը մեկնարկել է թերությունների վերացման ծրագրի ձևաչափի կազմման ընթացակարգի բարեփոխման գործընթացը: Այդ նպատակով գրավոր արձագանք է հավաքվել համապատասխան շահակիցներից (ՄՈՒՀ-եր, փորձագետներ, ՈԱԱԿ-ի աշխատակիցներ)՝ հասկանալու՝ ինչպես հետագայում բարելավել ընթացակարգը: Վերլուծելով արձագանքները՝ ՈԱԱԿ-ը կազմակերպել է տարբեր քննարկումներ շահակիցների հետ: Ե՛վ ՄՈՒՀ-երը, և՛ փորձագետները ներկայացրել են առաջարկներ թերությունների վերացման ծրագրի ձևաչափի բարեփոխման վերաբերյալ: Նրանց առաջարկները քննարկվել և հաշվի են առնվել ՈԱԱԿ-ի կողմից, և ձևաչափը համապատասխանաբար վերանայվել է: Փոփոխության հիմնական շեշտադրումն է եղել պլանավորման մեջ արդյունքահենք մոտեցման ապահովումը:

Որոշման կայացում

Որպես գործընթացի ավարտ՝ Հավատարմագրման հանձնաժողովը որոշում է կայացնում հավատարմագրման վերաբերյալ (տե՛ս չափորոշիչ 2.5): Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները պարունակում են բարելավման ուղղություններ: Այն ՄՈՒՀ-երը, որոնք 6 կամ 4 տարով են հավատարմագրվել, ներկայացնում են թերությունների վերացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հավատարմագրման որոշումից երկու տարի անց, իսկ երկու տարով հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները՝ 6 ամիս հետո: Հաշվի առնելով, որ վեցամյա ժամկետը կարճ է թերությունների վերացման ծրագրի վրա հիմնված միջնաժամկետ արդյունքները ցույց տալու համար, ՈԱԱԿ-ը դիտարկում է համապատասխան փոփոխություններ հավատարմագրման կարգում ներառելու համար:

Հավատարմագրման որոշումներին հաջորդող բարելավման գործընթացի մշտադիտարկումներ

ՈԱԱԿ-ը մշտադիտարկում է իրականացնում հավատարմագրված ՄՈՒՀ-երում՝ նպատակ ունենալով.

- իթանել որակի շարունակական մշակույթը ՄՈՒՀ-երում և դիտարկել ծրագրով նախատեսված գործընթացների առաջընթացը,
- բացահայտել փորձագետների տված խորհրդատվությունների արդյունավետությունը,
- բարեփոխումներ իրականացնելիս քննարկել մարտահրավերները,
- հանդես գալ առաջարկություններով հետագա բարելավման համար:

ՈԱԱԿ-ը վերջին 5 տարիների ընթացքում մշտադիտարկում է իրականացրել 92 բուհերում (հավատարմագրված և չհավատարմագրված): Մշտադիտարկումը ներառում է.

- Թերությունների վերացման ծրագրի և բուհերի հաշվետվության գնահատում՝ հիմք ընդունելով ծրագրի առաջընթացը,

- Մեկօրյա այց բուհ, որը ներառում է հանդիպում ներքին շահակիցների հետ և դասալսումներ (այցը հնարավոր է իրականացնել առցանց),
- Մշտադիտարկման այցի արդյունքների քննարկում բուհերի ղեկավար կազմի հետ այցի ավարտին:

Մշտադիտարկումն անցկացնում է ՈԱԱԿ-ի աշխատակազմից բաղկացած խումբը: Որոշ դեպքերում խմբում ներգրավվում են արտաքին փորձագետներ, ինչը մոտիվացնում է նրանց փորձագիտական վերապատրաստմանը զուգահեռ հավելյալ գործունեություն իրականացնելու: Մշտադիտարկման այցից հետո խումբը պատրաստում է հակիրճ զեկույց:

Մշտադիտարկման արդյունքները պարբերաբար գնահատվում են՝ հասկանալու հավատարմագրման ազդեցությունը բուհերի հիմնական գործընթացների հետագա զարգացման վրա: ՈԱԱԿ-ը ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ է անցկացրել մշտադիտարկված բուհերի շրջանում:

Արդյունքները ցույց են տալիս, որ հավատարմագրման գործընթացներից հետո բուհերը նախաձեռնել են փոփոխություններ ՄԿԾ-ներում, բարելավել են ռազմավարական պլանավորման գործընթացը, ինչպես նաև տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ մշտադիտարկումն օգնել է բացահայտել առաջընթացը զարգացման հետևյալ ոլորտներում.

- ՄԿԾ-ներ, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմ, ենթակառուցվածք և ռեսուրսներ (43%),
- կառավարում և վարչարարություն, առաքելություն և նպատակներ, որակի ներքին ապահովման համակարգ (31%),
- ուսանողներին մատուցվող ծառայություններ, հետազոտություն և զարգացում, հասարակական պատասխանատվություն, արտաքին կապեր և միջազգայնացում (26%):

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում մասնակիցներն ընդգծել են, որ մշտադիտարկումը ծառայել է որպես գործիք՝ վերագնահատելու իրենց աշխատանքը և հետևելու հաջողություններին ու մարտահրավերներին: Շահակիցները նշել են, որ սա հարթակ է, որտեղ ՄՈՒՀ-երն առանց որևէ հետևանքի կարող են քննարկել մարտահրավերները և գտնել լուծումներ: Այս մեթոդը նման է ուսումնասիրության համար ձևավորող գնահատմանը:

6.4 ՈԱԵՉՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4 ԳՈՐԾՐՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

Չափորոշիչ

Որակի արտաքին գնահատումը պետք է իրականացվի արտաքին փորձագետների խմբի կողմից, որում ներառված է նաև ուսանող(ներ):

ՈԱԱԿ-ը մեծ կարևորություն է տալիս փորձագետների համալրման և վերապատրաստման գործընթացների բարելավմանը: Ուստի, ՄՈՒՀ-երի և համակարգողների

շրջանում հարցումներ անցկացնելով՝ գործակալությունը պարբերաբար հավաքագրում է փորձագետների վերապատրաստման դասընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալներ՝ բացահայտելու փորձագետների համալրման և աշխատանքի ուժեղ ու թույլ կողմերը:

Ավելին, գործակալության ռազմավարական ուղղություններից մեկը տարբեր ոլորտներց պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի անդամների և մասնագետների ներգրավմամբ փորձագետների կարողությունների շարունակական զարգացումն է վերապատրաստման դասընթացների, քննարկումների կազմակերպման միջոցով: Փորձագիտական խմբերում ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ ներառյալ կրթության կառավարման և որակի ապահովման մասնագետներ, ՊԴ կազմի անդամներ և միջազգային փորձագետներ:

Փորձագետների համալրում և վերապատրաստում

ՈԱԱԿ-ը տեղացի և միջազգային փորձագետների համար մշակել է էլեկտրոնային տվյալների բազա: Փորձագետների տվյալների բազան ընդլայնելու նպատակով ՈԱԱԿ-ը գործակալության կայքում և սոցիալական ցանցերում պարբերաբար հայտարարում է բաց մրցույթներ: Տեղեկատվությունը տրամադրվում է նաև ՄՈՒՀ-երի տարբեր ստորաբաժանումներին: ՈԱԱԿ-ը տարբեր համաժողովների և ֆորումների ընթացքում ներկայացնում և տարածում է փորձագետների բազայի մասին տեղեկատվությունը: Միջազգային փորձագետների թիվն ավելացնելու նպատակով փորձագետներ առաջարկելու և փորձագետների բազայում փորձագետների մասին տեղեկատվությունը տարածելու համար դիմում է ուղարկվել միջազգային տարբեր կազմակերպություններին և գործակալություններին: ՈԱԱԿ-ի աշխատակիցները շահագրգիռ թեկնածուներին տրամադրել են անհրաժեշտ ուղորդում և աջակցություն փորձագետների տվյալների բազայում գրանցվելու համար:

Այժմ տվյալների բազայում գրանցված է շուրջ 600 տեղացի և միջազգային փորձագետ: Այնուամենայնիվ, ոչ բոլոր գրանցված մասնագետներն են մասնակցել վերապատրաստումներին՝ հավատարմագրման գործընթացում ներգրավման խիստ պահանջներով պայմանավորված:

Տվյալների բազան համալրելուց զատ անհրաժեշտ էր բազմազանեցնել համալրման մեխանիզմները տարբեր մասնագիտություններ և փորձառություն ունեցող մասնագետներ ներգրավելու համար: Մասնավորապես, ՈԱԱԿ-ը փորձագետների վերապատրաստման դասընթացներին հրավիրում է մասնակցելու.

- ՄՈՒՀ-երում ինքնավերլուծության թիմերում ներգրավված մասնագետներին,
- հավատարմագրման գործընթացին մասնակցած մասնագետներին, որոնց առաջարկել են փորձագետները (բավարարվածության հարցումը ներառում է նման հարց),
- ՊԴ կազմի անդամներին, որոնց առաջարկել են ուսանողները,
- մասնագետներին, որոնց առաջարկել են ՈՆԱ-ի ներկայացուցիչները,
- ՈԱԱԿ-ի կազմակերպած կլոր սեղան և թեմատիկ քննարկումներին ակտիվություն ցուցաբերած մասնագետներին,
- փորձագիտական այցերի և ֆոկլուս խմբային հանդիպումների ընթացքում ակտիվություն ցուցաբերած մասնագետներին,
- մշտադիտարկման այցերին ակտիվ մասնակցած մասնագետներին,
- ՈԱԱԿ-ի կազմակերպած տարբեր վերապատրաստման դասընթացներին ակտիվ մասնակցած մասնագետներին,
- ՊԴ կազմի անդամներին, ովքեր պարբերաբար հետազոտում են իրենց դասավանդման փորձը և ունեն լավ փորձ դասավանդման որակի ապահովման և գնահատման նորարարական մեթոդների վերաբերյալ,

- գիտության ոլորտի հայտնի մասնագետներին,
- դասավանդման գործընթացում ակտիվ ներգրավված գործատուներին:

Համալրման մեխանիզմների դիվերսիֆիկացումը նպաստել է մեծ թվով մասնագետների ներգրավմանը փորձագետների տվյալների բազայում և փորձագետների վերապատրաստումների դասընթացներում:

Յուրաքանչյուր տարվա սկզբին ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժինը պլանավորում է տվյալ տարվա համար նախատեսված հավատարմագրման գործընթացները և մատնանշում յուրաքանչյուր գործընթացի համար անհրաժեշտ մասնագիտական ոլորտների կարիքը: ՈԱԱԿ-ը փորձագետների համար կազմակերպում է տարեկան 4-5 վերապատրաստման դասընթաց:

ՈԱԱԿ-ը ներկայացրել է փորձագետների վերապատրաստման դասընթացների համար նոր ծրագիր՝ հաշվի առնելով փորձագետների վերապատրաստումների և հավատարմագրման գործընթացի գնահատումների արդյունքները: Վերապատրաստման ծրագիրը ներառում է դերախաղեր, որոնց ընթացքում վերապատրաստվողներն հնարավորություն ունեն ծանոթանալու իրական ինքնավերլուծության զեկույցի հետ (առանց հաստատության անվանման), պատրաստելու հարցեր և իրականացնելու փորձագիտական այց՝ հանդես գալով որպես փորձագիտական խումբ և հարցեր հղելով ուսանողներին, դասախոսներին: Դերախաղերին մասնակցում են ՈԱԱԿ-ի գործընթացների համակարգողները և «Ուսանողության ձայն» նախագծի ուսանողները:

Այս մեխանիզմն օգնում է վերապատրաստվողներին իրական միջավայրում ծանոթանալու փորձագիտական աշխատանքների առանձնահատկություններին: Վերապատրաստման դասընթացի յուրաքանչյուր փուլից հետո գործընթացի համակարգողները արձագանք են տրամադրում վերապատրաստվողներին: Համաձայն արդյունքների՝ վերապատրաստման ծրագիրը մասնակիցների կողմից գնահատվել է որպես արդյունավետ:

Հաշվի առնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի նոր շեշտադրումը և բուհերում ՄԿԾ-ների բարեփոխումների խթանման անհրաժեշտությունը՝ ՈԱԱԿ-ն առաջարկել է վերապատրաստման ծրագիր, որի համաձայն հավանական փորձագետները ներկայացնում են լավ փորձի օրինակ այն մասին, թե ինչպես են իրենք իրականացնում ՄԿԾ-ների և դասընթացների որակի ապահովումը: ՈԱԱԿ-ի համակարգողները գնահատում են լավ փորձը և պատրաստում հարցեր քննարկման համար: Յուրաքանչյուր մասնակից ունի նաև ներկայացնողին հարց հղելու հնարավորություն: Ակնհայտ էր, որ սեփական փորձը ներկայացնելիս վերապատրաստման մասնակիցները ավելի են ներգրավվում գնահատման գործընթացում և ամրապնդում իրենց գնահատման կարողությունները՝ ընդունելով մյուս մասնակիցների մոտեցումները:

Միևնույն ժամանակ, ապագա փորձագետները զարգացնում են թիմային աշխատանքի կարողությունը, որն օգտակար է հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբերի համար:

Վերապատրաստումներն ավարտվում են յուրաքանչյուր մասնակցի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված արձագանքներով:

Համակարգողները գնահատում են փորձագետների կարողությունները՝ համաձայն սանդղակի: Սանդղակը ներառում է այնպիսի կետեր, ինչպիսիք են.

- նորարարական գիտելիքներ ՄԿԾ-ների որակի ապահովման վերաբերյալ,
- որակի գնահատման զեկույց գրելու հմտություններ,
- ֆորմատիվ հարցերի հղում,
- ներգրավվում քննարկումների մեջ,
- գնահատման վերջնարդյունքահենք մոտեցում,
- և այլն:

Վերապատրաստման մասնակիցները, որոնք դրական են գնահատվում կետերի գերակշիռ մասով, ներառվում են վերապատրաստված փորձագետների տվյալների բազայում: ՈԱԱԿ-ը դասընթացին որպես վերապատրաստող մասնակցած համակարգողների համաձայնության (կոնսենսուսի) սկզբունքով իրականացնում է հավանական փորձագետների խմբային գնահատում և բարձր վարկանիշ ունեցող վերապատրաստվողներին ներառում փորձագետների առավել սեղմ ցանկում:

Ուսանողների համալրումն ու վերապատրաստումն իրականացվում է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակներում: «Ուսանողության ձայն» նախագծը տարեկան 2 կամ 3 անգամ հայտարարում է դիմումների ընդունման մեկնարկ սոցիալական ցանցերում կամ ՈԱԱԿ-ի կայքում: Ուսանող փորձագետների վերապատրաստումները կազմակերպվում են բոլոր գրանցված ուսանողների համար: Վերապատրաստման տևողությունը մոտավորապես երկու ամիս է: Վերապատրաստումները կազմակերպվում են գործակալության տարածքում: ՈԱԱԿ-ի աշխատանքային միջավայրում ուսանողները կարող են գնահատել տարբեր ՄՈՒՀ-երի իրական ինքնավերլուծության զեկույցներ, պատրաստել հարցեր և հարցադրումներ փաստաթղթերի նախնական ուսումնասիրության համար, իրականացնել դերախաղեր, գրել զեկույցներ և գնահատել բուհերի գործունեությունն ուսանողների տեսակետից:

Առավել արդյունավետ աշխատած թեկնածուները ստանում են հավաստագիր և ներառվում ուսանող-փորձագետների տվյալների բազայում: Վերապատրաստումն իրականացնում է «Ուսանողության ձայն»-ի պատասխանատուն, ինչպես նաև ՈԱԱԿ-ի ղեկավարությունը, համակարգողները և փորձագետները:

Փորձագիտական խմբի ձևավորում

Ե՛վ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման գործընթացների փորձագիտական խմբերը բաղկացած են ՊԴ կազմի ներկայացուցիչներից, կրթության կառավարման և/կամ որակի ապահովման մասնագետներից, տարբեր ոլորտների ներկայացուցիչներից և/կամ գործատուներից: Ծրագրային հավատարմագրման համար գործատուների ներգրավվածությունը փորձագիտական խմբում պարտադիր է: Փորձագիտական խմբերը ներառում են մեկ ուսանող ներկայացուցիչ և մեկ կամ երկու միջազգային փորձագետ (հաստատության առաջարկով հնարավոր է՝ երկու միջազգային փորձագետի ընդգրկումը խմբում): Փորձագետներից մեկը պետք է ունենա ՈԱԱԿ-ի հավատարմագրման գործընթացներին որպես խմբի անդամ մասնակցության փորձ:

Հավատարմագրման կարգի համաձայն՝ յուրաքանչյուր հավատարմագրման (թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ ծրագրային) գործընթացի փորձագետների սեղմ ցանկը (7-10 հոգի) հաստատման համար ներկայացվում է Հավատարմագրման հանձնաժողովին: Այնուհետև ընտրվում է փորձագետների ցանկ և ուղարկվում ՄՈՒՀ: Հավատարմագրվող ՄՈՒՀ-ը փորձագետների ցանկին համաձայնություն է տալիս կամ անհամաձայնություն, եթե պարզում է՝ ինչ-որ մեկն ունի շահերի բախում հաստատության հետ:

Սեղմ ցանկը ձևավորվում է վերապատրաստված փորձագետներից՝ հաշվի առնելով ոլորտի տիրապետման համապատասխանությունը երեք ծրագրերին, որոնք հավատարմագրման համար ընտրվել են ՄՈՒՀ-ի կողմից:

Յուրաքանչյուր փորձագիտական խմբի համար ՈԱԱԿ-ը նշանակում է գործընթացի և կազմակերպչական հարցերի համար պատասխանատու համակարգող, որը փորձագիտական խմբի անդամ չէ և չունի որևէ ազդեցություն գնահատման և որոշումների կայացման գործընթացներում:

Հավատարմագրման գործընթացի արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով փորձագետներից մեկն ընտրվում է խմբի ղեկավար:

2011 թ. -ից սկսած 114 տեղացի փորձագետներ, 53 միջազգային փորձագետներ, 61 ուսանող փորձագետներ և 15 համակարգողներ են ընդգրկված եղել հավատարմագրման գործընթացներում: ՈԱԱԿ-ը ձգտում է փորձագետների շրջանում պահպանել սեռային հավասարակշռությունը:

	Մեկ անգամ	Երկու անգամ	Երեք անգամ	Փորձաքննությունում ընդգրկվածների թիվը
Միջազգային փորձագետներ	44	7	2	53
Ուսանող փորձագետներ	60	0	1	61
Տեղացի փորձագետներ	80	22	12	114
Համակարգողներ	7	0	8	15

Աղյուսակ 11. Փորձագետների և համակարգողների ներգրավվածությունը

Էթիկայի կանոններ

Հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացի սկզբում փորձագետները պետք է բացահայտեն մասնագիտական, ֆինանսական և աշխատանքին առնչվող ցանկացած շահ, որը կարող է մեկնաբանվել որպես շահերի բախում: Նրանք պետք է ՈԱԱԿ-ին տեղեկացնեն ցանկացած խնդրի մասին, որը հնարավոր է առաջացնի շահերի բախում հաստատության հետ, և ստորագրեն համաձայնագիր, որով ցանկացած տիպի շահերի բախում բացառվում է: ՈԱԱԿ-ը հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար առաջադրված փորձագետների նկատմամբ որդեգրել է շահերի բախման վերաբերյալ խիստ քաղաքականություն: ՈԱԱԿ-ը մշակել է նաև Էթիկայի և վարքագծի կանոններ, որոնք կարգավորում են փորձագետների վարքագծի և անկախության սկզբունքները: Ֆինանսական անկախությունն ապահովելու համար ՈԱԱԿ-ը յուրաքանչյուր փորձագետի հետ կնքում է քաղիրավական պայմանագիր՝ միջինից բարձր վճարման դրույքաչափով:

Հավանական փորձագետների հետ վերապատրաստումների ընթացքում գործակալությունը ներկայացնում և քննարկում է Էթիկայի և վարքագծի կանոնները:

Փորձագետների աշխատանքի մշտադիտարկում

Փորձագետների աշխատանքը պարբերաբար մշտադիտարկվում և գնահատվում է հավատարմագրման գործընթացի բոլոր փուլերում: Խումբը գնահատվում է ՈԱԱԿ-ի աշխատակազմի (սովորաբար որակի ներքին ապահովման մասնագետի կամ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավարի), հաստատության

(փորձագիտական այցի յուրաքանչյուր հանդիպումից հետո բուհերի ներկայացուցիչները լրացնում են գնահատման ձևաչափը, և օրվա վերջում գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի հետ քննարկում են արդյունքները) և համակարգողի կողմից (փորձագետների գնահատման ձևաթուղթ): Այս գնահատումների արդյունքներն ամփոփվում են [Համապարփակ վերլուծության](#) մեջ, քննարկվում և կիրառվում են հավատարմագրման գործընթացները բարելավելու համար:

6.5 ՈԱԵԶՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉ 2.5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Զափորոշիչ

Որակի արտաքին ապահովման արդյունքում կատարված դատողությունները պետք է հիմնվեն հստակ և հրապարակված չափանիշների վրա, որոնք հետևողականորեն կիրառվում են՝ անկախ նրանից՝ գործընթացը պահանջում է ֆորմալ որոշում, թե ոչ:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը կարգավորվում է ՀՀ Կառավարության կողմից 2011 թ. հաստատված ՄՈՒՀ-երի և դրանց մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման կարգով (Կառավարության N 978-Ն որոշում) և ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով, որը Հավատարմագրման կարգի անբաժանելի մասն է: ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը մշակվել է 2011 թ. և վերանայվել 2015 թ. և 2021 թ.՝ արտաքին շահակիցների (փորձագետներ և ՄՈՒՀ-եր) մասնակցությամբ:

ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը նկարագրում է գնահատման գործընթացի փուլերը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները (Կառավարության N 959-Ն որոշում): Ձեռնարկը նկարագրում է նաև յուրաքանչյուր չափանիշի և նոր քաղաքականության վերաբերյալ հանձնաժողովի որոշումների կայացման գործընթացը՝ հատուկ ուշադրություն դարձնելով որակավորումների արժանահավատ շնորհմանը: Փորձագիտական խմբերը յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դատողություններ անելիս առաջնորդվում են հետևողականության և նպատակին համապատասխանության սկզբունքով՝ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավումները, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերի հավասարակշռությունը:

ՈԱԱԿ-ը գնահատման և հավատարմագրման չափանիշների, չափորոշիչների նույն մոտեցումն է կիրառում Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր ՄՈՒՀ-երի նկատմամբ՝ անկախ ուսանողների քանակից, և տարբերություն չդնելով մասնավոր ու պետական հաստատությունների միջև: Ուղենիշերը, ձեռնարկները և կարգավորող փաստաթղթերը հրապարակված են գործակալության կայքում:

Ինքնավերլուծության ձևաչափը, որը Հավատարմագրման կարգի կարևոր մասն է, ներառում է յուրաքանչյուր չափանիշի և չափորոշիչի վերաբերյալ բացատրությունները, ինչպես նաև յուրաքանչյուր չափորոշիչին առնչվող համապատասխան պահանջները և փաստերը: Փաստաթուղթը հասանելի է ՈԱԱԿ-ի կայքէջում:

Յուրաքանչյուր չափանիշի ցուցիչները մանրամասն ներկայացված են փորձագետների՝ նախնական գնահատման ձևաչափում, որը պարբերաբար թարմացվում է հավաքված փորձառության և փորձագիտական զեկույցների գնահատումների հիման վրա:

ՈԱԱԿ-ն իր շահակիցների հետ պարբերաբար քննարկում է որակի գնահատման ցուցիչները չափանիշների և չափորոշիչների համար՝ ՄՈՒՀ-երի ՈՆԱ պատասխանատուների հետ պարբերական հանդիպումների և փորձագետների վերապատրաստումների, համաժողովների և ֆորումների ընթացքում: Գործընթացների համակարգողների և փորձագետների վերապատրաստման ընթացքում մեծ նշանակություն ունի չափանիշների և չափորոշիչների ընկալումը: ՈԱԱԿ-ը ձգտում է ունենալ գնահատման չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ նույն պատկերացումները և պահել դրանց համապատասխանությունը բուհական համակարգի զարգացման հետ:

Նախքան հաշվետվությունները ՄՈՒՀ-երին ներկայացնելը Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժինը [Փորձագիտական զեկույցների](#) միատեսակ մոտեցում ու մասնագիտական լեզուն ապահովելու համար դիտարկում է բոլոր զեկույցները և հարցերը քննարկում խմբի հետ:

Հավատարմագրման գործընթացի վերջնական արդյունքը ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի որոշումն է. հանձնաժողովն անկախ մարմին է: Հավատարմագրման հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին» ընթացակարգով, որը լրամշակվել է 2020 թ.՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների երկրորդ շրջափուլի մեկնարկով: Փաստաթուղթը հրապարակված է ՈԱԱԿ-ի կայքէջում:

Հավատարմագրման գործընթացի վերջնական արդյունքը ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի որոշումն է, որն անկախ մարմին է: Հավատարմագրման կոմիտեի գործունեությունը կարգավորվում է [«Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին»](#) ընթացակարգով, որը վերանայվել է 2020 թ.՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների երկրորդ փուլի մեկնարկով: Փաստաթուղթը հրապարակված է ՈԱԱԿ-ի կայքէջում:

Որոշումների կայացման անկախությունն ամրապնդելու համար ՈԱԱԿ-ը ներդրել է հավատարմագրման յուրաքանչյուր զեկույցի եզրակացության ներկայացումը: Այս մոտեցմամբ, նախքան որևէ հավատարմագրման մասին որոշում կայացնելը, Հավատարմագրման հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովից ընտրում է երեք անդամ, որոնք ուսումնասիրում են փաստաթղթերի փաթեթը և երկու առանձին հանդիպում անցկացնում փորձագիտական խմբի և կրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ՝ գնահատման հիմք հանդիսացող փաստերը պարզաբանելու նպատակով: Այդ հանդիպումներից հետո երեք անդամները լրացնում են եզրակացության ձևաչափը: Եզրակացությունը ներառում է տեսակետների և չափանիշների վերագնահատման (եթե առկա են) հիմնավորումները, ինչպես նաև հավատարմագրման որոշման եզրակացության հիմնավորված առաջարկությունը: Այս գործընթացը կարող է տևել մինչև երկու շաբաթ:

Գործընթացին զուգահեռ Հավատարմագրման հանձնաժողովի բոլոր անդամները որոշմանը նախապատրաստվելու համար ստանում են հավատարմագրվող հաստատության փաստաթղթերի փաթեթը և սկսում դրանց ուսումնասիրությունը: Կրթական հաստատության հավատարմագրման փաստաթղթերի փաթեթը ներառում է.

- հաստատության ինքնավերլուծությունը,
- փորձագիտական զեկույցը, որը ներկայացնում է ՄՈՒՀ-ի ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերի վերլուծությունը,
- փորձագիտական զեկույցի վերաբերյալ հաստատության դիտարկումները,
- հաստատության թերությունների վերացման ծրագիրը,
- փորձագիտական խմբի գնահատումը հաստատության ծրագրի վերաբերյալ,
- Հավատարմագրման հանձնաժողովի երեք անդամների կողմից պատրաստված եզրակացությունը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում եզրակացություն կատարող երեք անդամները ներկայացնում են իրենց եզրակացություններն ու հիմնավորումները, որոնք քննարկվում են, և բաց քվեարկությամբ կայացվում է հավատարմագրման վերաբերյալ վերջնական որոշումը: Հավատարմագրման հանձնաժողովի քննարկումների և եզրակացության հիման վրա որոշումը պատրաստվում ու համաձայնեցվում է Հանձնաժողովի անդամների հետ:

Հավատարմագրման որոշումը կարող է լինել ստորև նշվածներից մեկը.

- շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 կամ 6 տարի ժամկետով (ծրագրային հավատարմագրման համար՝ 5),
- շնորհել պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով,
- մերժել հավատարմագրումը:

Հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքների, ինչպես նաև շահակիցների և Հավատարմագրման հանձնաժողովի միջև կայացած աշխատաժողովի քննարկումների հիման վրա՝ ՈԱԱԿ-ը վերանայել և ներկայացրել է նոր [Ինստիտուցիոնալ հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությունը](#): Քաղաքականությունը ներկայացնում է որոշումների կայացման ընդհանուր շրջանակը և սկզբունքները: Որակավորումների արժանահավատ շնորհումը վճռորոշ դեր ունի որոշումների կայացման գործընթացում: ՄՈՒՀ-ին հավատարմագրում շնորհելիս Հանձնաժողովը հաշվի է առնում հետևյալ սկզբունքները.

- ՄՈՒՀ-երի ռազմավարությունը՝ ուղղված որակավորումների արժանահավատ շնորհումն ապահովող բոլոր իրականացվող ՄԿԾ-ների որակի շարունակական բարելավմանը,
- ՄՈՒՀ-երի վերջնարդյունքահենք կառավարում, որն ապահովում է կայունություն, բարելավում և զարգացում,
- որակի ներքին ապահովման համակարգի գործարկում, որը որոշումների կայացման համար տվյալներ է հավաքագրում:

Քաղաքականությունը մանրամասնում է, թե ինչպես է Հավատարմագրման հանձնաժողովը հավատարմագրում 6, 4 և 2 տարի ժամկետով կամ մերժում հավատարմագրումը:

[Հավատարմագրման մասին որոշումները](#) հրապարակվում են ՈԱԱԿ-ի կայքէջում: Կայքում հրապարակված են նաև խմբի հաշվետվությունները: Հավատարմագրված հաստատությունների և ծրագրերի մասին տեղեկատվությունը ներառված է ՈԱԱԿ-ի կողմից վարվող [հավատարմագրման պետական գրանցամատյանում](#), ինչը հնարավորություն է տալիս հասանելի լինել հանրությանը և միջազգային կազմակերպություններին:

Հավատարմագրման որոշումների ազդեցությունը գնահատելու համար ՈԱԱԿ-ը տարեկան մշտադիտարկման այցեր է իրականացնում ՄՈՒՀ-եր: Մշտադիտարկումն իրականացվում է կատարված առաջընթացը գնահատելու նպատակով՝ բարելավման ծրագրի և ընթացիկ խնդիրների հիման վրա:

ՄՈՒՀ-երը, որոնք հավատարմագրվում են 6 և 4 տարի ժամկետով, ներկայացնում են հաշվետվություն և բարելավման ծրագիր 2 տարի անց, իսկ 2 տարով հավատարմագրված ՄՈՒՀ-երը՝ հավատարմագրման որոշումից 6 ամիս անց:

6.6 ՈԱԵԶՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉ 2.6 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Զափոքոշիչ

Փորձագետների ամբողջական զեկույցները պետք է հրապարակվեն, լինեն հստակ և հասանելի ակադեմիական հանրությանը, արտաքին գործընկերներին և այլ շահագրգիռ կողմերին: Եթե գործակալությունը զեկույցների հիման վրա որևէ ֆորմալ որոշում է կայացնում, ապա որոշումը պետք է հրապարակվի զեկույցի հետ միասին:

ՈԱԱԿ-ը կարևորում է փորձագիտական զեկույցների որակի շարունակական բարելավումը: Զեկույցների որակը մշտապես ՈԱԱԿ-ի զարգացումների ուշադրության կենտրոնում է: ՈԱԱԿ-ը ՄՈՒՀ-երի, փորձագետների և այլ շահակիցների հետ պարբերական աշխատաժողովներով փորձում է գնահատել փորձագիտական զեկույցների ազդեցությունը ՄՈՒՀ-երի հետագա զարգացման վրա և բացահայտել զեկույցների բովանդակության բարելավման ոլորտները:

Տոկուս խմբային քննարկումների և հարցումների արդյունքների համաձայն՝ բուհերը կարծում են, որ փորձագիտական զեկույցներն օգտակար գործիք են՝ որակի ներքին ապահովման համակարգի հետագա ռազմավարական զարգացման և ամրապնդման համար: Մշտադիտարկման այցերը ՄՈՒՀ-եր մեկ այլ միջոց են հասկանալու՝ որքանով էին փորձագիտական զեկույցներն արժեքավոր, իսկ փորձագետների խորհրդատվությունները՝ տեղին: Վերլուծելով մշտադիտարկման այցերի արդյունքները՝ ակնհայտ էր, որ խորհրդատվություններն օգնել են բուհերին ընդհանուր առմամբ բարելավել որակի ներքին ապահովման համակարգը և մասնավորապես նպաստել են ՄԿԾ-ների գնահատմանը:

Չնայած ՈԱԱԿ-ը պահպանել է զեկույցների հիմնական կառուցվածքը, սակայն բովանդակության շեշտադրումը փոխվել է՝ հիմնվելով ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումների կայացման նոր քաղաքականության ներդրման և մարտահրավերների վրա, որոնք առաջանում են առցանց ու հիբրիդային հավատարմագրման գործընթացներից: Մասնավորապես.

- Բարելավվել է առաջադրված երեք ՄԿԾ-ների գնահատման մեթոդաբանությունը Ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում: Փորձագետները պետք է կարողանան ապահովել համապատասխան տվյալներ ստացված երեք ՄԿԾ-ներից յուրաքանչյուրի համար անցկացվող հատուկ «Մասնագիտական զրույց» հանդիպումներից՝ գնահատելով կրթական վերջնարդյունքները և ուսանողներին

գնահատման նպատակով հանձնարարված առաջադրանքները, ինչպես նաև իրականացնելով դասալսումները և ուսումնասիրելով պրակտիկաները:

- Հիմնվելով ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումների կայացման քաղաքականության վրա՝ փորձագիտական խմբերը ապահովում են տվյալներ՝ ապացուցելու, որ ՄՈՒՀ-երի կողմից շնորհված որակավորումներն արժանահավատ են, կառավարումը վերջնարդյունքահենք է՝ հիմնված գնահատման առանցքային ցուցիչների վրա (ԳԱՑ), և ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգն արդյունավետորեն գործում է:
- Փորձագիտական խմբերն անդրադառնում են նախորդ հավատարմագրումից հետո հաստատության գրանցած առաջընթացին՝ հիմք ընդունելով թերությունների վերացման ծրագիրը:
- Դիտարկվում է, թե ինչպես են բուհը կառավարում COVID-19-ի իրավիճակով պայմանավորված մարտահրավերներն ու ռիսկերը, և որքանով էր արդյունավետ կազմակերպվել և գնահատվել կրթական գործընթացը:

Զեկույցի կառուցվածքը ներառում է.

- **ներածական մաս**, որը ներառում է բուհերի ընդհանուր պատկերը, հաստատության կամ ՄԿԾ-ի հիմնական ուժեղ և թույլ կողմերը, հիմնական խորհրդատվությունները, ինչպես նաև միջազգային փորձագետի կողմից արված գործընկերային գնահատումը, որտեղ շեշտադրվում է բուհի համապատասխանությունը միջազգային բենչմարքին և դրա ինտեգրումը ԵԲԿՏ-ին,
- **ընթացակարգային մաս**, որը ներառում է գործընթացի նկարագրությունը, փորձագիտական խմբի անդամների համառոտ ներկայացումը, ընդհանուր տեղեկատվությունը հաստատության կամ ծրագրի մասին՝ ներառյալ նախապատմությունը և պատմությունը,
- **հիմնական մաս**, որը ներառում է յուրաքանչյուր չափորոշիչի վերաբերյալ բացահայտված փաստերը, ինչպես նաև փաստերից բխող յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դատողությունները, տրվում է եզրակացություն յուրաքանչյուր չափորոշիչի վերաբերյալ՝ գնահատելու, թե արդյոք հաստատությունը կամ ծրագիրը համապատասխանում է յուրաքանչյուր չափանիշի նվազագույն պահանջներին, և գնահատման դիտարկում բոլոր չափանիշների վերաբերյալ՝ հետևությունների ամփոփմամբ,
- **հավելվածներ**, որը ներառում է խմբի անդամների ինքնակենսագրականները, փորձագիտական այցերի օրակարգը, գնահատված փաստաթղթերի և ռեսուրսների ցանկը, կազմակերպական կառուցվածքը (ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում), օգտագործված հապավումների ցանկը:

Մանրամասն նկարագրությունը հասանելի է [ՀՀ մասնագիտական կրթության փորձարկման անցկացման ձեռնարկում](#):

Փորձագիտական հայերեն և անգլերեն զեկույցները՝ ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի հավատարմագրման որոշմամբ, հրապարակվում են գործակալության [կայքում](#) և [Պետական հավատարմագրման գրանցամատյանում](#), որն ավտոմատ կապված է DEQAR-ի տվյալների բազային:

6.7 ՈԱԵՉՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉ 2.7. ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Չափորոշիչ

Դժգոհությունների և բողոքարկման գործընթացները պետք է հստակ սահմանված լինեն՝ որպես որակի արտաքին ապահովման գործընթացների մշակման մի մաս և հայտնի լինեն հաստատություններին:

2019 թ. ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովի, Հոգաբարձուների խորհրդի և ներքին շահակիցների ակտիվ ներգրավմամբ նախաձեռնել է փոփոխություն բողոքարկման ընթացակարգում: Այդ նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ վերլուծելու ՀՀ օրենսդրական դաշտը, հասկանալու պարտավորություններն ու սահմանափակումները, շփվելու համապատասխան շահակիցների հետ և առաջարկություններ ներկայացնելու գործող բողոքարկման ընթացակարգի փոփոխության վերաբերյալ: Բողոքարկման նոր ընթացակարգը ներառվել է [«Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին»](#) վերանայված ընթացակարգում, որը 2020 թ. հաստատվել է ՈԱԱԿ Հոգաբարձուների խորհրդի կողմից:

Վերանայվել են բողոքարկման ընթացակարգի էական կողմերը, մասնավորապես.

- Բողոքարկման ընթացակարգի նախորդ տարբերակով ՄՈՒՀ-երը գնահատման երկրորդ հնարավորություն ունեին նոր փորձագիտական խմբի կողմից և նոր ինքնավերլուծության զեկույցով՝ հիմնված անբավարար գնահատված չափանիշների վրա: Այս մոտեցումը ընդունելի էր հավատարմագրման առաջին շրջափուլի համար, որը հիմնված էր շահակիցների կողմից ստացված արձագանքների վրա: Այս մոտեցման համաձայն երկու բուհեր բողոքարկել են Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը: Վերագնահատման արդյունքները ստանալուց հետո երկու բուհերն էլ դադարեցրել են գործընթացը: Ըստ բողոքարկման ընթացակարգի նոր փոփոխությունների՝ ՄՈՒՀ-երը բողոքարկում են Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները: Ընթացակարգի համաձայն՝ ՈԱԱԿ-ի փորձագետների բազայից ձևավորվում է Բողոքարկման հանձնաժողով: Այնուհետև Հանձնաժողովը քննում է որոշման դեմ ներկայացված բողոքը՝ հասանելի և համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Փաստաթղթերը ներառում են .
 - ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը,
 - Փորձագիտական զեկույցը և զեկույցի վերաբերյալ բուհի առարկությունները,
 - Բարելավման ծրագիրը և բարելավման ծրագրի գնահատումը,
 - Հավատարմագրման հանձնաժողովի երեք անդամների կողմից լրացված եզրակացությունը,
 - Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը:
- Իրավական մակարդակում ամրագրված մյուս կարևոր բարեփոխումը օրինականության, անկողմնակալության և օբյեկտիվության սկզբունքների ներդրումն է, որով էլ առաջնորդվում է Բողոքարկման հանձնաժողովն իր եզրակացությունը կազմելիս: Այս սկզբունքները կիրառվում են, երբ Բողոքարկման հանձնաժողովի որևէ անդամ ունի շահերի բախում բողոքարկման գործընթացում գտնվող ՄՈՒՀ-ի հետ: Տվյալ պարագայում նա դուրս է գալիս բողոքարկման գործընթացից:

- Բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը կազմվում է կոնսենսուսի սկզբունքով: Մա ենթադրում է, որ Հանձնաժողովի բոլոր անդամները համաձայն են եզրակացության հետ, այն իրենց համար միանգամայն ընդունելի է, և նրանք վստահ են եզրակացության մեջ:
- Բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունները լինում են երկու տեսակի.
 - Հանձնաժողովի որոշումը թողնել անփոփոխ՝ մերժելով դիմողի բողոքը,
 - Հետ ուղարկել առաջարկությամբ, որպեսզի Հավատարմագրման հանձնաժողովը նոր որոշում կայացնի:

Բողոքարկման այս բարեփոխումներն ու լրացումները լիովին համահունչ են ՀՀ օրենսդրության տրամաբանությանը՝ կրթական հաստատությանը տալով որոշումները վերադաս մարմնին բողոքարկելու իրավունք և հնարավորություն:

Ներկայումս մեկ բուհ է բողոքարկել է Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը: ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդը, ընթացակարգի համաձայն, ձևավորել է Բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովը ուսումնասիրել է փաստաթղթերը և առաջարկն ուղարկել Հավատարմագրման հանձնաժողով՝ ուսումնասիրելու և նոր որոշում կայացնելու համար: Հավատարմագրման հանձնաժողովը մեկնարկել է «[Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության](#)» ընթացակարգով որոշումների կայացման նոր գործընթացը: Եվ ի վերջո, Հավատարմագրման հանձնաժողովը որոշումը թողել է անփոփոխ: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն այդ մասին ծանուցում է ուղարկել բուհին:

Ինչ վերաբերում է դժգոհություններին, Հավատարմագրման կարգի համաձայն, ՄՈՒՀ-երը հնարավորություն ունեն առարկություններ և մեկնաբանություններ անել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ: Երկու շաբաթվա ընթացքում հաստատությունը պատրաստում և ներկայացնում է իր առարկություններն ու մեկնաբանությունները՝ կապված հաստատության կամ ծրագրի վերաբերյալ ներկայցված փաստերի հետ: Այնուհետև փորձագիտական խումբն ուսումնասիրում է գրավոր պատասխանը և համապատասխան հիմքերի դեպքում համապատասխան փոփոխություններ է կատարում զեկույցում կամ մերժում առարկությունները՝ երկու դեպքում էլ տալով գրավոր բացատրություն:

ՄՈՒՀ-երի և փորձագիտական խմբերի միջև փոխըմբռնումը բարձրացնելու, թափանցիկության և օբյեկտիվության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպում է հանդիպում՝ քննարկելու ՄՈՒՀ-երի առարկություններն ու մեկնաբանությունները:

Համաձայն ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների՝ շահակիցները կարծում են, որ հանդիպումներն արդյունավետ են, քանի որ երկու կողմերը կարող են պարզաբանել և քննարկել փորձագիտական զեկույցի վերաբերյալ ՄՈՒՀ-երի առարկությունները: Այս հանդիպումից հետո փորձագիտական խումբը վերջնականացնում է փորձագիտական զեկույցը:

Փաստաթղթերի փաթեթը՝ ներառյալ հաստատությունների արձագանքները, որոշման համար ուղարկվում են Հավատարմագրման հանձնաժողով:

7. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

ՈԱԱԿ-ի շահակիցների շրջանակը

ՈԱԱԿ-ը կարևորում է իր շահակիցների հետ ակտիվ շփումն ու համագործակցությունը: Գործակալության կարևորագույն նպատակներից է շարունակաբար բարելավել ստեղծված հարթակը, որտեղ շահակիցների տարբեր խմբեր հանդիպում են և քննարկում բարձրագույն կրթության համակարգի մարտահրավերներն ու միտումները:

Վերջերս ՈԱԱԿ-ը նախաձեռնել է նաև հաղորդակցություն երիտասարդ հետազոտողների և դասախոսների հետ՝ ներգրավելու նրանց որակի ապահովման գործընթացներում:

ՈԱԱԿ-ն ունի արտաքին շահակիցների լայն շրջանակ.

- ՀՀ կառավարություն,
- Բարձրագույն ուսումնական հաստատություններ (Հոգաբարձուների խորհուրդ, ՈՆԱ պատասխանատուներ, դասախոսական կազմ),
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ,
- Երիտասարդ հետազոտողներ տարբեր ոլորտներից,
- Հայաստանի մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներ և ապագա ուսանողներ,
- Գործատուներ և գործատուների միություններ,
- Որակի ապահովման միջազգային գործակալություններ,
- Որակի ապահովման գործընթացների և կրթության միջազգային ցանց:

ՈԱԱԿ-ը նաև աջակցում է «**Ուսանողության ձայն**» նախագծին (մեկնարկել է 2011 թ. ՈԱԱԿ-ի կողմից)՝ կոչ անելով ուսանողներին լինել ավելի պահանջատերիբեկ կրթության որակի բարելավման հարցում:

«Ուսանողության ձայնը» նախագծի ռազմավարությունը հետևյալն է.

- բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը կրթական բարեփոխումների վերաբերյալ,
- հետազոտության միջոցով բացահայտել ուսանողներին հուզող հիմնահարցերը,
- շարունակական վերապատրաստումների և քննարկումների միջոցով խթանել ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացներում:

Շահակիցների շրջանում տվյալների հավաքագրմանն հաղորդակցման մեխանիզմներ

Գործակալության հիմնական շահակիցները ներգրավված են քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:

Գործակալության կողմից կազմակերպվող տարեկան համաժողովներն ու ֆորումները, տարեկան երկու անգամ կազմակերպվող «Որակի շաբաթ»-ը շահակիցների հետ հաղորդակցվելու հարթակներ են: ՈԱԱԿ-ն ապահովում է շահակիցների ակտիվ ներգրավվածությունը որակի ապահովման թեմաների վերաբերյալ երկխոսությանը՝ թեմատիկ հանդիպումների, ֆոկուս խմբերի, քննարկումների և գործակալության կողմից իրականացվող հետազոտությունների միջոցով:

Կայքէջը և սոցիալական ցանցերը ծառայում են շահակիցների հետ ակտիվ համագործակցության հարթակ: ՈԱԱԿ-ը շահակիցների տարբեր խմբերից հավաքագրում է կարծիքներ գործակալության հիմնական գործունեության վերաբերյալ.

- Հավատարմագրման գործընթաց,
- ՄՈՒՀ-երի մշտադիտարկումներ,
- Վերապատրաստումներ,
- Համաժողովներ և ֆորումներ:

Այս միջոցառումների մասնակիցները կարևորել են փորձի փոխանակումը այն հաստատությունների միջև, որոնք ունեն նոր ընկալումներ տարբեր գործընթացների վերաբերյալ: Բացի այդ, որպես վերապատրաստման ուժեղ կողմ մասնակիցները նշել են վերապատրաստումների ընթացքում քննարկված գործնական օրինակների բազմազանությունը և վերապատրաստողների բարձր պրոֆեսիոնալիզմը:

Գնահատումների արդյունքները հիմնականում ամփոփվում են գործակալության [տարեկան հաշվետվություններում](#):

Շահակիցների համապարփակ վերլուծությունը և կարծիքը

ՈԱԱԿ-ն իրականացրել է համապարփակ վերլուծություն՝ ամփոփելու և գնահատելու հավատարմագրման գործընթացների արդյունավետությունը (բուհեր, ՄԿՈՒ հաստատություններ) և շարունակաբար բարելավելու այն: Գնահատումը ներառում է.

- Հավատարմագրման գործընթացի հետ կապված թույլ կողմերի և թերությունների բացահայտումը,
- Լավագույն փորձի բացահայտումը,
- Բուն գործընթացի արդյունավետության գնահատումը,
- Կարգավորող փաստաթղթերի ուսումնասիրությունը,
- Բարելավման կարիք ունեցող ոլորտների վերհանումը:

Հետազոտության նպատակներն են՝

- նկարագրել հավատարմագրման ընթացակարգերի առկա վիճակը,
- ստանալ հետադարձ կապ և բացահայտել առկա խնդիրները.
 - փորձագետների վերապատրաստում,
 - ՈԱԱԿ-ի տրամադրած տեղեկատվություն և փաստաթղթերի փաթեթ,
 - բողոքարկման ընթացակարգեր,
 - ինքնավերլուծության ընդունման ընթացակարգ,
 - ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշար,
 - փորձագիտական խմբի կառուցվածք և կազմ,
 - ինքնավերլուծություն,
 - փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն,
 - փորձագիտական այց (այդ թվում՝ առցանց և հիբրիդային ձևաչափով),
 - փորձագիտական զեկույց,
 - ՄՈՒՀ-երի բարելավման ծրագիր,
 - փորձագետների անկախություն,
 - փորձագետ-համակարգող հարաբերություններ,
 - համակարգողների մասնագիտական հմտություններ,
 - համագործակցություն միջազգային փորձագետների հետ,
 - աշխատանքային միջավայր,
 - հավատարմագրման գործընթացի ժամկետներ,
 - տրամադրվող խորհրդատվություն:

Հետազոտության համար կիրառվել է տարբեր մեթոդաբանություն՝ քանակական և որակական (հարցումներ ՄՈՒՀ-երի, փորձագետների և համակարգողների շրջանում, ֆոկլուս խմբային հանդիպումներ փորձագետների, ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների հետ և փորձագետների գնահատում փորձագիտական այցի շրջանակում կայացած յուրաքանչյուր հանդիպումից հետո): Հետազոտությունն իրականացվել է ըստ հաջորդական փուլերի՝ ինքնավերլուծություն, փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն, փորձագիտական այց, փորձագիտական զեկույցի պատրաստում:

Ըստ տեղացի և միջազգային փորձագետների, ինչպես նաև ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների՝ գործակալության գործունեության և համակարգի վրա դրա ազդեցության վերաբերյալ կարծիքների՝ «ՈԱԱԿ-ի գործունեությունը հիմնված է բարեփոխումների վրա, ներառում և նպաստում է երկրում որակի մշակույթի բարելավմանը»: Բոլոր մասնակիցները նշել են համակարգողների և գործակալության աշխատակիցների բարձր պրոֆեսիոնալիզմը: Միջազգային փորձագետներն ընդգծել են, թե ինչպես է ՈԱԱԿ-ն իր ընթացակարգերում ներդրել եվրոպական մոտեցումը:

Առցանց հավատարմագրման գործընթացներին մասնակցող միջազգային փորձագետներն ընդգծել են «Փորձագիտական այցի կազմակերպման հիանալի որակը և հիասքանչ մթնոլորտը, նույնիսկ առցանց միջավայրում»: Կարևորվել են առցանց այցերի ընթացքում տարբեր շահակիցների հետ անմիջական շփումները և խորքային քննարկումները՝ պարզաբանելու այն կետերը, որոնք առաջացել են փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո:

Մանրամասն վերլուծությունը ներկայացված է՝ [Համապարփակ վերլուծություն 2018-2020 թթ. իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատում \(հասանելի է հայերենով\)](#):

Շահակիցների կարծիքը ՄՈՒՀ-երում մշտադիտարկման ազդեցության վերաբերյալ

ՈԱԱԿ-ն իրականացնում է է հարցումներ և մի շարք ֆոկլուս խմբային քննարկումներ՝ պարզելու ՄՈՒՀ-երում մշտադիտարկման արդյունավետության և դրանց զարգացման վրա ազդեցությանը: Ըստ շահակիցների՝ մշտադիտարկման այցերը արդյունավետ գործիք են ՄՈՒՀ-երի գործունեության վերագնահատման համար: Շահակիցները նշել են, որ մշտադիտարկումն օգնել է.

- Ուժեղացնել ներքին կարողությունները,
- Լուծումներ գտնել հետագա զարգացման համար,
- Բարելավել ՄԿԾ-ները և որակի ներքին ապահովման համակարգը:

8. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԾ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հիմնվելով ENQA-ի առաջին գնահատման խորհրդատվությունների վրա, հաշվի առնելով ENQA-ի փորձագիտական խմբի և Խորհրդի առաջարկները՝ ՈԱԱԿ-ը պատրաստել է բարելավման ծրագիր: Բարելավման ծրագրի համաձայն՝ ՈԱԱԿ-ը նախաձեռնել է գործողություններ, որոնք հանգեցրել են գործակալության զարգացմանը տարբեր ուղղություններում:

ՈԱԱԿ-ը 2019 թ. պատրաստել է [բարելավման պլանի հաշվետվություն](#), որն ամփոփում է իրականացված գործունեության հիմնական արդյունքները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ENQA-ի փորձագիտական խմբի յուրաքանչյուր խորհրդատվության համաձայն իրականացված գործողությունները:

Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ (Մաս 3)	
3.1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ	
Խորհրդատվություններ	Գործողություններ
Շատացնել որակի արտաքին ապահովման գործընթացները: Մասնավորապես, զարգացնել կարողությունները՝ ծրագրերը աառեռաբառ անահատեու համար: Մասնավորապես՝ զարգացնել կարողություններ ծրագրերը պարբերաբար գնահատելու համար:	<p>➤ ՈԱԱԿ-ը ձգտում է բարելավել որակի արտաքին ապահովման գործընթացները և զարգացնել կարողությունները ծրագրային հավատարմագրում իրականացնելու համար: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ օրենսդրական դաշտի, ծրագրային հավատարմագրումը դեռևս պարտադիր պահանջ չէ: Հաշվի առնելով սա՝ ՈԱԱԿ-ն առաջարկություն է պատրաստել և ներկայացրել կառավարություն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական տարբերակի համար: ՈԱԱԿ-ն առաջարկում է ծրագրային հավատարմագրումը դարձնել պարտադիր: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը ներառում է ծրագրային հավատարմագրումը որպես պարտադիր պահանջ: Նոր օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից կրնդունվի մինչև 2022 թ. մարտ ամիսը:</p> <p>Մինևույն ժամանակ ՄԿԾ-ները պարբերաբար գնահատելու համար</p>

	<p>ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի երկրորդ շրջափուլի շրջանակներում խթանել է ՄՈՒՀ-երին՝ վերլուծելու բոլոր ՄԿԾ-ների տվյալները: ՈԱԱԿ-ը նաև խրախուսում է ՄՈՒՀ-երին գնահատել ՄԿԾ-ները միջազգային մասնագիտական չափորոշիչներին համապատասխան: ՈԱԱԿ-ը նաև վերամշակել է էլեկտրոնային հարցաշարը ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի համար, ներառելով ՄՈՒՀ-երի կողմից բոլոր ծրագրերի համար ներկայացվելիք քանակական տվյալները:</p>
<p>Հրապարակել ՈԱԱԿ-ի գործողությունների տարեկան ծրագիրը</p>	<p>➤ Ռազմավարական ծրագրում ՈԱԱԿ-ը սահմանել է իր առաքելությունը, նպատակներն ու խնդիրները, որոնք հիմնված են ՈԱԱԿ-ի ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունների վրա: Նպատակներից և խնդիրներից ելնելով՝ սահմանվում են գործողությունների տարեկան ծրագրեր որոշակի ժամկետներով և պատասխանատուներով, որոնք համապատասխանաբար ապահովում են ռազմավարության իրականացումը: Հաշվի առնելով ENQA-ի փորձագետների խորհրդատվությունը՝ ՈԱԱԿ-ը Գործողությունների տարեկան ծրագիրը հրապարակում է կայքում:</p>
<p>Եվրոպական Որակի Ապահովման Ռեգիստրի հանձնաժողովին (EQAR) պարզ դարձավ փորձագիտական խմբի արձագանքից, որ ՈԱԱԿ-ը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրում է խմբային վերապատրաստման հնարավորություններ, սակայն ծառայություններ չի մատուցում առանձին հաստատություններին, հետևաբար,</p>	<p>ՈԱԱԿ-ի ռազմավարական նպատակներից է էապես աջակցել ՀՀ-ում մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի բարելավմանը: ՈԱԱԿ-ը խրախուսում է ՄՈՒՀ-երին գործել ազգային և միջազգային որակի չափորոշիչներին համապատասխան և շարունակաբար բարելավել բարձրագույն կրթության որակի ապահովումը: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը խթանում է բոլոր շահակիցների</p>

<p>շահերի բախման հատուկ հավանականություն չկա:</p> <p>Եվրոպական Որակի Ապահովման Ռեգիստրի հանձնաժողովը (EQAR), սակայն, ընդգծեց՝ եթե ՈԱԱԿ-ը հետագայում խորհրդատվություն տրամադրի առանձին հաստատություններին, ապա պետք է մշակի համապատասխան քաղաքականություն, որը թույլ չի տա ՈԱԱԿ-ին հավատարմագրել նույն հաստատությունը, որին խորհրդատվական ծառայություններ է մատուցել:</p>	<p>միջև երկխոսությունը՝ կազմակերպելով սեմինարներ, կարողությունների ձևավորման վերապատրաստումներ, կլոր սեղան-քննարկումներ, խորհրդատվություններ, տարեկան և երկամյա ֆորումներ, Որակի շաբաթներ: Մինևույն ժամանակ բոլոր հաստատություններին տրամադրվում է նույն տեղեկատվությունը, ապահովվում է բոլոր շահակիցների ներգրավվածությունը ՈԱԱԿ-ի ֆորումներում/համաժողովներում/վերապատրաստումներում: Կիրառվում են հավատարմագրման նույն չափանիշներն ու չափորոշիչները, արտաքին գնահատման գործընթացը նույնն է բոլոր ՄՈՒՀ-երի համար:</p>
--	--

3.3 ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<p>Ազդեցությունից խուսափելու և որոշումների կայացման գործընթացում թափանցիկությունը մեծացնելու նպատակով փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս սահմանափակել նախարարության ներկայացուցիչների դերը՝ Հավատարմագրման հանձնաժողովի նախապատրաստական այցերում ներգրավելով նրանց որպես պասիվ դիտորդներ:</p> <p>Բացի այդ, հանձնաժողովը խորհուրդ է տալիս նախարարությանը ուղղակիորեն հաստատել Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները: Չկա ակնհայտ պատճառ, թե ինչու նախարարը պետք է կարողանա ընտրողաբար և անհատապես գնահատել ՈԱԱԿ-ի ընթացակարգերը:</p>	<p>➤ Բարելավման ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը վերանայել է ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը և Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին կարգավորումը՝ հաշվի առնելով նախարարության ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքները: Քննարկումների ընթացքում ԿԳՆ ներկայացուցիչների մասնակցությունը Հավատարմագրման հանձնաժողովի հանդիպումներին գնահատվել է որպես ոչ արդյունավետ, քանի որ Հավատարմագրման հանձնաժողովի հանդիպումների արդյունքները ցույց են տալիս, որ միայն մեկ անգամ է ԿԳՆ ներկայացուցիչը մասնակցել հավատարմագրման հանձնաժողովի նիստին՝ որպես պասիվ դիտորդ: Ուստի, համաձայն ԿԳՄՄՆ-ի հետ ձեռք բերված փոխըմբռնման, նշված</p>
---	---

	<p>փաստաթղթերում վերանայվել են համապատասխան մասերը:</p> <p>➤ Նկատի ունենալով, որ ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի որոշումների վերաբերյալ բոլոր հավաստագրերը վավերացվել են Կրթության և գիտության նախարարության կողմից՝ առանց որևէ բացառության, նախարարության ներկայացուցիչների հետ որոշվել է պետական հավատարմագրման կարգի համապատասխան մասերը լրամշակել. «ԿԳՆ-ն պարզապես վավերացնում է հավաստագրերը Հավատարմագրման հանձնաժողովի որոշման վերաբերյալ»:</p> <p>Կարգը դեռ չի հաստատվել կառավարության կողմից: Նախատեսվում է, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունումից հետո հավատարմագրման նոր կարգը կվերանայվի և կներառի հետևյալ կետը:</p>
<p>Խորհուրդների անկախությունն ու ինքնավարությունն ամրապնդելու համար փորձագիտական խումբն առաջարկում է Խորհրդի կազմում ավելացնել միջազգային ներկայացուցիչ:</p>	<p>➤ Խորհուրդների անկախությունն ամրապնդելու համար ՈԱԱԿ-ին խորհուրդ է տրվել ավելացնել միջազգային ներկայացուցիչ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ՈԱԱԿ-ի խորհուրդը կազմված է ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև Խորհրդում միջազգային անդամ ունենալու ՀՀ օրենսդրական դաշտի սահմանափակումը (Խորհրդում միջազգային անդամ ունենալը պահանջում է օրենսդրական փոփոխություն), ՈԱԱԿ-ը որոշել է ներառել խորհրդում միջազգային խորհրդական՝ ըստ անհրաժեշտության խորհրդատվություն տալու համար: Խորհրդականը խորհրդատվություն է տրամադրում՝ Տնօրենի կամ Խորհրդի դիմումով, ինչպես</p>

	<p>նան կարող է տալ խորհուրդներ՝ անկախ դիմելուց:</p>
<p>Կառավարման մարմիններում ուսանողների էական ներկայացվածությունն ապահովելու համար փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս, որ ուսանողներն առաջադրվեն միայն ուսանողների ներկայացուցչական մարմինների կողմից:</p>	<p>Գործակալության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Այսպիսով, Հոգաբարձուների խորհրդի անդամները կազմվում և հաստատվում են ՀՀ վարչապետի կողմից: Խորհրդի ներկայացուցչությունն ամրագրված է ՈԱԱԿ կանոնադրության մեջ: Փորձը ցույց է տվել, որ ՀՀ կառավարությունը խորհրդի ուսանող ներկայացուցիչ առաջադրելու համար դիմել է ուսանողների ներկայացուցչական մարմնին: Այս մոտեցումն ամրագրելու համար ՈԱԱԿ-ը խորհրդին առաջարկել է վերանայված կանոնադրություն, որտեղ համապատասխանաբար լրամշակվել է ուսանողի ներգրավման մասը. «Ուսանողին առաջադրում են ուսանողական ներկայացուցչական մարմինները»: Վերանայված կանոնադրությունը դեռ պետք է հաստատվի ՀՀ կառավարության կողմից:</p>
<p>3.4 ԹԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</p>	
<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս, որ հավատարմագրման գործընթացի համապարփակ վերլուծության զեկույցը դառնա հավատարմագրման գործընթացի պարբերական վերլուծություն գործիք:</p>	<p>Հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացի հետ կապված՝ ՈԱԱԿ-ը գործընթացի բոլոր շահակիցներից (փորձագետներ, բուհեր, համակարգողներ) հարցումների միջոցով հավաքագրում է արդյունավետության վերաբերյալ արձագանքներ: Հարցումների նպատակն է գնահատել հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը, բացահայտել գործընթացում լավագույն փորձը, թերություններն ու խոչընդոտները՝ նպաստելով</p>

	<p>կարգավորող փաստաթղթերի, մեթոդաբանության բարելավմանը, գնահատմանը, և վերլուծել հավատարմագրման ազդեցությունը ՄՈՒՀ-երի զարգացման ու բարելավման վրա: Հավաքագրված տվյալները հետագայում վերլուծվում են: Վերլուծության հիման վրա բացահայտվում են հիմնական հարցերը և խնդիրները նույն շահակիցների հետ քննարկման համար՝ հասստատելու հավաքագրված տվյալները: Հարցման և ֆոկուս խմբային քննարկման արդյունքները վերլուծվում և ներառվում են համապարփակ վերլուծության մեջ, որը հրապարկվում է ՈԱԱԿ-ի կայքում:</p>
<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ընդլայնել թեմատիկ վերլուծությունը, օրինակ՝ վերլուծություններ կատարել ըստ ուղղությունների:</p>	<p>➤ ՈԱԱԿ-ը տարբեր ոլորտներում թեմատիկ վերլուծություն է իրականացնում՝ հանդիպելով տարբեր շահակիցների հետ (ՄՈՒՀ-երի դասախոսներ, վարչական աշխատակազմ, ուսանողներ, նախարարության ներկայացուցիչներ և այլն): Հետազոտության և վերլուծության ցանկը ներկայացված է ESG 3.4 Աղյուսակ 7-ում:</p>
<p>3.5 ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</p>	
<p>Փորձագիտական խումբը ՈԱԱԿ-ին խորհուրդ է տալիս միջնաժամկետ հեռանկարով նախատեսել աշխատակազմի և բյուջեի կարիքները, սահմանել անհրաժեշտ միջոցառումներ՝ նախատեսված ռոջ գործունեությունն իրականացնելու համար:</p>	<p>➤ Բարելավման ծրագրի համաձայն՝ ՈԱԱԿ-ն սկսել է աշխատակազմի և բյուջեի կարիքների միջնաժամկետ պլանավորման գործընթաց՝ ռազմավարական նպատակներին հասնելու և իր գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: ՈԱԱԿ-ը նախատեսել է աշխատակազմի անդամների անհրաժեշտ քանակ՝ առաջիկա 2</p>

տարիների համար ծրագրած բոլոր աշխատանքներն իրականացնելու համար: Հավատարմագրման գործընթացների ավելացման տեսանկյունից ամենախնդրահարույցը համակարգողների քանակն էր, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ տարածաշրջանում (տարածաշրջանային համատեղ հավատարմագրումներ):

Համակարգողների թվի ավելացման նպատակով ՈԱԱԿ-ը որդեգրել է հետևյալ մեխանիզմը. «Ուսանողության ձայն» ծրագրի կողմից կազմակերպվող Կրթության կառավարում սովորող ուսանողների հետ պարբերական հանդիպումների արդյունքում ՈԱԱԿ-ը հրավիրում է առավել ակտիվ ուսանողներին լինելու հավատարմագրման գործընթացի մաս՝ որպես համակարգողի օգնական: Մի քանի անգամ օգնական դառնալը և ՈԱԱԿ-ի մյուս բոլոր միջոցառումներին մասնակցությունը (կիրառելով «սովորել անելով» մեթոդը) տալիս են իրենց դրական արդյունքները:

Անհրաժեշտ կադրեր հավաքագրելու մեկ այլ մեխանիզմ է ուսանողների պրակտիկայի և ավարտական թեզերի ղեկավարումը: Թեև կարող է թվալ, որ գործընթացը ժամանակատար է, սակայն ՈԱԱԿ-ը փնտրում է կայուն աշխատակազմ, որի արժեքները համընկնում են գործակալության արժեքների հետ:

➤ Ինչ վերաբերում է բյուջեին, ՈԱԱԿ-ը կարևորում է ֆինանսական անկախությունը: Այդ նպատակով մշակվել է ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման համապարփակ միջնաժամկետ ծրագիր: Այն անդրադառնում է հավատարմագրման գործընթացների ֆինանսական պլանավորմանը, ՈԱԱԿ-ի

	<p>ներկայացուցիչների կողմից անցկացվող վերապատրաստումներին, միջազգային նախագծերին մասնակցությանը և այլն:</p> <ul style="list-style-type: none"> ➤ ՈԱԱԿ-ը բուհերի և ՄԿՈԻ հաստատությունների յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացից ունի պահուստային ֆոնդի կայուն աճ: Տոնդը հիմնականում օգտագործվում է ՈԱԱԿ-ի աշխատակազմի, ինչպես նաև քաղիրավական պայմանագրի շրջանակներում վարձու աշխատակիցների կողմից իրականացվող անհրաժեշտ աշխատանքների համար:
<p>Անհրաժեշտ է, որ Հոգաբարձուների խորհուրդը նախատեսի նոր աշխատակազմ և ավելի շատ բյուջե՝ զբաղվելու նոր գործունեությամբ, որը չի ֆինանսավորվում, կամ կանխատեսելով եվրոպական նախագծերի հնարավոր նվազում: Պետք է հաշվի առնել, որ բյուջեի մի մասը կախված է բուհերից, որոնք նույնպես ֆինանսավորման խնդիրներ ունեն, այդ իսկ պատճառով հավանական է՝ չկարողանան դիմակայել ծրագրերային հավատարմագրման դրույքաչափերին:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ ՈԱԱԿ-ի խորհրդի նախագահին ներկայացվել են նոր կազմի և ֆինանսական պլանավորման հետ կապված հարցերը: Որոշվել է աշխատել ըստ բաժինների նախագծերի և իրականացնել կադրերի և ֆինանսների պլանավորում երկու տարի տևողությամբ: ➤ Պետական ֆինանսավորումը ներկայումս գործակալության ֆինանսավորման ամենակայուն աղբյուրն է: Ֆինանսների մեկ այլ կայուն աղբյուր է հավատարմագրումը: ՈԱԱԿ-ը յուրաքանչյուր գործընթացից ֆիքսված գումար է խնայում իր պահուստային ֆոնդի համար: ➤ Ինչ վերաբերում է ծրագրային հավատարմագրման դրույքաչափերին, ՈԱԱԿ-ը ձեռնարկում է մի քանի քայլեր՝ ՄՈԻՀ-երի ֆինանսական բեռը թեթևացնելու համար: Կարևոր է նաև նշել, որ ՈԱԱԿ-ը մի քանի հանդիպումներ է կազմակերպել ԿԳՄՄՆ ներկայացուցիչների և բուհերի ղեկավարության հետ՝

	<p>քննարկելու ծրագրային հավատարմագրումների ֆինանսավորման հնարավոր ուղիները: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքով բուհերին հնարավորություն կընձեռվի ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլում սեփական միջոցներով իրականացնել ծրագրային հավատարմագրում:</p>
--	--

3.6 ՈՐԱՄԿ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս պարբերաբար վերանայել ներքին և արտաքին ընթացակարգերը, օրինակ՝ կատարել ներքին աուդիտ:</p>	<p>➤ ՈԱՄԿ-ը նպաստում է աշխատանքային միջավայրի շարունակական բարելավմանը գործակալության ներքին գործունեության պարբերական գնահատումների և վերլուծության միջոցով: Որակի բոլոր տիրույթները ներառումը են որակի ապահովման շրջափուլի իրականացումը, ինչպես սահմանված է պրոտոկոլներում՝ յուրաքանչյուր որակի տիրույթի պրոտոկոլում սահմանված թիրախների արդյունավետ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվություններ պատրաստելու միջոցով: Միջնաժամկետ արդյունքները քննարկվում են ՈԱՄԿ-ի աշխատակիցների շրջանում՝ պրոտոկոլների պատասխանատուների կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումների միջոցով: ՈԱՄԿ-ում առկա է մշակույթ՝ որպես սովորող կազմակերպություն բոլոր հնարավոր հարցերի շուրջ աշխատակազմի հետ</p>
--	--

	<p>պարբերական և բաց քննարկումներ անցկացնելու:</p> <ul style="list-style-type: none"> ➤ Արտաքին ընթացակարգերի գնահատման համար ՈԱԱԿ-ը պարբերաբար վերլուծում է գործընթացների արդյունավետության վերաբերյալ շահակիցների (ՄՈՒՀ-եր, փորձագետներ) արձագանքները և հանդիպումներ է անցկացնում շահակիցների հետ: Որակի տիրույթների տարեկան հաշվետվությունների և գործակալության արտաքին գործունեության արդյունավետության վերլուծության հիման վրա ըստ անհրաժեշտության կատարվում են համապատասխան բարելավումներ: Ընթացիկ տարվա համար նշված թեման տեղացի փորձագետների ընտրության առավել արդյունավետ գործընթաց է: ➤ Գործակալության տարեկան հաշվետվությունը պատրաստվում և ներկայացվում է տնօրենին, Հոգաբարձուների խորհրդին:
<p>Փորձագիտական խումբը կցանկանա խորհուրդ տալ կրճատել կատարված հարցումների թիվը կամ ժամանակի մեջ տեղավորել՝ համակարգը հարցումների ավելցուկով չհագեցնելու համար:</p>	<p>Բարելավման ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը վերլուծել է հարցումների արդյունավետությունը: ՈԱԱԿ-ի աշխատակիցների, ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների և փորձագետների շրջանում քննարկվել են մեխանիզմները, ֆոկուս խմբերը և ներքին ու արտաքին գործունեության գնահատման հաճախականությունը: Ֆոկուս խմբային հանդիպումների արդյունքում պարզվել է, որ ներքին և արտաքին հարցումների հաճախականությունն ու քանակն ընդհանուր առմամբ արդյունավետ են, նպատակային և գործընթացի վրա</p>

	<p>հիմնված: Միակ փոփոխությունը կիրառվել է փորձագիտական այցերի ժամանակ յուրաքանչյուր հանդիպումից հետո մասնակիցներին տրվող հարցաշարում: Փորձագիտական այցերի յուրաքանչյուր օրվա ավարտին որոշվել է համակարգողների կողմից լրացված հարցաշարի որակական վերլուծություն կատարել (քանակականի փոխարեն), քանի որ համակարգողները հարցաշարը գնահատել են որպես փորձագետների հետ շփման լավ գործիք փակ խմբային հանդիպումների ընթացքում: Հարցաշարն օգնում է համակարգողներին կանխելու այցերի ընթացքում հնարավոր ցանկացած թերացում: Քննարկվել է բաց հարցեր ավելացնելու տարբերակը, որպեսզի հարցաշարն ավելի արդյունավետ և օգտակար լինի համակարգողների համար: Կրճատվել է նաև ներքին հարցումների թիվը և ներդրվել է յուրաքանչյուր ուղղության SWOT վերլուծությունը:</p>
<p>Խումբը նաև խորհուրդ է տալիս կայքում ստեղծել բաժին՝ որակի արտաքին ապահովման գործընթացների հետ ուղղակիորեն կապ չունեցող ուսանողների, դասախոսների կամ հասարակության առաջարկները, խորհրդատվությունները հավաքագրելու համար:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ ՈԱԱԿ-ն ակտիվացրել է իր կայքի բլոգը որտեղ ոլորտի բոլոր շահակիցները և/կամ փորձագետները կարող են բարձրաձայնել թեմաներ և քննարկել դրանք շահագրգիռ կողմերի հետ: ➤ ՈԱԱԿ-ը նաև փոխել է կայքի «Հետադարձ կապ» բաժինը, որը շահակիցների համար դարձել է խորհրդատվություն, ուղղորդում ստանալու, ինչպես նաև գործակալության գործունեության վերաբերյալ արձագանքներ/ առաջարկներ տրամադրելու ևս մեկ հնարավորություն: Այս ալիքով

	<p>ՈԱԱԿ-ը ստացել է ավելի քան 80 դիմում տարբեր հարցերի վերաբերյալ:</p> <p>➤ Շահակիցների համար մեկ այլ հնարավորություն է 2017 թ. սկզբին ստեղծված “Որակի աջակից” ցանցը, որտեղ տարբեր շահակիցներ ակտիվ քննարկում են որակի ապահովմանը և հավատարմագրմանն առնչվող տարբեր հարցեր, կիսվում են իրենց փորձառությանը և լավ փորձով: Խմբում ընդգրկված անդամների թիվը գերազանցում է 300-ը, որոնց թվում են բուհերի և ՄԿՈԻ ոլորտների ներկայացուցիչներ, փորձագետներ, ուսանողներ, ՈԱԱԿ-ի աշխատակիցներ:</p>
--	---

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՐՈՂԱԿԱՆ ՉՍՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻՆ (ՄԱՍ 2)

2.2 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս նույն մոտեցումը կիրառել ինստիտուցիոնալ հավատարմագրման հետագա շրջափուլի համար:</p>	<p>➤ ՈԱԱԿ-ը մեկնարկել է հավատարմագրման գործընթացների երկրորդ շրջափուլը՝ պահպանելով արդեն իսկ ընդունված որակի արտաքին ապահովման համակարգի հիմնական տարրերը: Ինստիտուցիոնալ հավատարմագրման այս փուլում բոլոր ՄԿԾ-ները դիտարկվում են փորձագիտական խմբի կողմից: ՈԱԱԿ-ը շարունակում է ամրապնդել հաղորդակցական կապերն իր շահակիցների հետ: Մասնավորապես՝ ՈԱԱԿ-ն սկսել է ամուր համագործակցություն</p>
---	---

	<p>երիտասարդ դասախոսների և հետազոտողների հետ՝ պարբերաբար հանդիպելով նրանց հետ: Հանդիպումների նպատակն է ներգրավել երիտասարդ դասախոսներին և հետազոտողներին որակի ապահովման գործընթացների քաղաքականության մշակման մեջ:</p>
--	---

2.3 ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս բարելավման ծրագրերը ներդնելուց անմիջապես հետո բարելավել դրանց գործընթացները: Այն ասպեկտները, որոնք պետք է հաշվի առնվեն, հետևյալն են.</p> <ul style="list-style-type: none"> • գոհացնող է, որ բուհերը ներկայացնեն բարելավման պլանը և գործողությունների ծրագիրը, որպեսզի որոշումը կայացնելուց հետո իրականացվի մշտադիտարկում: Սակայն խումբը մտահոգություն ուներ ժամանակացույցի վերաբերյալ: Բարելավման հաշվետվությունների կայացման վեցամսյա ժամկետը չափազանց կարճ է և պետք է վերանայվի: • Ուսումնական հաստատությունների բարելավման պլանի արդյունավետության գնահատումը, որը գնահատվել է դրական, պետք է իրականացվի արտաքինից այդ թվում՝ հաստատության արտաքին փորձագետների մասնակցությամբ, որպեսզի դիտարկվեն հաստատությունների կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքները: 	<p>➤ Որպես բարելավման ծրագրի մի մաս՝ ՈԱԱԿ-ն սկսել է հետևողականորեն բարեփոխել ծրագրի ընթացակարգը: Գրավոր արձագանք է հավաքվել շահակիցներից (ՄՈՒՀ-եր, փորձագետներ, ՈԱԱԿ-ի աշխատակիցներ)՝ հասկանալու, թե ինչպես հետագայում բարելավել ընթացակարգը: Վերլուծելով արձագանքները՝ շահակիցների հետ կազմակերպվել են տարբեր քննարկումներ: Ե՛վ ՄՈՒՀ-երը, և՛ փորձագետները առաջարկություններ են ներկայացրել բարելավման ծրագրի ձևաչափի բարելավման վերաբերյալ: Նրանց առաջարկները հաշվի են առնվել, քննարկվել են, և ձևաչափը համապատասխանաբար լրամշակվել է: Նոր ձևաչափն ընդգծում է վերջնարդյունքահեն մոտեցումը:</p> <p>➤ Շահակիցների հետ քննարկվել են նաև բարելավման հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցի և հետագա մշտադիտարկումների անցկացման մեթոդաբանության հետ կապված հարցերը: Ժամանակացույցին համապատասխան փոփոխություններն ամրագրված են Պետական հավատարմագրման նոր կարգի նախնական տարբերակում: Ինչ վերաբերում է պարբերական մշտադիտարկման անցկացման</p>
---	--

	<p>մեթոդաբանությանը, ՈԱԱԿ-ը մշակել է մշտադիտարկման կարգավորում, որտեղ նշված է, որ մշտադիտարկման խմբերում ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների հետ միասին ըստ անհրաժեշտության ներգրավվում են արտաքին փորձագետներ:</p>
--	--

2.4 ԳՈՐԾՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս հնարավորությունների սահմանում ավելացնել և/կամ պահպանել միջազգային փորձագետների թիվը: Այս փաստը շահավետ կլինի՝ հատկապես հաշվի առնելով գործակալության միջազգայնացման ապագա ծրագրերը:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Համաձայն ՈԱԱԿ-ի կարգավորումների՝ յուրաքանչյուր փորձագիտական խումբ պարտադիր ներգրավված են մեկ-երկու միջազգային փորձագետ: Ներկայումս ՈԱԱԿ-ը ձգտում է ընդլայնել միջազգային փորձագետների ներգրավվածությունը հավատարմագրման գործընթացներում՝ հաշվի առնելով աշխարհագրական ներկայացվածությունը՝ յուրաքանչյուր գործընթացում մոտեցումների նոր ալիքի ներդրումն ապահովելու համար: Հաշվի առնելով, որ այս մոտեցումը կարող է ֆինանսական բեռ լինել հավատարմագրված հաստատությունների համար՝ ՈԱԱԿ-ը ջանքեր է գործադրում համագործակցությունն ակտիվացնելու և տարածաշրջանից փորձագետների ներգրավելու ուղղությամբ: Դա կնվազեցնի ծախսերը և տարածաշրջանային համատեքստը կրերի գործընթացներին: ➤ Միջազգային փորձագետներն ընտրվում են ՈԱԱԿ-ի միջազգային փորձագիտական բազայից,
--	--

	<p>միջազգային հեղինակավոր հավատարմագրման (որակի ապահովման) գործակալության փորձագիտական բազայից, միջազգային ցանցերից/ասոցիացիաներից (EURASHE, INQAAHE, ECA և այլն) և ԵՄ-ից և տարածաշրջանային ծրագրի գործընկեր կառույցներից:</p> <p>➤ Միջազգային փորձագետների թիվը մեծացնելու նպատակով միջազգային դիմում է ուղարկվել տարբեր միջազգային կազմակերպություններին և գործակալություններին՝ փորձագետներ առաջարկելու և իրենց փորձագիտական բազայի մասին տեղեկատվությունը տարածելու համար: ՈԱԱԿ-ի աշխատակիցները անհրաժեշտ ուղղորդում և աջակցություն են ցուցաբերել շահագրգիռ թեկնածուներին բազայում գրանցվելու համար:</p>
--	--

2.5 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս բարելավել ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը՝ ավելի պարզեցնելով, թե ինչ ասպեկտներ, ցուցիչներ կամ փաստեր են պահանջվում յուրաքանչյուր չափանիշի համար:</p>	<p>➤ Ինքնավերլուծության ձևաչափը ներառում է բացատրություններ յուրաքանչյուր չափանիշի և չափորոշիչ վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր չափորոշիչի համար պահանջվող համապատասխան պահանջները և փաստերը: Փաստաթուղթը հասանելի է ՈԱԱԿ-ի կայքում:</p>
<p>Փորձագիտական խումբը նույն կերպ խորհուրդ է տալիս հրապարակել Հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման քաղաքականությունը՝ հավատարմագրման որոշումները տարբերակելու համար:</p>	<p>➤ Բարելավման ծրագրի համաձայն ՈԱԱԿ-ը մի քանի հանդիպումներ է անցկացրել Հավատարմագրման հանձնաժողովի հետ և քննարկել չափանիշները որոշումների կայացման համար: Քննարկումներից հետո ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովի հետ համատեղ բարելավել է որոշումների կայացման չափանիշները՝ հաշվի առնելով</p>

	<p>ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը ՄՈՒՀ-երի ընթացակարգերում: Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ընդունվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությունը:</p>
<p>2.6 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ</p>	
<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս միջտ օգտագործել նույն բառապաշարը (դրական/բացասական կամ բավարար/անբավարար կամ այո/ոչ) յուրաքանչյուր չափանիշը որակելու համար, եթե նույնիսկ արդյունքը պարզ է, և որևէ շփոթություն չի առաջացրել:</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Հաշվի առնելով ENQA-ի փորձագետների խորհրդատվությունը և ձեռք բերված փորձը՝ ՈԱԱԿ-ը վերանայել է. <ul style="list-style-type: none"> • փորձագիտական գեկոյցների պատրաստման ձևաչափը, • ծանոթացնող փաթեթը թարգմանիչների համար օգտագործվող հիմնական տերմիններով, ➤ Նաև մշակվել և համաձայնեցվել է գործիք (պատասխանատու մարդկանցով և ժամկետներով)՝ փորձագիտական գեկոյցների մշտադիտարկման համար:
<p>Փորձնական ծրագրային հավատարմագրման հաշվետվությունները ՈԱԱԿ-ի կայքում չեն հրապարակվել:</p>	<p>Համաձայն ՀՀ-ում հաստատությունների և դրանց մասնագիտությունների մասնագիտական կրթական ծրագրերի կարգի, ինչպես նաև ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկի՝ հաշվետվությունները հրապարակային են դառնում Հավատարմագրման հանձնաժողովի որոշումից անմիջապես հետո: ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող փորձնական ծրագրային հավատարմագրումները որևէ պաշտոնական արդյունք չեն ունենում, այդ իսկ պատճառով հաշվետվությունները չեն հրապարակվում ՈԱԱԿ-ի կայքում:</p>
<p>2.7 ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ</p>	
<p>Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ՈԱԱԿ-ին վերանայել</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Շահակիցներից ստացված արձագանքների վերլուծության

բողոքարկման գործընթացը՝ հաշվի առնելով նշված ասպեկտները, բողոքարկման ընթացակարգի և երկրորդ հնարավորության ընթացակարգի միջև որևէ շփոթությունից խուսափելու համար: Խումբը խորհուրդ է տալիս՝ եթե բողոքարկումը գնահատվում է նոր հանձնաժողովի կողմից, ՈԱԱԿ-ը պետք է մտածի ուսանող ընդգրկելու մասին:

համաձայն՝ հավատարմագրման առաջին շրջափուլի համար ՈԱԱԿ-ի կողմից կիրառված բողոքարկման ընթացակարգը ընդունելի է շահակիցների համար: Հավատարմագրման հանձնաժողովի, Հոգաբարձուների խորհրդի և ներքին շահակիցների հետ համագործակցությամբ ՈԱԱԿ-ը վերանայել է բողոքարկման ընթացակարգը: Նոր կարգը ներառված է ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգում (նոր խմբագրությամբ): Ընթացակարգն ընդունվել է ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից:

9. ՈԱԱԿ—Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուժեղ կողմեր

- Անկախություն՝ զարգացման և որոշումների կայացման մեջ
- Մասնակցություն ոլորտի իրավական զարգացումներին
- ՈՒԱ գործունեության արդյունքների ճանաչում հիմնական շահակիցների կողմից
- Չորհակալության միջազգայնացում
- Անդամակցություն ENQA-ին և գրանցում EQAR-ում
- Փորձագիտական զեկույցների հասանելիությունը DEQAR-ի տվյալների բազայում
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի մեկնարկը՝ որպես բուհերի վստահության ապացույց
- ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման մեկնարկը
- Պարտադիր ծրագրային հավատարմագրման ներդրում
- Պատշաճ կազմակերպված երկլեզու հավատարմագրման գործընթացներ
- Բարեփոխումները խթանող հիմնված թեմատիկ վերլուծություններ, որոնք ապահովում են օբյեկտիվ տվյալներ ՄՈւՋ-երի բարելավման համար
- «Ուսանողության ծայն» նախագծի ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման արտաքին և ներքին գործընթացներին
- Փորձագետների վերապատրաստումներ իրականացնելու կարողություն
- Չորհակալության որակի ներքին ապահովման կայացած համակարգ
- Միջազգանորեն ընդունված մոտեցումներով վերապատրաստված աշխատակազմ
- Ֆինանսական կայունություն (աղբյուրների դիվերսիֆիկացում)

Հնարավորություններ

- Մասնակցություն միջազգային նախագծերին
- ՈԱԱԿ-ի աշխատակազմի շարժունություն եվրոպական գործակալություններ փորձի փոխանակման նպատակով
- Համալսարանի աշխատակազմի ներգրավվածությունը ՈԱԱԿ-ի զարգացումներին
- ՀՀ կառավարության կողմից ոլորտային հանձնաժողովների զարգացման խթանում
- Հայկական համատեքստը պատկերացնող օտարերկրյա փորձագետների ներգրավում հավատարմագրման գործընթացներում

Թույլ կողմեր

- Աշխատակազմի գենդերային անհավասարակշռություն
- Աշխատակազմի պահպանման խնդիրներ
- Փոքր բյուջե (մասնավորապես զարգացման համար)
- Փոքր աշխատակազմ և աշխատակազմի փոխարինման վտանգ՝ կապված COVID-19 իրավիճակի հետ
- Ծրագրային հավատարմագրման քիչ փորձ
- Քիչ թվով փորձագետներ, ովքեր հավատարմագրման մեծ փորձ ունեն որոշակի ոլորտում
- Փոքր թվով փորձագետներ, ովքեր մասնակցում են միջազգային հավատարմագրման գործընթացներին

Վտանգներ

- Հայաստանում ուսանողների թվի նվազում և միգրացիա
- Կրթության կառավարման ՄԿԾ-ների պահանջարկի նվազում Հայաստանի բուհերում
- Երկրում մասնագիտական միությունների պակաս
- Բուհերում միջազգային շարժունության պակաս
- Միջազգային տեսանկյունից գնահատելու կարողություն ունեցող տեղացի փորձագետներ գտնելու դժվարություններ
- ՀՀ կառավարության և հասարակության ակնկալիքները բարձրագույն կրթության որակի ավելի արագ զարգացում
- 2001թ. -ի հավատարմագրման առկայություն մասնավոր բուհերի մեծ մասում, որոնք չեն դիմում նոր հավատարմագրման համար
- ՀՀ-ում հավատարմագրման և լիցենզավորման կարգավորումների ոչ հստակ կապը

10. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱՆՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը, որն իր հետ բերում է նոր բարեփոխումներ: ՈԱԱԿ-ի առաջարկով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը նախատեսում է պարտադիր ծրագրային հավատարմագրում՝ բուհերի կրթական ծրագրերի ինքնագնահատման և արդյունքները ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելու հնարավորությամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման մեխանիզմի միջոցով հիմք է ստեղծվել ՄԿԾ-ների գնահատման և վերանայման համար: Բացի այդ, զարգանում են փորձագետների և բուհերի աշխատակազմի կարողությունները, առկա են փաստաթղթերն ու կարգավորող դաշտը: Այնուամենայնիվ, ծրագրային հավատարմագրման զանգվածային մեկնարկը մարտահրավեր է:

Այդ իսկ պատճառով ՈԱԱԿ-ը իրականացրել է միջազգային փորձի ուսումնասիրություն և պատրաստել է Հավատարմագրման կարգի նոր նախագիծ: Նախատեսվում է շարունակել նախագծի քննարկումը շահակիցների ավելի լայն զանգվածի հետ, ներառյալ՝ կառավարության, ԿԳՄՄՆ ներկայացուցիչների հետ:

ՈԱԱԿ-ի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիրը ցույց է տալիս գործակալության հետագա զարգացման ուղղությունները:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում ՈԱԱԿ-ի գործունեությունը ծավալվելու է հետևյալի շուրջ.

- Շարունակական բարելավման մշակույթ. ուսուցման որակի բարելավման ուղղությամբ աշխատանքների մեծացում որպես ՈԱԱԿ գործունեության շարժիչ ուժ:
- Զարգացում. փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում, որպեսզի փորձագետներն առաջնորդեն բարեփոխումները մասնագիտական ուսումնական հաստատություններում:
- Հաղորդակցություն շահակիցների հետ. ՈԱԱԿ-ը կաշխատի իր շահակիցների, ներառյալ հանրության, ուսանողների և գործատուների հետ՝ նրանց տեղեկատվություն տրամադրելու և խրախուսելու աջակցել համալսարանի որակի ապահովման գործունեությանը:
- Տարածաշրջանային և միջազգային գործունեություն. ՈԱԱԿ-ը կշարունակի ջանքեր գործադրել որակի ապահովման միջազգային և տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ:
- Կազմակերպական գործառույթ. ՈԱԱԿ-ը կշարունակի որակի ներքին ապահովման գործառույթների զարգացումը, իր կազմակերպական կառուցվածքի վերանայումը և իր գործունեության տարբեր նպատակների համար լրացուցիչ ռեսուրսներ փնտրելը:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հավատարմագրում	Գործընթաց, որով (ոչ-)պետական կամ մասնավոր կազմակերպությունը գնահատում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կոնկրետ կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախասահմանված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրա համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով: Այս գործընթացի արդյունքում ուսումնական հաստատությանը տրվում է ճանաչման կարգավիճակ (հավատարմագրված/ չհավատարմագրված), երբեմն էլ գործունեությունը թույլատրող լիցենզիա՝ սահմանափակ վավերականության ժամկետով:
Բենչմարք	Չափորոշիչ, հղման կետ կամ չափանիշ, որի նկատմամբ կարող է չափվել, կշռադատվել և գնահատվել որևէ օբյեկտի որակը կամ սահմանված գործողության արդյունքները: «Մակարդակի նիշ/բենչմարք» եզրույթը նշանակում է լավագույն փորձի մակարդակի չափման միջոց: Մակարդակի նիշի գոյությունը բենչմարքինգի ողջ գործընթացի անհրաժեշտ մի բաղադրիչ է:
Թերությունների վերացման ծրագիր	Թերությունների վերացման ծրագիրը մշակվում է համաձայն փորձագիտական խմբի առանձին խորհրդատվությունների, հաստատության կողմից զեկույցում բացահայտված հիմնական խնդիրների: Այն պետք է հստակ մատնանշի ոչ միայն հաստատության կողմից իրենց ոլորտում ակնկալվող ձեռքբերումները, այլև ակնկալվող միջնաժամկետ արդյունքներն ըստ ժամանակացույցի:
Ինստիտուցիոնալ հավատարմագրում	Ընդհանուր ուսումնական հաստատության հավատարմագրում, որը ներառում է հաստատության բոլոր բաժինները, ծրագրերը և մատուցման մեթոդները՝ առանց որևէ հետևանքի ուսումնական հաստատության կրթական ծրագրերի որակի համար:
Մշտադիտարկում	Մշտադիտարկումը տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և օգտագործման համակարգված գործընթաց է՝ ուղղված ՄՈՒՀ-երում որակի ապահովման շարունակական բարելավմանը:

Ծրագրային հավատարմագրում	Ծրագրային հավատարմագրումը մասնագիտական կրթական ծրագրերի ճանաչումն է և որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին: Ծրագրային հավատարմագրումն ուղղված է առանձին մասնագիտական կրթական ծրագրերին: Սա թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել, թե արդյոք այն հիմնովին ապահովում է նախատեսած կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:
Որակի ապահովում	Ընդգրկուն տերմին, որը վերաբերում է բարձրագույն կրթության համակարգի, հաստատությունների կամ ծրագրերի որակի գնահատման (ստուգում, մշտադիտարկում, երաշխավորում, պահպանում և բարելավում) շարունակական գործընթացին: Որպես կանոնակարգման մեխանիզմ՝ որակի ապահովումը միաժամանակ կենտրոնանում է հաշվետվողականության և բարելավման վրա՝ համաձայնեցված և հետևողական գործընթացի ու հստակ սահմանված չափանիշների միջոցով տրամադրելով տեղեկատվություն և կարծիք (առանց դասակարգման):
Ինքնավերլուծություն	Ինքնավերլուծությունը վերլուծության մի ձև է, որն օգնում է ՄՈՒՀ-ին բացահայտել իր գործունեության մեջ առկա ուժեղ կողմերը և զարգացման ենթակա ոլորտները:
Փորձագիտական այց	Արտաքին գնահատման բաղադրիչ, որը սովորաբար հավատարագրման գործընթացի մի մասն է: Փորձագիտական այցի նախաձեռնողը կարող է լինել հենց ուսումնական հաստատությունը: Այն կազմված է հետևյալ քայլերից. արտաքին փորձագետների խումբը այցելում է բարձրագույն ուսումնական հաստատություն՝ հաստատության կողմից տրամադրված ինքնավերլուծությունն ուսումնասիրելու և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի, ուսանողների և այլ շահակիցների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով, որպեսզի գնահատի որակն ու արդյունավետությունը (և բարելավման համար խորհրդատվություն տրամադրի):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. [ՈԱԱԿ կանոնադրություն](#)
2. [ՈԱԱԿ 2016-2020 թթ. ռազմավարական ծրագիր](#)
3. [ՈԱԱԿ 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր](#)
4. [ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ \(2015\)](#)
5. [Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ](#)
6. [ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ \(վերանայվել է 2021 թ., հայերեն սևագիր տարբերակ\)](#)
7. [Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգ](#)
8. [ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականություն](#)
9. [ՈԱԱԿ-ի ՄՈԻՀ-երի և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականություն և ընթացակարգ](#)
10. [ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)